ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



1988 թվականի փետրվարին սկսվեց
Արցախյան ազատագրական պայքարը

Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**74**-րդ տարի) **Թիվ-2** (1636) — *փետրվար 2020*

Բովանդակություն

Լուսանկարը՝ Օլեգ Կլիմովի

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող
Արդարադատությունը գլխիվայր(էջ 1-2)

2- Հարցազրույց
Իշխան Սաղաթելյանի հետ*(էջ 3-4)*
Գալիք հանրաքվեն հակաօրինական է

3- Հայ դատ
ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհուրդ *(էջ 5)*
Ավարտվեց Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների հնգօրյա համաժողովը

Շահան Գանտահարեան *(էջ 6-7)*
Հայ դատի գերակայ ուղղութիւնները

4- Ներքաղաքական
Վ.Հ. *(էջ 8-11)*
Քաղաքական զարգացումները Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասի պետությունները

5- Քաղաքատնտեսական
Արա Նռանյան *(էջ 12-15)*
Ինչպե՞ս աշխատել ԵԱՏՄ-ի հետ

6- Դաշնակցական բեմ
Աւօ Գաթրճեան *(էջ 16-17)*
«Դրօշակ»-ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր

7- Հայրենի եզերք
Վահրամ Բալայան *(էջ 18-23)*
ՀՅ Դաշնակցության դերը Արցախի պետականության վերակերտման գործում (1890-2020 թթ.)

Վրեժ Նահատակյան *(էջ 24-26)*
Ջավախքի հիմնահարցերը (մաս 2-րդ)

Տիրան Լոքմակյոզյան *(էջ 27-28)*
Դերսիմն ու դերսիմահայերն այսօր

8- Տարածաշրջանային
Ալեքսանդր Մանասյան *(էջ 29-31)*
Սումգայիթ, Բաքու, Աղդամ (երեք հանցագործությունները՝ նույն ձեռագրով)

9- Աշխարհաքաղաքական
Սեդօ Պոյաճեան *(էջ 32-35)*
Հայաստանի դռանցքը եւ ԱՄՆ-ի ռազմավարական կարճատեսութիւնը

10- Հայ կյանք
Արթուր Շահնազարյան *(էջ 36-38)*
Ե՞րբ է մեր ժողովուրդն ազատագրվելու արևելյան կլկլոցից

11- Սփյուռք
Մկրտիչ Մկրտիչեան *(էջ 39-40)*
Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (Ժամանակակից շրջան, մաս 2)

12- Երիտասարդական
Քրիստինե Վարդանյան *(էջ 41-42)*
Ինչո՞ւ են հաջողում պետությունները

13- Պատմության լուսարձակ
Խաչատուր Ստեփանյան *(էջ 43-44)*
Փետրվարյան ապստամբության դասերը

Արդարադատությունը գլխիվայր

Պետության ղեկավարումը ստանձնելուց ի վեր նոր իշխանությունները ոչինչ այնպիսի ջանադրությամբ չեն անում, ինչպես, քրեական հետապնդումները, մասնավորապես՝ իշխանության նախկին ներկայացուցիչների նկատմամբ՝ սկսած երկու նախագահներից ու նախարարներից մինչև ցածրաստիճան պաշտոնյաները: Որքան էլ զարմանալի թվա, իշխանության ներկայացուցիչները տարբեր առիթներով հայտարարել են, որ այս կամ այն քրեական գործընթացն ունի քաղաքական դրդապատճառներ: Այդպիսի գնահատականներ հնչել են նույնիսկ երկրի բարձրագույն՝ Սահմանադրական դատարանի շուրջ ծավալվող իրադարձությունների վերաբերյալ, որի անցանկալի անդամներից ազատվելու համար իշխանությունն անգամ համաժողովրդական հանրաքվե է նախաձեռնում: Ակնառու իրողություն է, որ հարուցվող քրեական գործերն ու հետապնդումներն ի սկզբանե դարձել են յուրատեսակ գործիք իշխանության ձեռքին, որի միջոցով փորձ է արվում սահմանափակելու և կանխելու անցանկալիների քաղաքական գործունեությունը, մարդկանց ենթարկելու շանտաժի, պարտադրելու պետական ու մասնավոր գանձարկղեր մուծել որոշակի գումարներ: Այս ճանապարհով ներշնչվում է հանրությանը, որ յուրաքանչյուր ոք ընդդիմադիր գործունեության համար մի օր կարող է հայտնվել իրավապահ համակարգի ուշադրության առանցքում: Պատահականություն չէ, որ մի շարք դեպքերում իշխանության գործողությունները առկա և հնարավոր օրինազանցությունների դեպքում չափազանցված ու անհամարժեք են: Պատահականություն չեն երկրում քիչ թե շատ հայտնի անձանց՝ թեկուզ կարճ ժամանակով ձերբակալությունները, հատուկջոկատայինների մասնակցությամբ կոշտ ուժի կիրառման, ձեռքեր ոլորելու, ասֆալտին պառկեցնելու տեսարանները: Ընդ որում, հասարակական հնչեղություն ունեցող գրեթե բոլոր դեպքերում նախապես մանրամասնորեն ներկայացվում են ենթակայի կատարած «հանցանքները»: Այսինքն՝ աղաղակող կերպով ոտնահարվում

է արդարադատության այն երկաթյա կանոնը, ըստ որի՝ յուրաքանչյուր անձ անմեղ է, քանի դեռ վերջնական վճռով դատարանը չի ապացուցել վերջինիս մեղավորությունը: Եվ կարծես ոչ ոքի չի հուզում տվյալ անձի արժանապատվությունը, ապրումներն ու կրած դժվարությունները, անձնական կյանքում տեղի ունեցած կտրուկ փոփոխությունների հետևանքները, նրա ընտանիքի հոգեկան ալեկոծումները և այլն: Արձանագրենք, որ մի շարք դեպքերում լուրջ մեղադրանքների հիման վրա իրականացված համապատասխան իրավական գործընթացներից հետո տվյալ

գործերը կարճվել են, այլ դեպքերում դրանց վերջը չի երևում, թեև ի սկզբանե ներկայացվել էին շատ հստակ մեղադրանքներ: Այլ պարագաներում գնալով ակնհայտ է դառնում, որ իշխանությունները «խաղում են ժամանակի վրա»՝ որքան հնարավոր է երկար ժամանակ մարդկանց պահելով փակի տակ և սահմանափակելով նրանց ակտիվ գործունեության հնարավորությունը: Ակնհայտ է նաև այն իրողությունը, որ, ըստ էության, իշխանությունները որդեգրել են ներքաղաքական խնդիրներն իրավական մահակով լուծելու գործելակերպը:

Ընդ որում, ժողովրդական բնույթ ստացած շարժման օրերից նույն ուժը մշտապես ոտնահարել է օրենքը: Պատահական չէ, որ երկրի վարչապետի ղեկավարությամբ իշխող ուժի ոտնձգությունների ու կամայականությունների թիրախում բազմիցս հայտնվել է դատական համակարգը, երբ չի ենթարկվել իշխանության հլու կամակատարը լինելու պահանջին: Նույն տրամաբանությամբ և տարբեր պատճառաբանություններով դատավորներ են հեռացվում ընթացող դատավարություններից, նույն տրամաբանությամբ ցանկալիներով փոխարինվեց Բարձրագույն դատական խորհրդի նման կարևոր ինստիտուտը, և այդ նույն տրամաբանությամբ դատական համակարգի գլխին կախված է մնում, այսպես կոչված, Վեթինգի (անհատական վարքի ու գործունեության քննության) սուրը, չհաշված այն, թե քանի անգամ է վարչապետ Փաշինյանը ամենակոշտ որակումներով ու սպառնալիքներով արտահայտվել դատավորների հասցեին:

Ամեն քայլափոխի քամահրելով օրենքի շրջանակում գործելու պարտականությունը՝ իշխանությունը, խորհրդարանի մակարդակով, նախ որոշեց ժամանակից շուտ թոշակի ուղարկել իր կամքին անհնազանդ Սահմանադրական դատարանին, իսկ երբ վերջինիս բոլոր անդամները հրաժարվեցին կոռուպցիոն գործարքի դիմելուց, որոշեց նրանց հեռացնել համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Ընդ որում, Սահմանադրական դատարանի նկատմամբ այս հավակնությունը ևս բավարարվեց խորհրդարանի հակասահմանադրական որոշմամբ: Ղեկավարող ուժի ներկայացուցիչներից մեկը, փորձելով արդարացնել անօրինական վճիռը, հեռուստատեսային հարցազրույցի ժամանակ պատճառաբանեց, թե ժողովրդի կամքն օրենքից վեր է: Եթե ասվածը թարգմանենք պարզ մեկնաբանությամբ, հավանաբար այն այսպես կհնչի. «Մենք ոչ մեկ անգամ ոտնահարել ենք օրենքը, և մեր գործողությունների արդարացում է համարվել ժողովրդական պահանջի պատճառաբանությունը, ուրեմն ինչու՞ չի կարելի նույն բանն անել ևս մեկ անգամ»:

Թերևս նույն տրամաբանությամբ կարելի է բացատրել նաև այն նշմարվող միտումը, որ Հայաստանի Հանրապետության տարբեր տարածքներում ներկայումս բազմաթիվ քրեական գործեր են հարուցվում գյուղապետների, դպրոցների տնօրենների և այլ պաշտոնյաների նկատմամբ, որոնք Հայաստանում անմիջական ազդեցություն ունեն ընտրող զանգվածների վրա: Գալիք հանրաքվեն կփաստի, թե որքանով էին արդարացված այն ենթադրությունները, որ տվյալ քրեական գործերի գինը հանրաքվեի դրական ելքի ապահովման մեջ ունենալիք ծառայությունն է լինելու:

Երբ մի երկրի իշխանություն փողոցի իր «հեղափոխական» գործելակերպը շարունակում է պետական ղեկի մոտ, պետք է ունենա այն բանի գիտակցությունը, թե դա որքան է վտանգավոր սահմանադրական կարգի համար: Երբ մի երկրի «հեղափոխական» իշխանություն ղեկավարման լծակներին տիրանալուց հետո քրեական և այլ բնույթի զանգվածային հետապնդումներ ու քննություններ է նախաձեռնում նախկին բարձրաստիճան պաշտոնյաների, պատերազմական գործողությունների մասնակից բարձրաստիճան զինվորականների նկատմամբ, այդ ամենը ոչ միայն լրջագույն հարված է պետության հեղինակությանը, այլև մի օր խնդրո առարկա կարող է դարձնել և մղված ազգային-ազատագրական պայքարի օրինականությունը և նորանկախ երկրի՝ երեսուն տարվա վարկը: Ինչպես տեսնում ենք, այդ գիտակցությունը հանդես չեն բերում պետության նավը ճոճող՝ երեկվա փողոցի հերոսները:

Անօրինականության սանձարձակ ընթացքը եթե օրինականության պահանջով չկանխվի, պատրանք չունենանք, թե առկա սպառնալիքը փոքր կորուստներով հնարավոր կլինի հաղթահարել: ■

Գալիք հանրաքվեն հակաօրինական է

Հարցազրույց ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի անդամ Իշխան Սաղաթելյանի հետ

- Հարգելի՛ ընկ. Սաղաթելյան, վերջին ամիսներին մի շարք այցելություններ կատարեցիք Սփյուռքի տարբեր գաղթօջախներ: Ի՞նչ հիմնական նպատակներ էին հետապնդում այդ այցելությունները, և ի՞նչ եզրակացությունների հանգեցիք:

Սփյուռքի գաղթօջախներ այցելել եմ ՀՅԴ տեղի Կենտրոնական կոմիտեների հրավերով: Մերձավոր Արևելք, Եվրոպա, Կանադա, ԱՄՆ այցելությունների ընթացքում ունեցել եմ քաղաքական, պաշտոնական, ժողովրդային և ներկուսակցական բազմաթիվ հանդիպումներ: Նպատակը՝ Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, կուսակցության Հայաստանի կառույցի որդեգրած քաղաքականությանը մոտիկից ծանոթացնել Սփյուռքի մեր կուսակցական ընկերներին և հայրենակիցներին, ինչպես նաև պատասխանել հարցերի, լսել նրանց կարծիքները, մոտեցումները:

Հանդիպումների ընթացքում նաև քննարկվել են համահայկական նշանակության մի շարք հարցեր: Եզրակացնելու համար ասեմ՝ անկախ այն բանից, թե ով է ՀՀ-ում իշխանության, ՀՅԴ-ն իր ողջ կարողություններով, համահայկական քույր կառույցներով կանգնած է ՀՀ-ի և Արցախի պետականությունների կողքին և իր բոլոր հնարավորությունները ներդնելու է արտաքին ճակատում ՀՀ-ի և Արցախի շահերը պաշտպանելու ուղղությամբ:

Ինչպես ասացի, այցելությունների ընթացքում Լիբանանում, Կանադայում և այլուր տեղի են ունեցել նաև քաղաքական հանդիպումներ: Հանդիպել եմ Կանադայի բարձրաստիճան մի շարք պաշտոնյաների, Կանադայի խորհրդարանի Հայ-կանադական բարեկամության խմբի նախագահի հետ, քննարկել ենք Հայաստան-Կանադա հարաբերությունները, դրանց զարգացման հեռանկարները և այլն:

Ամփոփելով հիշեցնեմ, որ ՀՅԴ-ն՝ որպես համահայկական կառույց, առաջնորդվում է բարձրագույն ժողովների որոշումներով որդեգրած քաղաքական ուղեգծով և առաջ է գնում իր միասնական օրակարգով:

- Հայաստանի ներքաղաքական կյանքը դժվար է խաղաղ անվանելը: Դաշնակցությունը հայտարարությունների, հարցազրույցների և ելույթների ճանապարհով պարբերաբար անդրադառնում է ներքին կյանքում տեղի ունեցող այս կամ այն իրադարձությանը: Ի՞նչ մտահոգություններ ունեք ներկայումս, ինչպիսի՞ն են ՀՅԴ գնահատականները ընդհանուր գործընթացների և մթնոլորտի վերաբերյալ:

Մեր գնահատականը հստակ է: Անցնող երկու տարվա ընթացքում ՀՀ իշխանությունները համակարգային որևէ լուրջ փոփոխություն չեն իրականացրել: Երկիրը պահվում է անցյալի

ամբողջական փնովման մթնոլորտում, չկա քաղաքական բանավեճ երկրի ներկայի և ապագայի վերաբերյալ: Մեր ժողովրդի ողջ սպասելիքներն ու ակնկալիքները շարունակում են մնալ չարդարացված: Այս իմաստով՝ իշխանությունները, ազգային միասնական օրակարգ մեջտեղ բերելու, ժողովրդի կարող ուժերը ճիշտ օրակարգի շուրջ համախմբելու փոխարեն, երկիրը շարունակեցին պահել քաոսի, մղձավանջի, անորոշության և հուսալքության ծիրում:

- Ապրիլի 5-ին Հայաստանում տեղի է ունենալու Սահմանադրական դատարանին առնչվող հանրաքվե: Կուզեի ևս մեկ անգամ ներկայացնեիք ՀՅԴ դիրքորոշումը այս միջոցառման վերաբերյալ, և արդյոք անելիք ունի՞ կուսակցությունը հանրաքվեի առնչությամբ:

Մեր դիրքորոշումը շատ հստակ է: Մենք հանդես ենք եկել պաշտոնական հայտարարությամբ: Դատական համակարգում տեղի ունեցող իրադարձություններին արձագանքել ենք դեռևս նախորդ տարվա մայիս ամսին, երբ վարչապետը հայտարարեց դատարանների շրջափակման մասին: Հանրաքվեն որևէ կապ չունի դատական համակարգի բարեփոխումների հետ: Գործադիր իշխանությունը պարզապես ցանկանում է ունենալ սեփական կառավարելի Սահմանադրական դատարան: Հանրաքվեի վերաբերյալ մեր դիրքորոշումը շատ պարզ է. առաջին՝ հանրաքվեն որևէ իրական առնչություն չունի մեր, մեր երկրի առջև ծառացած հիմնական մարտահրավերների հետ, և սա մեր պետությանն ու ժողովրդին որևէ դրական բան չի տալու: Մենք շատ հստակ արձանագրում ենք, որ սա հակահիրավական, հակասահմանադրական, հակաօրինական գործընթաց է, և կոչ ենք արել մեր հասարակությանը մասնակից չդառնալու դրան՝ անտեսելով հանրաքվեն: Միաժամանակ հանրությանն ասում ենք՝ բոյկոտելով, չմասնակցելով ընտրություններին՝ դուք հստակ ուղերձ եք հղում իշխանություններին, որ հոգնել եք այս կեղծ, շինծու օրակարգերից, ստից, կեղծիքից, ամբոխավարությունից, հասարակությանը սևերի ու սպիտակների բաժանելու տխրահռչակ իրողությունից: Հանրաքվեի բոյկոտի միջոցով իշխանությունները կստանան անհրաժեշտ ազդակներ առ այն, որ հարկավոր է շուտափույթ կերպով երկիրը վերադարձնել զարգացման բնականոն հուն և զբաղվել իրական հարցերով:

- Ինչ հիմնահարցեր հատկապես կառանձնացնեիք իշխանության գործունեության առնչությամբ, ո՞ր խնդիրներն են առավել զգայուն, որտե՞ղ է սխալը կատարվում, և ի՞նչ պետք է անել, որ չի արվում:

Իշխանությունն ունեցել է բազմաթիվ սխալներ և շարունակում է ընթանալ այդ ճանապարհով: Դրա կողքին ունեցել է գրեթե աննշան ձեռքբերումներ: Բայց ամենամեծ խնդիրն այսօր մեր երկրում տիրող հասարակական շիկացած և որևէ բան կառուցելու համար ծայրահեղ անբարենպաստ մթնոլորտն է: Հասարակության պառակտվածությունը, սևի և սպիտակի բաժանելը, առկա թշնամանքի և ատելության մթնոլորտը խիստ վտանգավոր են մեր երկրի համար, և սրա անմիջական պատասխանատուն ՀՀ իշխանություններն են:

Պարզորոշ է՝ այսպիսի պայմաններում խոսել լայնածավալ ներդրումների, իրական բարեփոխումների, առաջընթացի մասին՝ նշանակում է իրականությանը նայել փակ աչքերով: Ցավոք, օրվա իշխանությունները շարունակում են սեփական անկարողությունն ու ձախողումները կապել երկու տարի առաջ հեռացած իշխանությունների հետ, ինչն արդեն զավեշտ է: Հասարակությունը կոնկրետ փոփոխությունների ակնկալիքով է դուրս եկել փողոց և արագորեն հուսախաբ է լինում: Անցնող երկու տարիները ցույց տվեցին, որ իշխանափոխությունը շեշտակի բարեկեցություն է ապահովել միայն մի շատ նեղ շրջանակի համար, ինչը դատապարտելի է և հակասում է նոր իշխանությունների նախընտրական հայտարարությունների տառին և ոգուն: Այսպիսի իրավիճակը շուտով հանգեցնելու է նոր հուզումների և ցնցումների, հուսալքության և այդ ամենի հետևանքով արտագաղթի նոր ալիքի առաջացման: Պատերազմական իրադրության մեջ ապրող մեր երկրի համար, կարծում եմ, անթույլատրելի է նման ընթացքը: ■

Ավարտվեց Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների ինգօրյա համաժողովը

2020 թ. փետրվարի 24-28-ին Երևանում և Ստեփանակերտում գումարվեց ՀՅԴ Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների համաժողովը:

Համաժողովին մասնակցեցին Հայ դատի ավելի քան 20 հանձնախմբերի ու գրասենյակների և ՀՅԴ կուսակցական մարմինների մոտ 50 ներկայացուցիչներ:

Համաժողովը քննարկեց Հայ դատի աշխատանքների ընթացքը 2019 թ. հունվարից առ այսօր: Լսեց զեկույցներ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության մարտահրավերների և ՀՀ ներքաղաքական իրավիճակի մասին:

Խորհրդաժողովի օրակարգի հիմնական հարցերն էին.

- ՀՀ-ին ի նպաստ իրազեկման (լոբբինգ) աշխատանքներ.
- Պայքար Արցախի միջազգային իրավական ճանաչման համար և Ադրբեջանի հակահայ քաղաքականության դեմ, Արցախի բարեկամների ցանցի աշխուժացում.
- Աշխատանքներ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և պահանջատիրական պայքարի ուղղությամբ.
- Ջավախքի հայության իրավունքների պաշտպանության ուղղությամբ նախաձեռնություններ.
- Նախիջևանի հայկական ինքնության արծարծում միջազգային շրջանակներում.
- Սևրի դաշնագրի և Հայաստան-Թուրքիա սահմանի մասին Վիլսոնյան իրավարար վճռի 100-ամյակի նշում քաղաքական բովանդակությամբ.
- Մոսկվայի և Կարսի դաշնագրերի 100-րդ տարին. դրանց հետևանքների սրբագրման և վերացման ձևերը.
- Սիրիայի, Լիբանանի, ընդհանրապես Մերձավոր Արևելքի հայությանը աջակցություն (տեղում և Հայաստանում).
- Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների հնարավորությունների զարգացում:

Համաժողովը յուրաքանչյուր հարցի շուրջ հանգեց համապատասխան եզրակացությունների և կայացրեց որոշումներ առաջիկա գործունեության վերաբերյալ:

Համաժողովը մտահոգություն արձանագրեց Արցախի հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցությունների ներկա փուլի շուրջ ստեղծված անորոշությունների վերաբերյալ և շեշտեց հայկական քաղաքական բոլոր ուժերի կողմից վերահաստատման կարևորությունը, որ Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումն առաջնահերթություն է կարգավորման գործընթացում:

Համաժողովի ժամանակ ողջույնի ուղերձով հանդես եկավ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, ով ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհրդին պարգևատրեց «Երախտագիտություն» մեդալով՝ «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանն ուղղված ակտիվ գործունեության, Արցախ-Սփյուռք կապերի ամրապնդման ու զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար»: ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը, ստանալով մեդալը, հայտնեց, որ այն գնահատականն է Հայ դատի ողջ համակարգի գործունեության: ■

ՀՅԴ Հայ դատի կենտրոնական խորհուրդ
Երևան, 29 փետրվարի 2020 թ.

Հայ դատի գերակայ ուղղութիւնները

Շահան Գանտահարեան

ՀՅԴ Հայ Դատի յանձնախումբերու և գրասենեակներու խորհրդաժողովի ընթացքին ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչին կողմէ բանաձևուած Հայ Դատի գերակայ չորս ուղղութիւնները կ՚ուղենշեն ընդհանրապէս մեր համահայկական քաղաքական աշխատանքներու հայեցակարգային կէտերու առարկայացման հուները: Անոնք կը վերաբերին մեր զոյգ հանրապետութիւններու ամրակայման ու զարգացման, Ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու հատուցման, Արևմտահայաստանի մէջ գործող ազգային փոքրամասնութիւններու և հայ ժողովուրդի ու յատկապէս երիտասարդութեան քաղաքականացման գործընթացին:

ՀՀ ԵՒ ԱՀ

Բոլոր ցամաքամասերուն մէջ Հայ Դատի ցանցային եզակի կառոյցը կ՚առաջադրէ ՀՀ-տուեալ պետութիւն միջպետական յարաբերութիւններու զարգացումը, ՀՀ-ին և ԱՀ-ին տրուելիք օժանդակութիւններու բազմապատկումը, հակառակորդներուն տրուելիք օժանդակութիւններու կրճատումը, մեր պետութիւններուն ժողովրդավար դիմագիծի ներկայացումը, պետական պաշտօնատարներու այցելութիւններու կազմակերպումը: Կը սատարէ երկու պետութիւններու արտաքին քաղաքականութեան, տուեալ աշխարհագրական միջավայրի քաղաքական և մշակութային իւրայատկութիւններուն իրազեկման և հայկական կողմին համար դրական ենթահողի հարթեցման աշխատանքներուն:

Տակաւին, կը բացայայտէ հակառակորդին յարձակողապաշտութիւնը, պատերազմական ոճիրներ գործադրած ըլլալու իրականութիւնները: Հայաստանի Հանրապետութեան հեղինակութեան բարձրացումը միջազգային ատեաններու մօտ առաջնային օրակարգ է Հայ Դատի բոլոր կառոյցներուն համար: Մինչ Արցախի ճանաչելիութիւնն ու ճանաչումը ոչ միայն յայտարարուած առաջադրանք են, այլև գործնական փաստերու տեսք ապահոված աշխատանքային բազմաոլորտ ծրագիր: Ամերիկեան նահանգներէն մինչև Աւստրալիա և Եւրոպական նահանգներ, ԱՀ-ի ճանաչում ըլլայ թէ Ստեփանակերտի համապատասխան գերատեսչութիւններու հետ համագործակցութիւն, արգասիքն են Հայ Դատի յանձնախումբերու հետևողական աշխատանքներուն: Մինչ Միջին Արևելքի մէջ կրօնական շահարկումներու բացառման,

հարցի պատմական, իրաւական և քաղաքական հիմնաւորումներու իրագեկման և լուսաբանման աշխատանք կը ծաւալի՝ հակամարտութեան բուն էութիւնը բացայայտելով և հակազդելով հակառակորդի ապատեղեկատուութեան:

ԱՄՆ Ներկայացուցիչներու տան թէ Ծերակոյտի որոշումներով պաշտօնակացած Ուաշինկթընի ճանաչումը Ցեղասպանութեան կը յուշէ, որ, հատուցման հարթութիւն թեւակոխելու առընթեր, Արցախի Հանրապետութեան ճանաչումը Հայ Դատի առաջնային օրակարգի վերածուելու բոլոր նախադրեալները կ'ամբողջացնէ արդէն:

ՃԱՆԱՉՈՒՄ ԵՒ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Հատուցման իրաւական թղթածրարի նախապատրաստական աշխատանքները, պահանջատիրութեան պետականացման տուեալները, այս ուղղութեամբ համահայկական հոչակագրի հիմնադրոյթներուն իրաւական ձևակերպումները, Ներկայացուցիչներու տան որդեգրած՝ հատուցման բաժիններ ներառած բանաձևերը, տարբեր խորհրդարաններու մէջ Հայ Դատի յանձնախումբերու կողմէ բանաձևուող «Արևմտահայաստան» և «հայրենազրկում» հասկացութիւնները կը խօսին ճանաչումէն հատուցման առաջադրանքի ոգեմավարական անցումին մասին:

Հատուցումը ինչպէս անհատական, այնպէս նաև համայնքային և տարածքային հասկացողութիւններ կը ներառէ, և այստեղ զուտ իրաւագիտութիւնը կը զուգորդուի քաղաքական աշխատանքներուն: Միջազգային իրաւունքը, ցեղասպանագիտութիւնը, բայց նաև նիւթական, մարդկային, հոգեբանական, ինքնութեան, մշակոյթի և տարբեր ոլորտներու վերաբերող իրաւունքներու հետևանքներու վերականգնման իրաւական ուղիներու ճշդումին կը վերաբերի պատրաստուելիք թղթածրարը:

Սևրի և իրաւարար վճիռի 100-ամեակի տարին այս առումով բոլոր տուեալները ունի դառնալու հատուցման պայքարի անցումի շրջադարձ: Հատուցումը, առաջին ուղղութեան կապուելով, կրնայ սերտօրէն առնչուիլ Հիւսիսային Արցախի տարածքային խնդրին և պատերազմի զանազան հանգրուաններուն Ատրպէյճանի գործադրած պատերազմական ոճիրներու դատապարտման և հատուցման հրամայականին:

ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր պատմական տարածքներուն վրայ գոյութիւն ունեցող ազգային փոքրամասնութիւններու խնդրին և իրաւունքներուն միջազգային հնչեղութիւն ապահովելու օրակարգն ունի քաղաքական մեծ նշանակութիւն: Ինքնութեան վերադարձի ալիքի բարձրացումը նոր տարողութիւն կրնայ ապահովել տարածքային պահանջատիրութեան խնդրին: Այստեղ, անշուշտ, գերակշիռ են կացութեան իւրայատկութիւնները և տեղւոյն վրայ ապրող ազգաբնակչութիւններու վտանգաւոր կացութիւններ չհրամցնելու մօտեցումը: Այլ ազգաբնակչութիւններ մինչև վերջերս Անգարայի կողմէ կ'ենթարկուին «կացինային հակազդեցութեան»: Անոնց հետ, սակայն, ոչ միայն ներկայ կացութիւնը քննարկելու, յաղթահարման ուղիներ որոնելու, միևնոյն ցեղասպանական քաղաքականութեան հետևանքները կրած ըլլալով՝ հետապնդելի դատերու և մանաւանդ միջազգային ատեաններու մօտ զանոնք ներկայացնելու համատեղ քայլերու մասին խորհրդակցութիւններ կազմակերպելը կը շարունակէ ներկայացնել կարևոր իմաստ:

Նուրբ, յաճախ լուռ, բայց հետևողական և քաղաքական պահին յատկութիւնները նկատի առնող դաշտային և ուսումնասիրական զուգընթաց ծրագիրներուն կը վերաբերի Հայ Դատի այս ոլորտը՝ հեռու քարոզչական լուսարձակներ խլելու մտադրութենէն:

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՈՒՄ

Տասնամեակներու վրայ երկարող Հայ Դատի այս առաջադրանքը բաւական ճանապարհ անցած է արդէն: Հայ Դատի՝ պահանջատիրական տարբեր բնոյթի աշխատանքներ, արցախահայութեան գործնական զօրակցութիւն, ճանաչում-հատուցում թէ պետականութեան հզօրացում այդ քաղաքականացման գործընթացին իրականացած կամ իրականացուող գործընթացներն են: Հայ Դատի յանձնախումբերու և գրասենեակներու կառոյցը, խորհրդաժողովները թէ ընդհանրապէս գործունէութեան համապատկերը կը համոզէ, որ սերնդափոխութիւնը անդադրում եղելոյթ է այս համակարգին մէջ: Երիտասարդութիւնն է առաջատարը, ոչ միայն Հայ Դատի կոչերուն ընդառաջ շարժող, այլ նաև ծրագրող, նախաձեռնող, որոշող և իրականացնող խաւը: ԱՄՆէն Եւրոպա, Աւստրալիայէն Հարաւային Ամերիկա թէ Քանատա, Եւրոպա ու Միջին Արևելք Հայ Դատի կառոյցները կը համակարգեն ու կը ղեկավարեն մեր երիտասարդները: Այս իրականութիւնը արդէն կը խօսի անժամանցելիութեան, հեռանկարայնութեան և աշխատանքի յաջողութեան մասին:

Ցանցային ամբողջ համակարգ մը, երիտասարդականութեամբ յատկանշուած ճանաչումէն հատուցում և ճանաչելիութենէն ճանաչում և պետականութեան հզօրացում, ահաւասիկ տասնամեակներէ ի վեր, իրաւամբ հայ զինուորին թիկունքին կանգնած իբրև համահայկական երկրորդ բանակ, կը շարունակէ ծառայել Հայաստանին ու հայութեան

Քաղաքական զարգացումները Մերձավոր Արևելքում և Հարավային Կովկասի պետությունները

Վ. Հ.

Հայաստան

Ի տարբերություն Վրաստանի միանշանակ արևմտյան կողմնորոշմանը կամ Ադրբեջանի՝ գրեթե 25 տարվա ալիևյան քաղաքական կուրսին՝ այսօր դժվար է որոշակիորեն ձևակերպել Հայաստանի արտաքին քաղաքական դիրքորոշումները միջազգային հարաբերություններում:

ՀՀ առաջին նախագահը, չնայած մեր ժողովրդի տարած հաղթանակին ու Հարավային Կովկասում ամենամարտունակ բանակն ունենալու փաստին, կոչ արեց վերադարձնելու ԼՂ-ն Ադրբեջանի տիրապետության տակ՝ այդ գնով հաստատելու խաղաղություն, վերացնելու շրջափակումը, բացելու ճանապարհները, հաստատելու բարիդրացիական հարաբերություններ Թուրքիայի հետ և լուծելու երկրի սոցիալ-տնտեսական խնդիրները:

Անձնատուր լինելու այս կոչը բնականաբար զայրացրեց ու չընդունվեց ո՛չ ժողովրդի, ո՛չ քաղաքական ու հասարակական գործիչների, ո՛չ զիվորականների կողմից, իհարկե, բացառությամբ ՀՀՇ-ի ու նրա հետևորդների, որոնք առ այսօր էլ դրա ակտիվ քարոզիչներն են, և հանգեցրեց նախագահի հրաժարականին: Այս քայլը նաև զարմացրեց տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող խաղացողներին, մասնավորապես՝ Իրանին և Ռուսաստանին, քանի որ միտված էր խառնելու տարածաշրջանում ձևավորված ուժային վեկտորների դասավորությունը:

Հաջորդ նախագահը վերադարձրեց ՀՀ-ն քաղաքական իրականության դաշտ: Նա ձեռնամուխ եղավ Հայաստանի և Արցախի պետական կառույցների, տնտեսության ու ֆինանսական համակարգի կարգավորմանը, բանակի հզորացմանը, բարելավեց բնակչության տնտեսական ու սոցիալական վիճակը, և այդ ամենը՝ ոչ թե տարածքներ հանձնելու գնով, այլ տնտեսական բարեփոխումների ճանապարհով: Զարգացնելով ու խորացնելով առևտրատնտեսական, ռազմաքաղաքական, էներգետիկ և տրանսպորտային հարաբերությունները ՌԴ-ի հետ՝ դրանք հասցրեց ռազմավարական, դաշնակցային մակարդակի: Հարաբերությունները Վրաստանի և Իրանի հետ վերածվեցին արդյունավետ համագործակցության առևտրի, էներգետիկայի, տրանսպորտի ոլորտներում: Զարգանում էին հարաբերությունները նաև մյուս բոլոր ուղղություններով: Վերականգնվեցին Հայաստան-Սփյուռք հարաբերությունները: Սփյուռքը ոչ միայն օժանդակեց հայրենիքում տնտեսական ծրագրերի իրագործմանը, այլև ակտիվ քարոզչական և

լոբբինգի գործունեություն ծավալեց ի նպաստ Հայաստանի և Արցախի:

Զգալիորեն բարձրացավ երկրի միջազգային հեղինակությունը, ավելի ծանրակշիռ էին դառնում ՀՀ դիրքերը ԼՂՀ-ի շուրջ վարվող բանակցություններում, արտաքին քաղաքականությունն ուղղված էր հայկական երկու պետությունների շահերի հետևողական պաշտպանությանը միջազգային հարաբերություններում:

Հայաստանյան նեոլիբերալները չներեցին այս ամենը Ռ. Քոչարյանին: Նախագահության ողջ ընթացքում կեղծ մեղադրանքներով զրպարտեցին նրան, վարկաբեկեցին մարտի 1-ին կազմակերպված անկարգություններով:

Երրորդ նախագահի կառավարման տարիները կհիշվեն որպես իներցիոն զարգացման, տնտեսական լճացման տարիներ: Նրա կառավարման ժամանակահատվածում պետական պարտքը հասավ 7 մլրդ դոլարի, քաղաքական դաշտը լցվեց արտառոց վարքագիծ ու կասկածելի կենսագրություն ունեցող անձնավորություններով, պետական և քաղաքական պաշտոններում ոչ համապատասխան մարդկանց նշանակումներով, պետահիրավական համակարգի պատեհապաշտ բարեփոխումներով, վերջապես՝ խորհրդարանական կառավարման անցումով և տարբեր բնագավառներում կատարված այլ փորձարարություններով: Միջազգային հարաբերություններում այդ տարիներին առանձնակի առաջխաղացումներ չգրանցվեցին, ավելին՝ երկրի համար կարևոր հարաբերությունները Վրաստանի և Իրանի

հետ կորցրին իրենց աշխուժությունը: Արտաքին քաղաքականության բնագավառում ընդհանուր առմամբ պահպանվեցին, բայց չզարգացան նախկինում ձևավորված ուղղությունները: Երրորդ նախագահը, սակայն, ձեռնարկեց քայլեր նախկին նախագահի կողմից մերժված ուղղություններով: Փորձեց կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ, ստորագրեց հայ-թուրքական արձանագրությունները: Փաստաթղթի կնքման նախօրեին հրաժարվեց լայնորեն գովազդված ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը ստորագրելուց և անմիջապես հայտարարեց Հայաստանի՝ ԵԱՏՄ մտնելու որոշման մասին՝ անակնկալի բերելով երկրի կառավարությանը: Ներքաղաքական կյանքում նույնպես արտառոց իրադարձություններ տեղի ունեցան: Մարտի 1-ի կազմակերպիչները դուրս եկան բանտերից և մտան ԱԺ, ի հայտ եկան զինված ահաբեկչական խմբեր, որոնցից «Սասնա ծռեր»-ը դիմեց զինված գործողության, ձևավորվեց «Ելք» խորհրդարանական խմբակցությունը, որը կոչ էր անում դուրս գալու ԵԱՏՄ-ից և հայհոյում էր մեր դաշնակիցներին:

Արցախի հարցի շուրջ Մինսկի խմբի շրջանակներում վարվող բանակցություններն ընթանում էին սովորականհունով, առանց նշանակալի դիվանագիտական տատանումների: Սակայն 2016 թ. ապրիլի 1-ի ադրբեջանական հարձակումը հիմք տվեց ենթադրելու, որ հակամարտությունը նոր փուլ է մտնում և փոխում է կողմերի դիրքային հարաբերակցությունը թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմաքաղաքական դաշտում: Ինչո՞ւ էին ծրագրել, և ո՞վ էր խրախուսել ադրբեջանական այս հարձակումը, ի՞նչ նպատակներ էր այն հետապնդում: Արդյոք այն հետախուզական նպատակներ ունե՞ր՝ պարզելու

Արցախի դիմադրության հնարավորությունները կամ Ռուսաստանի և ՀՀ մյուս դաշնակիցների արձագանքը հնարավոր պատերազմի դեպքում, ինչպես դա եղավ 2008 թ. վրացիների կողմից Հարավային Օսեթիայի վրա հարձակման ժամանակ: Այս հարցերը կարոտ են պատասխանի՝ հասկանալու համար այսօրվա զարգացումները:

Երրորդ նախագահը հասցրեց դառնալ «սուպեր» վարչապետ, այդ պաշտոնում դիմավորեց թավշյա հեղափոխությունը և հրաժարական տվեց: Այսպես նա, կամա թե ակամա Ն. Փաշինյանին դարձրեց «սուպեր» վարչապետ:

Թավշյա հեղափոխությունից անցել է երկու տարի, և դեռ առաջին օրերին դրա առաջնորդի հռչակած կարգախոսների իրականացման փոխարեն մենք ականատես ենք հակառակ արդյունքներին: Տնտեսվարման, պետահիրավական հին համակարգերը անցան հեղափոխական կադրերի ձեռքը, որոնք, կառավարման փորձ չունենալով, անկարող լինելով տնտեսական զարգացման ծրագրեր կազմելու և իրականացնելու, ստիպված են ենթարկվել հին ընթացքին և վաղ թե ուշ կազմելու են իրենց կոռուպցիոն սխեմաները: Օրինականությունը երկրում, ճիշտ կլիներ ասել անօրինականությունը, իրականացվում է հեղափոխական ոճով՝ «ասֆալտին պառկեցնելու», «պատերին ծեփելու» և «թաթիկները կտրելու» սպառնալիքներով: Սիրո հեղափոխությունը վերածվում է հների և նորերի միջև ատելության, հասարակությունը բաժանվում է սևերի ու սպիտակների, ժողովրդավարության զարգացման փոխարեն սերմանվում է անհանդուրժողականություն: Այս ամենը տարածվելով ու խորանալով ընդգրկում է հասարակության բոլոր ոլորտները՝ բանակը, կրթությունը, մշակույթը, բիզնեսը, ընտանիքները, Արցախ-Հայաստան հարաբերությունները: Ի վերջո, «հեղափոխական» այս վարակը ներարկվում է ամեն մի «հպարտ քաղաքացու», դեգրադացնում, այլասերում է նրանց, վերածում ազգային-բարոյական արժեքներից զուրկ անձնապաշտ արարածների, որոնք սնվում են բամբասանքներով և իրենց հերթին վարկաբեկում են, կեղծ մատնություններ են անում՝ այդպիսով փորձելով ինչ-որ բան շահել իրենց համար:

Նկատի ունենալով այս երևույթները և դրանց խորացման միտումները՝ ի՞նչ կարող ենք սպասել Արցախի խնդրի լուծման առումով: Ի՞նչ կարող ենք սպասել, երբ հայ ազատականները ձգտում են օտարացնելու Արցախը Հայաստանից, պառակտում սերմանելու հայաստանցիների ու արցախցիների միջև՝ վարկաբեկելով արցախյան հերոսներին, սպաներին և այդպիսով նսեմացնելով մեր ազգային-ազատագրական պայքարի արցախյան հանգրվանը: Այն դեպքում, երբ Արցախի համար պայքարը մեր պետության ինքնիշխանության, միջազգային հարաբերություններում հեղինակության և ազգային

արժանապատվության գրավականն է:

Արցախի խնդրի լուծմանն ուղղված մոտեցումները փորձաքար են դարձել պետության յուրաքանչյուր ղեկավարի կամ քաղաքական ուժի համար: Դրանք փորձաքար են նաև այսօրվա հեղափոխական իշխանությունների համար: Ստանձնելով իշխանությունը՝ Ն. Փաշինյանը հայտարարեց, որ մերժում է խնդրի լուծման նախկինում եղած քաղաքական ու դիվանագիտական ջանքերը և գործընթացները սկսում է զրոյից: Սակայն այս երկու տարվա ընթացքում նա չներկայացրեց որևէ հստակ դիրքորոշում, հարցի արդար լուծման որևէ ճանապարհ, որով կհամախմբեր մեր ժողովրդին: Հակառակը՝ հեղափոխականների՝ վերը նշված պառակտիչ գործունեությունն ավելի ակնհայտ է ու վտանգավոր: Արցախի վերաբերյալ Փաշինյանի հայտարարությունները պառակտել են մեր ժողովրդին: Օրինակ՝ կարո՞ղ է հայ ժողովուրդը համաձայնել «Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ ցանկացած որոշում պետք է ընդունելի լինի երեք ժողովուրդների համար» կամ. «Ժողովուրդներին պետք է պատրաստել խաղաղության» կոչերին: Չքննարկելով դրանց անհեթեթությունը՝ նշենք միայն, որ նման հայտարարությունները տեղին կհնչեին որևէ օտար պետության արտգործնախարարի դեպքում: Եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ ՀՀ «հպարտ» քաղաքացիները համաձայն են դրանց և եռանդագին սկսում են պատրաստվել խաղաղության, ապա անհնարին է պատկերացնել, որ ՀՀ համեստ քաղաքացիները, արցախցիները կհամաձայնեն դրանց: Քաղաքական տեսանկյունից անլուրջ այս հայտարարությունները կոչված են քողարկելու «զրոյից սկսելու» մասին լուրջ վտանգ ներկայացնող հայտարարությունը: Նախ՝ բանակցային գործընթացի զրոյացումը նշանակում է, որ հայկական կողմից բանակցություններին ներկայացվող և մինչ հեղափոխությունը հետևողականորեն պաշպանվող դիրքորոշումները, մասնավորապես՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, այլևս չեն քննարկվում, և դրանց փոխարեն սեղանին են դրվել Մադրիդյան սկզբունքները, այսինքն՝ խնդրի լուծման փուլային տարբերակը: Թերևս սա է պատճառը, որ, չնայած ՀՀ և ԱՀ արտգործնախարարների եռօրյա (11 ժամ) հանդիպմանը Ժնևում և Ալիև-Փաշինյան դեմ առ դեմ հանդիպմանը Մյունխենում՝ առանց ԵԱՀԿ ՄԽ միջնորդների ներկայության, ՀՀ վարչապետը համառորեն ժխտում է ադրբեջանցիների հետ բանակցությունների փաստը՝ գուցե թաքցնելու համար այն, որ բանակցություններն ընթանում են Բաքվին ձեռնտու հունով:

Երկրորդ՝ եթե զրոյացնում ես արցախյան գործընթացը, ապա դրանով զրոյացնում ես արցախյան հաղթանակը, Արցախի Հանրապետության գոյությունը, օտարում ես այն Հայաստանից, հակամարտությունը հանգեցնում ես միջէթնիկական վեճի՝ ադրբեջանական պետության տարածքում ապրող հայերի և ադրբեջանցիների միջև:

Եթե դու զրոյացնում ես արցախյան հաղթանակը, այսինքն՝ ազգային-ազատագրական պայքարում քո հաղթանակը, ապա դրա հետ մեկտեղ զրոյացնում ես հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի ողջ պատմությունը: Վերջապես զրոյացնում ես հայկական պետության ինքնիշխանությունը:

Հրապարակներում, տարբեր դահլիճներում, միջազգային հանդիպումների ժամանակ հեղափոխության առաջնորդի իրարամերժ հայտարարությունները, լայն ամպլիտուդով ճոճքը արտաքին քաղաքական դիրքորոշումներում, ՀՀ արտաքին քաղաքականության, ինչպես նաև անվտանգության հայեցակարգերի բացակայությունը հնարավորություն չեն ընձեռում պատկերացնելու, թե որոնք են ՀՀ արտաքին քաղաքականության բնութագրերը, անհասկանալի և անկանխատեսելի են դարձնում ՀՀ վարքագիծը միջազգային հարաբերություններում, արժեզրկում են երկրի հեղինակությունը: Եթե այսպես շարունակվի, ապա կհայտնվենք զավեշտալի իրավիճակներում. օրինակ՝ այն դեպքում, երբ հարևանները պատրաստվում են պատերազմի, մեր իշխանությունները մեզ պատրաստում են խաղաղության:

Այսպիսով, եթե Մերձավոր Արևելքում իրադարձությունները զարգանան հակասությունների սրման ճանապարհով, և Հարավային Կովկասը նույնպես վերածվի տարածաշրջանում իրենց շահերը հետապնդող տերությունների հակադրման դաշտի, ապա որքանո՞վ է Հայաստանը պատրաստ լինելու դիմակայելու դրանից բխող մարտահրավերներին:

Ուժերի ինչ դասավորություն կհաստատվի տարածաշրջանում, աշխարհաքաղաքական ինչպիսի տեղաշարժեր կլինեն, և ինչ հետևանքներ կունենան դրանք հայկական երկու պետությունների համար՝ կախված կլինի ոչ միայն մեր առարկայորեն ունեցած աշխարհաքաղաքական նշանակությունից և արժեքից, այլև հասարակության համախմբվածության աստիճանից, պետական համակարգի արդյունավետ աշխատանքից, սպայական ու զինվորական կազմերի ռազմական պատրաստականությունից և հայրենասիրական ոգուց, ազգային և պետական արժեքներին ու շահերին նվիրված քաղաքական ղեկավարությունից, դաշնակիցների հետ հարաբերությունների մակարդակից, նպատակաուղղված քաղաքական և դիվանագիտական գործունեությունից:

Առաջին անգամ չէ, որ Հայաստանը հայտնվում է նման իրավիճակում:

1918 թ. ծանրագույն պայմաններում վերականգնվեց հայոց պետականությունը, ստեղծվեց մարտունակ բանակ, ազատագրվեցին ու մեկ պետության մեջ միավորվեցին մոտ 70 հազար քառ. կմ հայկական տարածքներ, ձևավորվեց պետական համակարգ: Եվ այս ամենը՝ երկու տարվա ընթացքում: Սակայն նույն այդ երկու տարվա ընթացքում տեղի ունեցած քաղաքական տեղաշարժերը տարածաշրջանում հանգեցրին ՀՀ-ի համար վտանգավոր ռազմաքաղաքական վերադասավորումների: Ռուս-թուրքական դաշինքի հետևանքով Հայաստանը կորցրեց իր աշխարհաքաղաքական նշանակությունը և տարածքների մեծ մասը: Իշխանության եկան հայ բոլշևիկները, որոնք քայքայիչ գործունեության՝ արդեն երկու տարվա փորձ ունեին և ընդամենը մի քանի ամսում քանդուքարափ արեցին պետությունը, սպանեցին կամ բանտարկեցին հարյուրավոր պետական-հասարակական գործիչների ու մտավորականների, քարոզեցին եղբայրություն թուրքերի հետ և սպասում էին համաշխարհային հեղափոխության գալստյանը:

1991 թ. Հայաստանը նորից անկախացավ, պայքարեց և ազատագրեց Արցախը: Երկու-երեք տարի անց ադրբեջանական էներգետիկ պաշարների համար պայքարը նորից վերադասավորեց քաղաքական նախընտրությունները տարածաշրջանում՝ ի նպաստ Ադրբեջանի և ի վնաս Հայաստանի: Արևմուտքը խորհուրդ տվեց Հայաստանին զբաղվելու ազատական արժեքների քարոզչությամբ ու հաստատմամբ, իսկ Ադրբեջանին՝ նաֆթատարներ ու գազատարներ կառուցելով:

Իշխանության եկած հայ նոր ազատականները Արցախյան ազատամարտին զուգահեռ փլուզեցին արդյունաբերությունն ու թալանեցին պետական ունեցվածքը, ոսնեմացրին Սփյուռքը, սպանեցին ու բանտերը նետեցին հարյուրավոր քաղաքացիների:

Հաջորդ տասը տարում Հայաստանը նորից վերականգնեց խարխլված պետականությունն ու միջազգային հեղինակությունը, որոնք դեռ լրիվ չէին մսխվել, երբ հայտնվեց «սուպեր» վարչապետը, և նորից սկսվեց պետության քանդումը: Թվում է, թե ինչ-որ ուժեր համառորեն փորձում են ապակայունացնել Հայաստանը, ստեղծել վախի, անվստահության մթնոլորտ, խեղել մարդկանց հոգեբանությունը և դարձնել նրանց կամազուրկ:

Ամբողջ հարցն այն է, թե, հասնելով այս վիճակին, հայ ժողովուրդը ի վիճակի կլինի՞ ևս մեկ անգամ ոտքի կանգնելու: Վստահ լինենք, որ այո՛, սակայն հուսանք նաև, որ նեոբոլշևիկներն ու նեոլիբերալներն այլևս դերակատար չեն լինի մեր կյանքում: ■

Ինչպե՞ս աշխատել ԵԱՏՄ-ի հետ

Արա Նոռանյան

Հոդվածի հեղինակը 2015 թվականի հունվարի 2-ից մինչև 2016 թվականի հունվարի 31-ը եղել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի անդամ (Նախարար):

Նախաբան

Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) Հայաստանի անդամակցության վերաբերյալ բոլոր գնահատականները, լինեն դրանք գովաբանական ու հիացական թե քննադատական կամ մտահոգ (առարկայական թե ենթակայական), հիմնականում պայմանավորված են զգացմունքային մոտեցմամբ, ինչը թելադրված է նախևառաջ քաղաքական դրդապատճառներով ու շահերով: Անշուշտ, ցանկացած համարկում չի կարող լինել առանց քաղաքական բաղադրիչի: Սակայն Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցության այս հինգ տարիները փաստեցին, որ ԵԱՏՄ իրական էության, նպատակների, ծրագրերի, զարգացման ուղղությունների, որոշումների կայացման մեխանիզմների, շահերի միասնության ու բախումների ոչ ճիշտ ընկալումը հանգեցնում է երկրի մասնակցության ոչ բարձր արդյունավետության և նվազեցնում է առավելություններից օգտվելու ու մարտահրավերներին դիմագրավելու կարողությունը:

ԵԱՏՄ-ն ստեղծվել է Մաքսային միության հիման վրա, որի առաջնային նպատակը եղել է մի քանի երկրների արտաքին սահմաններով միասնական մաքսային գոտու ստեղծումը՝ միասնական մաքսային դրույքաչափերով, կանոնակարգումներով և մաքսատուրքերից ձևավորվող միասնական բյուջեով, որը որոշակի մասհանումով բաշխվում է պետությունների միջև:

Միաժամանակ ԵԱՏՄ երկրները խնդիր են դրել վերացնելու անդամ պետությունների միջև աշխատուժի, ապրանքների, ծառայությունների տեղաշարժի խոչընդոտները, բացառելու հակամրցակցային գործունեությունը, ինչպես նաև առանձին ոլորտներում ստեղծելու միասնական շուկաներ (էներգետիկա, տրանսպորտ, ծառայությունների առանձին տեսակներ և այլն):

Ստեղծվել են ԵԱՏՄ կառավարման մարմինները: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (ԵՏՀ) ունի 2 մարմին՝ Խորհուրդը (մասնակցում են փոխվարչապետները) և մշտապես գործող Կոլեգիան, որի կազմում յուրաքանչյուր երկրից ընդգրկված են հավասար թվով անդամներ (նախարարներ): Նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է որոշակի ոլորտների համար: ԵԱՏՄ-ում գործում են նաև Միջկառավարական խորհուրդը, որի կազմում ընդգրկված են անդամ պետությունների վարչապետները, և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը, որի կազմում ընդգրկված են անդամ պետությունների ղեկավարները:

ԵԱՏՄ կարգավորումները

Մաքսային կարգավորումներ և միասնական մաքսատուրքեր: Մաքսային քաղաքականությունը ԵԱՏՄ-ում արմատականորեն տարբերվում է այն մոտեցումներից, որոնք գործում էին Հայաստանում մինչև 2015 թվականը: Հայաստանում մաքսատուրքերն ունեին բացառապես ֆիսկալ նշանակություն, չունեին որևէ կարգավորիչ գործառույթ, իսկ ազդեցությունը, տեղական արտադրության խրախուսման առումով, գրեթե զրոյական էր: Այդ համակարգը Հայաստանի՝ խիստ վիճահարույց պայմաններով Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցության հետևանք էր, որը նպաստավոր էր ներկրողների համար, չէր խթանում տեղական արտադրությունը և խրոնիկ դարձրեց առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը:

ԵԱՏՄ-ում մաքսատուրքերն ունեն կարգավորիչ գործառույթ: Ապրանքը, որը չի արտադրվում ներսում և ներկրվում է ներքին արտադրության կարիքների համար, կարող է ունենալ զրո կամ ավելի ցածր դրույքաչափ, քան այն ապրանքը, որն ունի ներքին արտադրող: Այս համակարգը թույլ է տալիս պետություններին իրենց տնտեսության առանձին ճյուղերի կամ արտադրողների գործունեությանը նպաստելու համար դիմել ԵԱՏՄ մարմիններին՝ որոշակի ժամկետով բարձրացնելու կամ իջեցնելու այս կամ այն մաքսատուրքը: Գործում է նաև քվոտավորման հնարավորությունը, երբ կոնկրետ դեպքերի համար կարող են տրամադրվել ոչ միայն ժամանակային, այլ նաև քանակային արտոնություններ:

Հայաստանի պարագայում ամենամեծ առավելություններից է այն, որ նվազեցված է մաքսատուրքերի ազդեցությունը ողջ պետական բյուջեի եկամուտների վրա: Հայաստանի բյուջեն համալրվում է ԵԱՏՄ սահմանին գանձված մաքսատուրքի 1.22 տոկոսի չափով, ինչը նշանակում է, որ նվազում է ՀՀ մաքսային մարմինների մոտիվացիան՝ տարբեր եղանակներով, օրինակ՝ հսկիչ գների գործադրմամբ, ներկրողներից գանձելու առավելագույն գումարը:

Ի դեպ, հարկ է արձանագրել, որ վերը նշված տոկոսադրույքը տարբեր առիթներով ենթարկվել է փոփոխության, սակայն դրա կիրառմամբ Հայաստանի Հանրապետությունը միշտ ստացել է ավելի շատ մասհանում ընդհանուր բյուջեից, քան ինքն է գանձել սահմանին: Իհարկե, ոչ ԵԱՏՄ պետություններից Հայաստան ներկրվող ապրանքների մի մասը ԵԱՏՄ սահմանը հատում է մյուս անդամ պետություններում, բայց բոլոր դեպքերում, ինչ մեթոդաբանությամբ էլ հաշվարկվում են տոկոսները, դրանք մինչ օրս ապահովել են դրական մնացորդ:

Տեխնիկական կանոնակարգեր: Միության շրջանակում մշակվում և հաստատվում են բազմաթիվ տեխնիկական կանոնակարգեր (սննդի տարբեր տեսակների, ավտոմեքենաների, կոսմետոլոգիական արտադրանքի և զանազան այլ ապրանքների ու ոլորտների համար): Անկեղծ լինենք. նման կանոնակարգեր փոքր երկրները ոչ միայն առարկայական պատճառներով չեն կարող մշակել և հաստատել, այլև դա նպատակահարմար չէ միասնական շուկայի պարագայում: Բազմաթիվ պետություններ վերալիազորում են այդ գործառույթը վերպետական կառույցներին, որոնք ունեն նյութական և մասնագիտական ավելի մեծ կարողություններ առաջադրված խնդիրները լուծելու համար:

Տեխնիկական կանոնակարգերն ունեն ինչպես անվտանգության, այնպես էլ կարգավորման բաղադրիչ: Աշխարհի բազմաթիվ պետություններ օգտագործում են սույն գործիքը սեփական արտադրողների ու ներքին շուկայի, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության համար: Այդ գործիքից լայնորեն օգտվում են նաև ԵԱՏՄ անդամ մյուս պետությունները: Հայաստանը պարտավոր է և պետք է օգտվի այդ կանոնակարգերից՝ ներքին շուկայի անվերահսկելիությունը վերացնելու և սպառողների ու հանրության շահերը պաշտպանելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պատրաստ լինի կանոնակարգերի միջոցով աջակցելու սեփական արտադրողներին:

Մրցակցություն և գնումներ: ԵԱՏՄ առանձին գործառույթներից է իր տարածքում մրցակցության և գնումների համակարգին հասանելիության ապահովումը: Ընկերությունները, որոնք ԵԱՏՄ որևէ երկրում գնումների մրցույթներին մասնակցելու ժամանակ հանդիպում են խոչընդոտների կամ անարդար մրցակցության, կարող են դիմել իրենց պետական կառույցներին՝ ԵԱՏՄ մարմիններում այդ հարցերը քննարկելու և լուծելու համար: Հայաստանի տնտեսվարողները Կառավարության աջակցությամբ պետք է ամեն ինչ անեն գնումների այդ հսկայական շուկայից սեփական մասնաբաժինը ունենալու համար:

Արտաքին տնտեսական հարաբերություններ: Միությունը բավական գրավիչ է այլ երկրների համար ազատ առևտրի պայմանագրեր կնքելու առումով: Միանշանակ է, որ առանձին փոքր երկրները հետաքրքրություն չեն ներկայացնում մեծ պետությունների համար, բայց երբ խոսքը 180 միլիոնանոց շուկայի մասին է, ապա իրավիճակը բոլորովին այլ է:

Հենց առաջին տարում ստորագրվեց ազատ առևտրի պայմանագիր Վիետնամի հետ, իսկ 2019 թվականին ուժի մեջ մտավ ազատ առևտրի համաձայնագիրը Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Այդ համաձայնագրի վրա աշխատանքը սկսվել էր դեռ 2015 թվականին՝ Հայաստանի Հանրապետության նախաձեռնությամբ ու ակտիվ մասնակցությամբ: Շատերի գնահատմամբ՝ գործընթացը բավական երկար տևեց, սակայն, հաշվի առնելով Իրանի առանձնահատկությունները, նման փաստաթղթի ստորագրման նախապատրաստումը չէր կարող կարճ տևել:

Նկատի ունենալով Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ ԵԱՏՄ մյուս պետությունների հետ միասնական սահմանի բացակայությունը, Իրանի հետ սահմանակից լինելը, ինչպես նաև Հայաստանին՝ որպես փոքր շուկա ու տնտեսություն ունեցող երկրի, աջակցության ցուցաբերման անհրաժեշտությունը՝ բանակցությունների նախապատրաստական փուլում պայմանավորվածություն էր ձեռք բերվել Հայաստանի և ԵԱՏՄ-ի միջև, որ ողջ փաթեթի քննարկման ժամանակ բանակցող թիմը նկատի է ունենալու Հայաստանի Հանրապետության շահերը, որոնք բանակցությունների ժամանակ չեն կարող լինել սակարկման կամ զիջման առարկա: Եվ որպես դրա առաջին քայլ՝ 2015 թվականի ամռանը բանակցող թիմը Երևանում հանդիպումներ ունեցավ Իրանի հետ աշխատող հայ գործարարների, ինչպես նաև ՀՀ շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների հետ:

Միասնական շուկաներ: ԵԱՏՄ աշխատանքի հաջորդ մեծ ուղղությունը աշխատուժի, ապրանքների և ծառայությունների ազատ տեղաշարժի խնդիրներն են, ինչպես նաև առանձին ոլորտների միասնական շուկաների ձևավորումը:

Որքան էլ նշվի աշխատուժի ազատ տեղաշարժի բազմաթիվ խոչընդոտների մասին, այնուամենայնիվ եղած ուղղություններից առավել մեծ առաջընթաց հենց այստեղ է արձանագրվում: Ինչ վերաբերում է ապրանքներին, ապա այս դեպքում խնդիրներն ավելի շատ տեխնիկական են, բյուրոկրատական, կամ առկա են ընթացիկ աշխատանքի թերացումներ: Հատուկ ուշադրության դաշտում է ծառայությունների ոլորտի ազատականացումը, որտեղ աշխատանքը պետք

է լինի խիստ փուլային և հաշվի առնի բազմաթիվ այլ խնդիրներ: Այսպես, ըստ ՀՀ օրենսդրության ստացած թույլտվությունների իրավաբանական կամ առողջապահական ծառայություններ մատուցողը կարո՞ղ է արդյոք ընդունելի լինել ԵԱՏՄ մյուս անդամ պետությունում և հակառակը: Սրանք հարցեր են, որոնք կարիք ունեն մանրակրկիտ ուսումնասիրման:

Ապրանքների ազատ տեղաշարժը հաճախ հանդիպում է մյուս երկրներում կիրառվող սահմանափակումներին: Դրանց մի մասը ԵԱՏՄ շրջանակում ձեռք բերված արտոնության հետևանք է, իսկ մյուս մասը հաճախ չի բխում ԵԱՏՄ օրենսդրությունից: Երկու դեպքում էլ առկա է հակասություն ազատ տեղաշարժի սկզբունքների հետ, որի հաշվառումն ու մշտադիտարկումը իրականացնում է ԵՏՀ Կոլեգիան՝ այն աստիճանաբար վերացնելու նպատակադրությամբ:

Հարկ է նկատի ունենալ, որ միասնական շուկաների հարցը երկկողմանի է: Մի կողմից Հայաստանին ձեռնտու է շինարարության, էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում միասնական շուկայի ձևավորումը: Մյուս կողմից պետք է հասկանալ, թե որքան են մրցունակ հայկական ընկերությունները (օրինակ՝ շինարարական կազմակերպությունները կամ բեռնատար ավտոփոխադրողները), կամ դրանք գոյություն ունե՞ն արդյոք (օրինակ՝ օդային փոխադրողները), որպեսզի փոխադարձության սկզբունքով կարողանանք ազատականացնել այդ շուկաները և ձևավորել միասնական պայմաններ: Օրինակ՝ Բելառուսը կցանկանար օդային փոխադրումների ազատականացում, որպեսզի իր ազգային փոխադրողով մտներ ԵԱՏՄ մեծ շուկա և տաներուղևորահոսքի իր մասնաբաժինը: Հայաստանը, ազատականացումներ կատարելով, բացում է իր շուկան օտարի համար՝ ստանալով որպեսական արդյունք, սակայն դժվարացնում է սեփական ընկերությունների գործը: Այդպիսի մի քայլ տարիներ առաջ արդեն արվել էր օդային փոխադրումների ոլորտում, որտեղ կեղծ ազատականացումը հանգեցրեց օտարների մենաշնորհի, ազգային ճյուղի ջախջախմանը և Հայաստանից դեպի օտար տնտեսություններ տարեկան մոտ կես միլիարդ դոլարի չափով արտահոսքի:

Էներգետիկ շուկայի դեպքում խնդիրն այլ է. միասնական շուկան կարող է բարձրացնել կանխատեսելիությունը և կայունությունը, սակայն առաջացնել գայթակղություն՝ միասնական շուկայի պայմաններում դադարեցնելու սեփական հզոր ռեսուրսների զարգացումը, օրինակ՝ հրաժարվելով նոր ատոմակայանի կառուցումից կամ Իրանից գազի ներկրման ծավալների ավելացումից:

Միասնական շուկան ունի մեկ այլ ռիսկային կողմ ևս: Տարբեր մասնագիտությունների մարդիկ ցանկանում են ունենալ ազատ տեղաշարժի և աշխատանքի հնարավորություն մեծ պետություններում: Սակայն փոքր պետություններն արդյունքում դիմագրավում են աշխատանքային արտագաղթի սաստկացման մարտահրավերին:

Հետևաբար եզրակացությունը մեկն է՝ այդ ազատականացումները Հայաստանին անհրաժեշտ են, քանի որ Հայաստանն ունի փոքր շուկա, և տեղական ընկերությունները զարգանալու համար կարիք ունեն ավելի լայն հնարավորությունների, սակայն, այդ ազատականացումներին զուգահեռ, երկիրը պետք է ձևավորի սեփական մրցունակ ռեսուրսները, այլ ոչ թե գայթակղվի օտարների ծառայություններից օգտվելով՝ ավելի աղքատացնելով պետությունն ու տնտեսությունը և վերացնելով զարգանալու վերջին շանսերը:

Ինչպե՞ս են աշխատում ԵԱՏՄ երկրները

ԵԱՏՄ-ի ներսում ամենամեծ խնդիրը «վերմակը» իր կողմը քաշելու ցանկությունն է, որից երկրները պետք է հրաժարվեն: Նման տրամադրվածությամբ աշխատանքը անպտուղ է, քանի որ հեշտությամբ բացահայտվում է և արժանանում մյուս պետությունների դիմադրությանը: Այսպես, երկրները պայքարում են իրենց տնտեսվարողների համար անհրաժեշտ ոլորտների ազատականացման համար, սակայն համառում են, երբ կարող են ազատականացվել այնպիսի ոլորտներ, որոնց միջոցով իրենց ներքին շուկա կարող են ներխուժել այլ անդամ պետությունների ընկերություններ:

Ճիշտ ճանապարհը հետևյալն է. Եվրասիական տնտեսական միությունում տեղական ընկերությունները պետք է կուտակեն համապատասխան պաշար՝ արտաքին շուկաներ ներխուժելու համար, և եթե ազատականացում է ընթանում առանձին ոլորտում, ապա այն պետք է հավասարապես գործի բոլոր երկրների համար, լինի ալկոհոլի, սիգարետի, հրուշակեղենի թե առողջապահական ոլորտը, տրանսպորտային ծառայությունների շուկան կամ աշխատուժի տեղաշարժը:

Արձանագրենք որպես փաստ՝ ԵԱՏՄ երեք հիմնադիր պետությունները առարկայորեն ավելի արդյունավետ են օգտվում ԵԱՏՄ-ի կողմից ընձեռվող հնարավորություններից: Սա ունի իր բացատրությունը: Նախ չմոռանանք, որ այդ պետությունները համատեղ սկսել են աշխատել դեռ նախորդ ինտեգրացիոն կազմակերպություններում: Նրանք չունեն լեզվական հաղորդակցության խնդիր, պետական համակարգը համեմատաբար ավելի քիչ է վարակված նեոլիբերալության «բացիլով» (թեև նույնպես կրում է հետխորհրդային նեոլիբերալ գաղափարախոսության կործանարար ազդեցությունը), իսկ պետությունները դեռ պահում են կարգավորման որոշակի լծակներ (թեև դժվար է դա անվանել իրական պետական կարգավորմամբ կառավարման մոդել, քանի որ 1990-ականների համակարգային և արժեքային փլուզումը չէր կարող անհետ անցնել):

Հայաստանի պարագայում կարելի է ասել, որ անդամակցության հարցով զբաղվող պետական

կառավարման բարձրաստիճան պաշտոնյաները բավական լավ պատկերացնում էին ԵԱՏՄ-ն և լավագույնս ու, որքան հնարավոր էր այդ սեղմ ժամկետներում, արդյունավետ իրականացրին անդամակցությունը:

Բարձր մակարդակի է երկրների առանձին մարմինների, մասնավորապես՝ հարկային և մաքսային ծառայությունների միջև համագործակցությունը, այդ թվում՝ թվային տեխնոլոգիաների գործադրմամբ:

Մյուս կողմից հասարակության ու բիզնեսի (բացառությամբ խոշոր բիզնեսի) ներկայացուցիչները, ինչպես նաև պետական կառավարման համակարգի միջին և ցածր օղակները նվազ պատկերացում ունեն ԵԱՏՄ-ի մասին: Բավարար չեն գործարարներին աջակցության մեխանիզմները: Հաճախ հենց գործարարները տեղյակ չեն ԵԱՏՄ հնարավորություններից օգտվելու ուղիների մասին: Նույնը վերաբերում է Եվրասիական տնտեսական դատարանի կողմից, որը կազմված է յուրաքանչյուր երկրից ներկայացված երկու դատավորից, ընձեռվող հնարավորություններին:

Պետական մարմինների առնչությամբ այլ խնդիրներ էլ կան. պետության նեոլիբերալիզացիայի հետևանքով պետական կառավարման համակարգը դադարել էր մտածել որպես պետական կառավարիչ կամ կարգավորիչ, և շատերի մտածելակերպը դժվարությամբ էր (է) տրանսֆորմացվում (ձևափոխվում) տնտեսության կարգավորման մեխանիզմների ու պետության շահերի ապահովմամբ զբաղվող պատասխանատու մարդու հայացքի:

Որքան էլ տարօրինակ կարող է թվալ, սակայն առաջին տարին բացահայտեց մեկ այլ անսպասելի խնդիր: Խիստ դժվար է պետական համակարգի միջին և ցածր օղակներում գտնել մարդկանց, որոնք միաժամանակ տիրապետում են ռուսերենին, իրենց ոլորտին, գործարար հաղորդակցման և բանակցությունների արվեստին, կարող են հստակ ներկայացնել ու պաշտպանել սեփական երկրի դիրքորոշումը: Բոլոր մակարդակների պաշտոնյաները՝ սկսած տեղերում աշխատանքային խմբի անդամներից, այլ երկրների հետ աշխատելիս (ի դեպ, դա վերաբերում ոչ միայն ԵԱՏՄ-ի, այլ նաև այլ պետությունների հետ հարաբերություններին) պետք է լավագույնս ճանաչեն նաև նրանց ներքին բարքերն ու ավանդույթները, միջգերատեսչական ու ներգերատեսչական հարաբերությունները, տիրապետեն միջպետական շփումների մշակույթին՝ այդ ողջ պատրաստվածությանը գումարելով սեփական երկրի դիրքորոշումը հստակ ու ճիշտ մատուցելու և պաշտպանելու ունակությունը:

Ամփոփում

ԵԱՏՄ-ն բավական լավ դպրոց է բոլոր մակարդակների պետական պաշտոնյաների ու գործարարների համար՝ ինտեգրման մեծ գործընթացում աճելու և սովորելու համար, ինչը կօգնի



նաև այլ շուկաներ մտնելու ժամանակ: Այն կարող է նաև մտածելակերպ փոխել պետական համակարգում, որտեղ պաշտոնյաները դուրս կգան «դիտողություններ և առաջարկություններ չունենք» փակուղուց և կդադարեն հավատալ «պետությունը չպետք է միջամտի, շուկան կկարգավորի» հեքիաթին, կսովորեն արտաքին տնտեսական հարաբերություններ վարել, հասկանալ սեփական երկրի տնտեսական շահերը, պայքարել դրանց համար ինչպես ԵԱՏՄ-ում, այնպես էլ ԵԱՏՄ-ի միջոցով՝ երրորդ երկրում:

Միայն ԵԱՏՄ-ին անդամակցության փաստը ոչինչ չի տալիս և չի կարող տալ անդամակցող պետությանը: Սա հնարավորություն է, որից կամ օգտվում ես, կամ՝ ոչ:

Վերջում մի կարևոր հաստատում՝ առանց փակագծերը բացելու: Միշտ բոլորին հետաքրքրել է՝ Հայաստանն ունա՞կ է արդյոք ինքնուրույն պաշտպանելու իր շահերը մեծ կառույցներում, կամ երկիրը չի՞ ենթարկվում արդյոք ճնշումների: Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության այն շրջանում, որին լավատեղյակ եմ, երբեք որևէ ճնշում չի եղել Հայաստանի նկատմամբ: Հայաստանի խնդիրները միշտ ըմբռնումով է ընկալվել անդամ պետությունների կողմից: Եթե խնդիրը լիարժեքորեն ներկայացվել ու մատուցվել է, ապա գործընկեր պետությունները երբեք չեն պնդել Հայաստանի Հանրապետության շահերից չբխող մոտեցումները: Եթե առկա են որոշակի խնդիրներ, ապա հարկավոր է սովորել ապրել ու աշխատել մեծ աշխարհում՝ դիմագրավելով մարտահրավերներին և օգտվելով այդ աշխարհի ընձեռած հնարավորություններից ու բարիքներից, այլ ոչ թե ամփոփվել սեփական տարածքում և մեղադրել ողջ աշխարհին սեփական խնդիրների համար: ■

«Դրօշակ»-ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր

Աւօ Գաթրճեան

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութիւնը այս տարի կը բոլորէ իր հիմնադրութեան 130-ամեակը:

ՀՅԴ հիմնադրութեան 130-ամեակը բնականաբար առիթ է գօտեպնդուելու յոբելենական տարուան խորհուրդով, մասնաւորաբար՝ վերանորոգելու մեր ուխտը, մեր հաւաքական յանձնառութիւնը, ինչպէս նաև հաւատարիմ մնալու ազգին ծառայելու նուիրական արժէքներուն ու անոր աւանդներուն:

Անկասկած յոբելենական տարին առիթ է նաև վերարժևորելու, ինքնասրբագրումի, ինքնաքննադատութեան և հաշուետուութեան տարի մը ըլլալու մեր համախումբ կեանքի և պայքարի երթին մէջ:

Վերոնշեալ լոյսին տակ խիստ կարևոր է բնականաբար ծանօթանալ ՀՅ Դաշնակցութեան՝ 130-ամեայ այս կուսակցութեան գաղափարական վճիտ աղբիւրը եղող հայ մարդու աշխարհահայեացքին, ցանկութիւններուն և երազներուն:

Իսկ ո՞ւր կարելի է գտնել այդ բոլորը, եթէ ոչ դաշնակցական մարդու, մարտնչող հայ մարդու ձայնն ու գրիչը, խօսքն ու գրաւոր արտայայտութիւնը ամփոփող հրատարակութիւններու մէջ, որոնց հարազատ մէկ օրինակն է ՀՅ Դաշնակցութեան օրգանը՝ «Դրօշակ»ը, որ այսօր՝ 129 տարիներ յետոյ, երբ կանգնած է 130-ամեակի սեմին կարճ ընդհատումէ մը ետք կրկին լոյս կը տեսնէ:

Դաշնակցական պաշտօնաթերթ ըլլալու հանգամանքը պէտք է ընկալել պաշտօնական խօսք փոխանցելու պարտաւորութեան իմաստին զուգահեռ, ժողովուրդի լայն խաւերու այլազան հետաքրքրութեանց բաւարարութիւն տուող լրատուութիւն և զուգահեռաբար մեկնաբանութիւն կատարող թերթի հասկացողութեամբ, առանց ոչ մէկ պարագայի զիջելու Դաշնակցութեան հիմունքները հանդիսացող իր դիմագիծէն:

Մամուլը միայն զինք հովանաւորող մարմնի պաշտօնաթերթը չէ, այլ նաև համակուսակցական, համազգային, համամարդկային, անկիւնադարձային, նոյնիսկ որոշ տարողութեամբ աւելի փոքր մտահոգութիւններ ու խնդիրներ արտայայտող բաց բեմ է:

Արդարև, ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»ի ուղին լուսարձակի տակ առնելու համար անհրաժեշտ է յետադարձ ակնարկով իրազեկ դառնալ անոր անցած ուղիին, հանգրուան առ հանգրուան:

Երբ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կը հիմնուի Թիֆլիսի (Կովկաս) մէջ 1890-ին և հաղորդագրութեամբ մը կ՚աւետէր իր



«ԴՐՕՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, ԺԸՆԵՒ, ՔՐԻՍՏԱՓՈՐԻ ՕՐՈՎ

ծնունդը, «Մանիֆեստ» և «Թռուցիկ թերթ» հրատարակութիւններով հիմը կը դրուի դաշնակցական առաջին թերթին, որուն կը յաջորդէ պաշտօնական օրգան «Դրօշակ»ի լոյսընծայումը (առաջին թիւերը հրատարակուած են Թիֆլիսի մէջ 1891-ին մայիսին և սեպտեմբերին, «Դաշնակցութեան գաղտնի տպարան»էն): «Դրօշակ»ի 3րդ թիւը լոյս կը տեսնէ Քոնսթանցայի (Ռումանիա) մէջ 1892-ին: Այնուհետև, թիւ 4էն սկսեալ (1893), կը հրատարակուի Եւրոպայի ամէնէն ազատական երկրին՝ Զուիցերիոյ Ժընև քաղաքին մէջ մինչև 1914, երբ ժամանակաւորապէս կը դադրի՝ վերահրատարակուելու համար տասնամեակ մը ետք:

1898-ին «Դրօշակ»ի խմբագրութեան շուրջ համախմբուած էր Դաշնակցութեան Արևմտեան բիւրոն:

Այս յառաջաբանով կը հաստատենք, որ «Դրօշակ»ը՝ իբրև ամսաթերթ, երկրորդ անգամ

վերստին հրատարակուած է 1925-1933-ին Փարիզի մէջ, Սիմոն Վրացեանի և Արշակ Ջամալեանի խմբագրութեամբ:

1891 մայիսէն մինչև 1931 մայիս հրատարակուած է 308 թիւ «Դրօշակ»:

«Դրօշակ» երրորդ անգամ 1969-1985-ին իբրև ՀՅԴ Բիւրոյի պաշտօնաթերթ հրատարակուած է Պէյրութ՝ «Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ» անունով, խմբագիրներ ունենալով Բարգէն Փափազեանը և Սարգիս Ջէյթլեանը:

«Դրօշակ»ի չորրորդ ժամանակաշրջանը կը ճշդորոշուի 1986-2005 թուականները, իբրև խմբագիր՝ Նազարէթ Պէրպէրեան: 1986 ապրիլէն՝ իբրև երկշաբաթաթերթ, սակայն վերջին քանի մը տարիներուն՝ իբրև եռամսեայ:

Իսկ հինգերորդ ժամանակաշրջանի «Դրօշակ»ը կը սկսի հրատարակուիլ յուլիս 2007-ին Երևանի մէջ, այս անգամ կրկին ընդհատուելով 2011 թուականի յուլիսին: Լոյս կը տեսնէ ամսական դրութեամբ՝ գլխաւոր խմբագիր ունենալով հայրենի գրող-արձակագիր, շարժապատկերագիր, հրապարակախօս, թարգմանիչ, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ Ռուբէն Յովսէփեանը, իսկ խմբագիր՝ դոկտ., փրոֆ. Կարէն Խանլարեանը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բ Ընդհանուր ժողովը (1898, Թիֆլիս) որոշած էր տանիլ քարոզչական աշխատանք արտասահմանի մէջ՝ եւրոպական քաղաքական շրջանակներու վրայ ազդեցութիւն ձգելու նպատակով: Այս ծրագրի կենսագործման համար Ժընև կ'երթայ Քրիստափոր Միքայէլեան, որ կը բարձրացնէ մակարդակը «Դրօշակ» թերթին՝ Ակնունիի, Ահարոնեանի և տաղանդաւոր այլ մտաւորականներու աշխատակցութեամբ: Այսպիսով, «Դրօշակ» հետզհետէ կը ստանայ նոր որակ:

Քրիստափոր Միքայէլեան «Դրօշակ»ի համար կ'ապահովէ նաև աշխատակցութիւնը օտար հայասէրներու, ինչպէս՝ Ժան Ժորես, Ֆրանսիս տը Փրեսանսէ, Անաթոլ Ֆրանս, Փիեռ Քիառ և ուրիշներ:

Արդարև, ժամանակի ընթացքին ՀՅ Դաշնակցութեան գաղափարախօսութեան, նպատակներուն և իրագործումներուն բեմը կը դառնայ «Դրօշակ»ը՝ դրսևորելու դաշնակցական նկարագիրը: Բարոյական ըմբռնումներուն, յեղափոխական արարքներուն, քաղաքական մտածողութեան հայելին՝ «Դրօշակ» տասնամեակներ շարունակ իրարայաջորդ սերունդներու դաստիարակութեան աղբիւր պիտի հանդիսանար:

«Դրօշակ»՝ իբրև տպագիր մամուլի մէկ անդամը, գոյատևած է կարգ մը ընդհատումներով:

Թերթը հերթական հինգ ժամանակաշրջաններու մէջ լոյս տեսած է և աշխարհագրական տարբեր շրջաններու մէջ: Ընդհատումները և վայրի փոփոխութիւնները բնականաբար ունեցած են իրենց պատճառները:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ամբողջական և առարկայական պատմութիւնը հոն գրի առնուած է: Անկասկած, լրատուական և գաղափարախօսական խիստ կարևոր և արխիւային փաստերու հիման վրայ շարադրուած կոթողային աշխատութիւն մըն է ան, հակառակ այն իրողութեան, որ բազմաթիւ դէպքեր, դէմքեր, նոյնիսկ բազմաթիւ իրողութիւններ ալ պարզապէս գրի առնուած չեն:

Հոն ներառուած են գաղափարական, քաղաքական, յեղափոխական, մարտական, ռազմական, կուսակցական, ընկերային և այլ նիւթեր, որոնք կը հետաքրքրեն իւրաքանչիւր դաշնակցական՝ համեստ շարքայինէն սկսած մինչև պատասխանատու մարմիններ: Հոն բանաձևուած են գաղափարներ, որոնք մէկս կը զատորոշեն միւսէն: Գաղափարներ, որոնք նկարագիր կու տան մարդոց, որոշ խառնուածք մը կը բնորոշեն և ի վերջոյ կը ճշդեն մարդոց տեսակը այս աշխարհին մէջ:

ՀՅԴ կուսակցութեան և հայ ժողովուրդի անցած ուղին ու յեղափոխական ժառանգութիւնը ներկայացնելուն ու ամբողջական աշխատանք դառնալուն կոչուած այս հրատարակութիւնը վերածուած է գաղափարական և ազգային-հայրենասիրական ուղղութիւն և մտածողութիւն տարածելու հիմնական հարթակի՝ սերունդէ սերունդ:

ՀՅ Դաշնակցութեան լրատուական և գաղափարական հրատարակութեան՝ հայ ժողովուրդի պատմութեան ճակատագրական ժամանակաշրջաններու վկայագրութիւնը կը սկսի 1891 թուականի մայիսին:

«ԴՐՕՇԱԿ» Ի ՇՈՒՐՋ ՀԱՒԱՔՈՒԱԾ ՌՍԱՆՈՂ ԸՆԿԵՐՆԵՐ ԵՒ ՀԱՄԱԿԻՐՆԵՐ - ԺԸՆԵՒ 1896

ՀՅ Դաշնակցության դերը Արցախի պետականության վերակերտման գործում (1890-2020 թթ.)

Վահրամ Բալայան

Հրապարակվող նյութի հեղինակը Արցախի Հանրապետության Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության անդամ է, Աժ փոխնախագահը, մասնագիտությամբ՝ պատմաբան:

19-րդ դարի 80-ական թվականներին ռուսահպատակ հայաշատ վայրերում, մասնավորապես՝ Թիֆլիսի հեղափոխական խմբերի, տվյալ պարագայում նարոդնիկների ազդեցության տակ ձևավորվեցին ընդհատակյա մանր կազմակերպություններ: Այդ խմբակներում որոշակի դերակատարություն ուներ Դաշնակցության ապագա հիմնադիրներից մեկը՝ Քրիստափոր Միքայելյանը, որին հաջողվեց երիտասարդներին ուղղորդել դեպի ազգային հիմնահարցերն ու լծել հայրենիքի ազատագրության գործին:

Այդպիսի մի խմբակ էլ՝ «Ուժ» անունով, 19-րդ դարի 80-ական թվականներին ստեղծվել էր Շուշիում:

«Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը» հիմնադրվեց շուրջ մեկուկես ամիս (1890 թ. հուլիսի երկրորդ կեսից մինչև օգոստոսի վերջը) տևած հիմնադիր ժողովներում: Հիմնադիր ժողովները որոշեցին միավորել արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր կազմակերպություններին, խմբակներին ու անհատներին և ստեղծել «Հայ Յեղափոխականների Դաշնակցություն» կուսակցությունը: 1890 թ. սեպտեմբերի սկզբներին լույս տեսավ կուսակցության «Մանիֆեստը»:

Կազմվեց Դաշնակցության կենտրոնական վարչությունը, որի անդամներն էին Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Աբրահամ Դաստակյանը, Հովհաննես Լոռու-Մելիքյանը և Լևոն Սարգսյանը: Վերջինս ծագումով Արցախից էր: Ծնվել և մեծացել է Շուշիում, բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայում: 1880-ական թվականներին գլխավորել է Մոսկվայի հայ ուսանողների հեղափոխական գործունեությունը: Լևոն Սարգսյանը «Երկրականներ» ուսանողական խմբի հիմնադիրն է: 1890-ական թվականների սկզբներին նա վերադառնում է հարազատ Շուշի, դառնում Արցախում ՀՅԴ հիմնադիրներից մեկը: Շուշիի առաջադեմ ուժերի ճնշմամբ Լևոն Սարգսյանին նշանակում են թեմական դպրոցի տեսուչ: Թեմականում նա նոր աստիճանի է բարձրացնում ազգային դաստիարակության հարցը: Լևոն Սարգսյանի նկատմամբ հետադիմական ուժերը հալածանքներ են սկսում: Նրան հեռացրին աշխատանքից՝ մեղադրելով անաստվածության մեջ: Լևոն Սարգսյանի հետ դպրոցից հեռացավ ողջ ուսուցչական կազմը: Ազգային-հեղափոխական գործունեության համար դպրոցից հեռացրին նաև մի խումբ աշակերտների:

ՀՅԴ Արցախի կազմակերպության գրասենյակի շենքը Ստեփանակերտում

Չնայած այդ ամենին՝ Լևոն Սարգսյանի և դաշնակցական մյուս գործիչների թողած հունդերը թեմական դպրոցում պտղավորվեցին: Այն դարձել էր ազատագրական շարժման գործիչների դարբնոց: Այստեղ կրթություն ստացան և որպես անհատականություններ ձևավորվեցին ազատագրական պայքարի պայծառ դեմքեր, դաշնակցական գործիչներ Եգոր Առուստամյանը (Մենակ), Թուման Թումյանցը (Թորգոմ), Նիկոլ Պողոսյանը (Իշխան), Նիկողայոս Տեր-Հովհաննիսյանը (Նիկոլ Դուման), Սարգիս Հովհաննիսյանը (Արամ Մանուկյան), Վարդան Մեհրաբյանը (Խանասորի Վարդան), Գրիգոր Միրզաբեկյանը (Մածուն Խեչո) և ուրիշներ: Սկզբում նրանք ազատագրական գաղափարները տարածեցին աշակերտների և համերկրացիների շրջանում: Այդ նպատակով սկսեցին հրատարակել «Կոկոն» ձեռագիր թերթը:

Հեղափոխական քուրայում իմաստնացած այդ գործիչները, բազում դարերի ընթացքում ազատագրական պայքարի և պետականաշինության ասպարեզում արցախահայության կուտակած

ՀՅԴ 33-րդ Ընդհանուր ժողովի բացման նիստը ԼՂՀ Ազգային ժողովի նիստերի դահլիճում

հարուստ կենսափորձը Դաշնակցության ազգային գաղափարախոսության հետ համադրելով, կարողացան որակապես փոխել հայության մտածելակերպն ու ապագայի նկատմամբ ունեցած տեսլականը:

Մի առիթով Դրոն Նիկոլ Դումանի մասին գրել է. «Հայ ազատագրական պայքարի հերոսներուն մեջ չկար մեկը, որ անոր մտքի պատրաստութիւնը ունենար»{1}, իսկ Աբրահամ Գյուլխանդարյանի վկայությամբ՝ «….հայ մարտական երիտասարդութեան պաշտամունքը» Նիկոլ Դումանն էր{2}:

20-րդ դարի սկզբներին արևմտահայության ազատագրական պայքարին նոր որակ հաղորդեցին դաշնակցական երկու գործիչներ՝ շուշեցի Արամ Մանուկանը և քռասնեցի Իշխանը:

1906 թ. Վանի կուսակալ Թահիր փաշան, իր մոտ հավաքելով ոստիկանության և զինվորականության ղեկավարությանը, ասել է. «Շատ-շատ վտանգաւոր կացութեան մէջ ենք. մենք մեզ չխաբենք: Անշուշտ նույնքան, եթե ոչ անոր տասնապատիկը պահեստներ կը գտնուին լեռներու մէջ, Իշխանի տրամադրութեան տակ և վտանգաւոր Արամը՝ շրջաններն ալ զինուած ու ցրած ուժեր ունի և մեր գլխուն փորձանք կը պատրաստէ: …Հոս միայն մէկ թշնամի կայ, որ գիտէ թե ինչ կուզէ. Ան արժանի է փաշա կոչուելու, Արամն է: Հոն լեռներու մէջ բէկ կայ, Իշխանն է: Ասոնք փեթակներու մայրը և այժմ թե քաղաքի և թէ գիւղերու առաջնորդներն են…»{3}:

Դաշնակցության գաղափարների տարածման կենտրոններ դարձան Շուշիի կրթամշակութային հաստատությունները: Այդ շարքում իր ուրույն տեղն ուներ Ռեալական ուսումնարանը: Այդ դպրոցի շրջանավարտներից էին Միքայել Հովհաննիսյանը (Միքայել Վարանդյան) և Վահան Նավասարդյանը: Միքայել Վարանդյանը Ժնևի, իսկ Վահան Նավասարդյանը Պետերբուրգի համալսարանն ավարտելուց հետո իրենց ողջ կյանքը նվիրեցին հայ ժողովրդի ազատագրության և Դաշնակցության ազգանպաստ գործին:

Եթե Նիկոլ Դումանը, Արամ Մանուկյանը հայ ժողովրդի ազատագրական պայքարի և պետականության վերակերտման գործնական կազմակերպիչներ էին, ապա Հոնան Դավթյանը, Միքայել Վարանդյանն ու Վահան Նավասարդյանը, ըստ էության, Դաշնակցության ազգային-քաղաքական և գաղափարական-ռազմավարական ուղին ուրվագծող գործիչներ էին:

Արցախում ազգային-ազատագրական գաղափարների տարածման և հայ հեղափոխական ուժերի համախմբման գործում մեծ էր ՀՅԴ «Ապառաժ»-ի դերակատարությունը:

Ազգային պետականությունից զրկված հայության հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային-կրթական կյանքն ինքնահոսի չմատնելու և այն ուղղորդելու նպատակով Դաշնակցությունը տեղերում ստեղծեց ոստիկանական, դատական, կրթական մարմիններ:

1905 թ. Պ. Բարսեղյանը ՀՅԴ Արցախի կառույցի մասին գրել է. «Գիւղերը կազմակերպւում էին համայնական ձևով, ամբողջ գիւղի համայնքը-գիւղական մարմինները ընտրում էին ազդեցիկ մարդկանցից, պրոպագանդիստ-շրջիկները աշխատում էին, որ մարտիկների մէջ չլինեն վաշխառուներ և այլ վնասակար տարրեր, զանազան տեղեր եղել են ենթակոմիտէներ, զինուորական ներկայացուցիչներ, դատաւորներ: Այդ շրջանում կազմակերպութիւնը հանդիսացել էր իբրև մի կառավարութիւն իր բոլոր ֆունկցիաներով»{4}:

Ցարական Ռուսաստանի հատուկ ծառայություններն այդ օրերին, հետևելով և ուսումնասիրելով ՀՅԴ պետականաշեն գործունեությունը, նկատել են, որ «….դաշնակցությունն ինքնին ներկայացնում է ինչ-որ պետություն պետության մեջ… ոչ մեկ հեղափոխական կուսակցություն (բացառությամբ դեռ ոչ լրիվ քողազերծված «Միջազգային հրեական միության»), չունի այն բարդ կազմակերպությունը, ինչպես հայկական դաշնակցությունը: Նայելով կազմակերպության ուրվագծին՝ մենք տեսնում ենք հանրապետական ձևի պետական մեխանիզմի կմախք: Պետական այդ կմախքը, ի դեմս իր աշխատողների, ներակայացնում է ոչ այլ ինչ, եթե ոչ հայկական պետության պաշտոնյաների կազմ…»{5}:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Հայաստանի ինքնավարությանն առնչվող հարցը Դաշնակցության կողմից այնքան ակտիվորեն էր քննարկվում և հանրայնացվում, որ հայ հեղափոխականների նկատմամբ նախատեսվող պատժամիջոցների վերաբերյալ ցարը նույնիսկ կառավարության նիստ էր հրավիրել: Գոլիցինն առաջարկում էր հայ «անջատողականներից»

ազատվելու նպատակով նրանց ազգովի աքսորել Սիբիր: Սակայն զինվորական նախարար Կուրոպատկինը կանխեց խելահեղ այդ ծրագիրը: Նա կառավարության նիստի ժամանակ, դիմելով ցարին, ասաց. «- Ի՞նչ եք կարծում, Ձերդ պայծառափայլություն, որքան կլինի հայ խռովարարների թիվը մի այնպիսի հայաբնակ կենտրոնում, ինչպիսին Շուշին է կամ Երևանը:

- Մոտավորապես 50 կլինի:

- Այո՛, համարյա այդքան:

- Ես ընդունում եմ նույնիսկ,- ավելացրեց նախարարը,-կրկնապատիկը՝100: Եվ կարծում եմ, որ «հայկական շարժումը» արմատախիլ անելու ամենալավ միջոցն է՝ կալանավորել այդ 100 խռովահույզներին, դուրս բերել երկրից և աքսորել Սիբիր: Դրանով դուք կատարելապես ազատած կլինեք երկիրը վտանգից առանց աքսորելու մի ամբողջ ժողովուրդ»{6}:

20-րդ դարի սկզբներին արցախահայությունն իր ազատության և անկախության ուղիներում հայտնվեց առավել ծանր իրավիճակներում:

Դարասկզբին դա հիմնականում կապված էր 1903 թ. հունիսի 12-ի Նիկոլայ Երկրորդի տխրահռչակ հրամանագրի հետ, որով բռնագրավվեցին հայ լուսավորչական եկեղեցու կալվածքներն ու գույքը: Այսրկովկասի հայաշատ վայրերում ապստամբական տրամադրություններ էին տիրում: Հակակառավարական պայքարի մեջ ներքաշվեց նաև արցախահայությունը: 1903 թ. սեպտեմբերի 8-ին նահանգապետ Լուցաուն 500 կազակների ուղեկցությամբ Գանձակից հասնում է Շուշի և փորձում ի կատար ածել կառավարության որոշումը: Ժողովրդի դիմադրությանը կազակները

ՀՅԴ Երիտասարդական միության անդամները Շուշիում

պատասխանում են կրակոցներով: Ընդհարումների ժամանակ երկու կողմից եղան սպանվածներ և վիրավորներ: Զինված դիմադրությունը շարունակվեց մի քանի օր: Ձերբակալվեց ավելի քան 120 մարդ: Քաղաքում ռազմական դրություն մտցվեց:

Դաշնակցության «Ապառաժ»-ի կառույցը վճռեց վրեժխնդիր լինել արյունալի ընդհարումների կազմակերպիչներից: Ահաբեկման ենթարկվեց Գանձակի փոխնահանգապետ Անդրեևը, Շուշիում սպանվեցին գավառապետ Շումակովիչը, ժանդարմ Պոդշիվալովը, գաղտնի ոստիկան Խասիևը, գանձարանի պաշտոնյաներ Բադիևը և Կոպրունովը:

Ցարական իշխանությունների դեմ դիմակայության ալիքը չէր մարել, երբ 1905-1906 թթ. նույն ուժերի կողմից սանձազերծվեցին ազգամիջյան ընդհարումներ: Այդ տագնապի ծանր օրերին պետականությունից ու սեփական իշխանությունից զուրկ հայ ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու բարդ և պատասխանատու գործը ստանձնում է «Հայ Հեղափոխական Դաշնակցությունը»: «Եվ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ քաղաքական ցնցումների վայրկյաններում»{7}: Այդ օրերին այդպիսի սկզբունքով էր գործում ՀՅԴ անվեհեր մարտիկ Նիկոլ Դումանը:

Այսրկովկասի հայաշատ վայրերը պաշտպանելու նպատակով Նիկոլ Դումանը ծրագիր ներկայացրեց, ըստ որի՝ ամեն մի գյուղ և շրջան պետք է ստեղծեր ինքնապաշտպանական ջոկատ, սակայն խմբապետը պետք է լիներ ոչ տեղացի փորձառու ֆիդայիներից մեկը:

Նիկոլ Դումանը քաջ գիտակցում էր, որ ֆիդայական ջոկատներով հնարավոր չէ դիմակայել թուրք-թաթարական բազմահազար զինված ավազակախմբերին և նրանց աջակցող ցարական կանոնավոր զորքերին: Այդ նպատակով մշակվում և շրջանների ինքնապաշտպանական խմբերին ներկայացվում է 4 մասից և 33 կետից բաղկացած «Հրահանգ» շրջաբերականը: Առանց ազգային պետության գոյության՝ Դաշնակցությանը հաջողվել էր ստեղծել 16 հազարանոց բանակ:

Մուսավաթական Ադրբեջանի հիմնադիրներից մեկը՝ Աղաևը, Դաշնակցությանը ցարական իշխանությունների առաջ վարկաբեկելու նպատակով 1906 թ. փետրվարի 27-ին Կովկասի փոխարքայի մոտ խորհրդակցության ժամանակ նշել է. «Դաշնակցությունը 15 տարի գոյութիւն ունի, իմացանք, որ հիանալի մաուզէրներ ունի, մի ամբողջ արմիա, այն ժամանակին կռուում էր Թիւրքիայի դէմ, երէկ՝ կառաւարութեան դէմ, էսօր՝ մեր՝ թուրքերիս դէմ...»{8}:

ՀՅԴ Արևելյան բյուրոն Արցախում

կազմավորում է զինվորական մարմին, որը գլխավորում էր ղշլաղեցի Սարգիս Մեհրաբյանը (Խանասորի Վարդան): Նրան հանձնարարված էր կազմակերպել Արցախի և Սյունիքի հայության ինքնապաշտպանական մարտերը: Զինվորական մարմնի որոշմամբ՝ Արցախը, ըստ գավառների, բաժանվեց պաշտպանական շրջանների, որոնց հրամանատարներ նշանակվեցին փորձառու ֆիդայիներ: Վարանդայի պաշտպանությունը կազմակերպում էին Հայրում Վարդանյանը, Արամայիսը (Միսաք Տեր-Դանիելյանը) և Մածուն Խեչոն: Խաչենի շրջանի հրամանատարն էր Համազասպը:

Զինվորական շրջաններն իրենց հերթին բաժանվում էին ենթաշրջանների:

Այդպիսի գործելակերպն Այսրկովկասի տարբեր բնակավայրերում թուրքերին ստիպեց սպիտակ դրոշ պարզել և սկսել բանակցություններ: Այդ ամենի շնորհիվ հայությունը փրկվեց վերահաս զանգվածային ջարդերից:

1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո նախկին Ռուսական կայսրության ողջ տարածքում քաղաքական նոր իրավիճակ է ստեղծվում: Տեղերում զգալի էր անիշխանության մթնոլորտը: Նախկին իշխանության մարմինները կազմալուծվեցին: Արցախի բնակչության մտահոգությունը փարատելու, երկրամասում կարգ ու կանոն հաստատելու իրավասու իշխանություն ստեղծելու նպատակով ՀՅԴ Արցախի կառույցը նպատակահարմար գտավ գործող բոլոր քաղաքական ուժերի ջանքերի միավորմամբ կյանքի կոչել լիազոր մի մարմին, որը «գործելու է իբրև Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանություն, և որի հիմնական նպատակն էր կազմակերպել ժողովրդին, վերջ տալ գլուխ բարձրացրած անիշխանությանը և բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունը և համերաշխությունը երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների միջև»{9}: «Քաղաքական լուրջ անհրաժեշտություն էր նույնպես, որ Ղարաբաղի հայության կառավարող օրգանն իր կազմով լիներ այնպիսին, որ կարողանար հավատ և վստահություն ներշնչել նաև հարևան մուսուլմանությանը»{10}:

Նախախորհրդարանական աշխատանքներից հետո՝ 1917 թ. դեկտեմբերի 24-ին Շուշիում կայացած հայ քաղաքական ուժերի հավաքն ստեղծեց տեղական իշխանության մի մարմին, որն անվանվեց Նոր հեղափոխական կուսակցությունների և կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ: Այդ մարմինը հետագայում վերանվանվեց Միջկուսակցական բյուրո: Այն օժտված էր օրենսդիր և գործադիր գործառույթներով: Որոշվեց համամասնական սկզբունքներով կառավարության կազմում ներառել տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների:

ՀՅԴ 33-րդ Ընդհանուր ժողովի կազմը Ստեփանակերտում

Փոխադարձ համաձայնությամբ 5 պորտֆելներ տրվեցին Դաշնակցությանը, իսկ մնացած կուսակցությունները՝ մենշևիկները, էսէռները, բոլշևիկները, ներկայացվեցին երեքական անդամներով: Խորհրդի նախագահ ընտրվեց դաշնակցական Հայրապետ Մուսայելյանը:

Վերոհիշյալ փաստերն ու դեպքերի զարգացման ընթացքը մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ 1917 թ. դեկտեմբերին՝ անդրկովկասյան 3 հանրապետությունների ծնունդից մի քանի ամիս առաջ, Արցախում դրվեց պետական մի միավորի հիմք, որն ամբողջական տեսք ստացավ արցախահայության առաջին համագումարում՝ 1918 թ. հուլիսին: Այն ուներ պետությանը հատուկ բոլոր ինստիտուտները՝ օրենսդիր մարմին, գործադիր, դատական իշխանություն, բանակ, մայրաքաղաք:

Պատահական չէ, որ 1918 թ. ապրիլին Անդրկովկասյան սեյմը Լեռնային Ղարաբաղին տվել էր ազատ շրջանի կարգավիճակ: Մինչև Արցախում խորհրդային կարգերի հաստատումը արցախահայությունը, Դաշնակցության գլխավորությամբ պայքարելով Թուրքիայի և Ադրբեջանի զավթողական ծրագրերի դեմ, պաշտպանեց պետականությունը՝ հուսալով, որ կգա նաև ՀՀ-ին վերամիավորվելու ժամը:

1917-1920 թթ. Արցախում ազգային պետության գոյության փաստի հետ բոլշևիկները ստիպված հաշվի են նստել՝ Լեռնային Ղարաբաղի հայությանը տալով ինքնավար կարգավիճակ:

Ոչ հեռավոր անցյալի պատմական այս իրադարձությունները խոսում են այն փաստի մասին, որ Արցախը որևէ կապ չի ունեցել Ադրբեջանի 1918-1920 թթ. հանրապետության հետ, և այսօր այդ հանգամանքը պետք է ծառայեցվի ԱՀ միջազգային ճանաչմանը:

Արցախում խորհրդային կարգերի հաստատվելուց հետո, չնայած դաշնակցական գործիչները հիմնականում հեռացել էին երկրամասից, այնուամենայնիվ Արցախի ազատագրման և Հայաստանի հետ վերամիավորման հարցը կուսակցության համար մնում էր օրակարգային:

Այդ կապակցությամբ Ռուբեն Տեր-Մինասյանը գրել է. «ՀՅ Դաշնակցությունը, իբրև հայ ժողովրդի հույսի և հավատի խտացում, չի դավաճանած Գանձակ-ղարաբաղցիին, ընդառաջ է գացած անոր բաղձանքին և ամեն տագնապալի վայրկյանին իսկ չէ մոռացած զայն: Այսօր ալ իր հալածական վիճակին մեջ, իր ծրագրին մեջ ունի հին Արցախ գավառներուն ազատագրումը: Այդ ծրագիրն ինքը չէ հղացած, այլ քաղած է Ղարաբաղի ժողովրդի կամքեն»{11}:

1920-ական թվականների սկզբներին արցախահայության ազատագրական պայքարը համակարգում էր Թավրիզում 1921 թ. ստեղծված «Ղարաբաղի ազատագրման» միությունը: Դաշնակցության ջանքերով գաղտնի ճանապարհով Արցախում են հայտնվում այդ միության գործիչները, որոնք տեղում հայրենասեր ուժերի հետ փորձում էին ժողովրդի մեջ կենսունակ պահել ազատագրական շարժման գաղափարները:

Մինչև 1929 թ. Թարթառի մերձակա անտառներում, Ջրաբերդում, Էրքեջ, Բուզլուխ և Գետաշեն գյուղերի մոտակայքում Գրիգոր Դանիելյանի, Մովսես Քոթիևի, Սերգեյ Բալայանի, Ալեքսանդր Տեր-Սարգսյանի գլխավորությամբ գործում էին զինված ջոկատներ:

1925-1927 թթ. Արցախում ապստամբական շարժումները կանխելու նպատակով Ստեփանակերտում, Շուշիում և շրջկենտրոններում զանգվածային խուզարկություններ ու ձերբակալություններ են կատարվել: Բռնի ուժով հայ գյուղացիության շրջանում եղած զենքը և զինամթերքը բռնագրավվում էին:

1920-ական թվականների կեսերին Արցախում հակաադրբեջանական շարժումը ղեկավարելու նպատակով Դաշնակցության ջանքերով ստեղծվել է «Ղարաբաղը Հայաստանին» միությունը: Այն իր բջիջներն ուներ ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև Գանձակի հայկական շրջաններում: Միության հետ համագործակցության համար 500 հոգու ձերբակալել էին:

Ազատագրական շարժման գործիչները Շուշիի շրջանում պահեստ-արհեստանոց էին հիմնել: 1930 թ. արտակարգ հանձնաժողովի կողմից ձերբակալվել են 17 զինագործ վարպետներ: Առգրավվել են 6 թնդանոթ, 30 գնդացիրներ և այլ տեսակի զենքեր ու զինամթերք: Ապստամբել էին Խծաբերդի բնակիչները: Ջորքերը փորձել էին ճնշել ապստամբությունը, բայց չէր հաջողվել: Արցախում համաժողովրդական հուզումները ճնշելու համար Բաքվից մեծ թվով զորքեր էին տեղափոխվել:

1931 թ. Միր Ջաֆար Բաղիրովը ԼՂԻՄ մարզկոմի ղեկավարությանը մեղադրեց նացիոնալիզմի, նացիոնալ ուկլոնիզմի, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու փորձերի և Դաշնակցության գաղափարների դեմ չպայքարելու մեջ: Նրա հրահանգով 1937 թ. մարտ- ապրիլ ամիսներին Ստեփանակերտում «բացահայտվեց»,

ՀՅԴ Արցախի պատանիները

այսպես կոչված, նացիոնալիստական հակախորհրդային խմբավորում: Մի շարք պաշտոնյաների հեռացրին աշխատանքից և դատի տվեցին՝ մեղադրելով Դաշնակցության հետ ունեցած կապերի, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմին և կառավարությանը զրպարտելու, ԼՂԻՄ շահերը Ադրբեջանի Հանրապետության շահերին հակադրելու մեջ:

Միր Ջաֆար Բաղիրովի կողմից շրջանառության մեջ դրվեց «Ադրբեջանի անբաժանելի մաս հանդիսացող Լեռնային Ղարաբաղ» արտահայտությունը: Դա առ այսօր օգտագործվում է Ադրբեջանի տարբեր տրամաչափի պաշտոնյաների կողմից:

Չնայած բռնաճնշումներին՝ Դաշնակցության գաղափարները ժողովրդի մեջ ապրեցին և 1980-ական թվականների բարենպաստ պայմաններում հանրային ընկալման առավել լայն շրջանակներ ունեցան:

1985 թ. մինչև 1988 թ. փետրվարը ՀՀ և ԼՂԻՄ բնակավայրերում եղան մարդիկ, որոնք փորձում էին Արցախի՝ Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորման հարցը նորից առարկայական դարձնել: Ըստ էության, հենց այդ մարդիկ դարձան Արցախյան շարժման կազմակերպիչներ: Իգոր Մուրադյանի կարծիքով՝ նրանց թիվը հասնում էր մոտ 100-ի, որոնցից 32-ը դարձան Դաշնակցության մեծ ընտանիքի անդամներ: Այդ երիտասարդներից շատերը հետագայում դարձան Դաշնակցության Արցախի կառույցի հիմնադիրներ և փայլուն մարտական ճանապարհ անցան: Շատերն էլ իրենց կյանքը զոհաբերեցին այդ ճանապարհին:

Ձենքի առաջին խմբաքանակը Արցախ հասավ 1988 թ. ՀՅԴ արտասահմանյան կառույցների միջոցով: Իգոր Մուրադյանը հետագայում գրել է.

«Ըստ էութեան, զէնքի հարցն արմատապես լուծուեց 1989 թ. վերջին ՀՅ Դաշնակցութեան կուսակցական կառույցների կազմակերպմամբ»{12}:

Ձինված պայքարին զուգընթաց անհրաժեշտ էր նաև որոնել և գտնել հարցի լուծման իրավական ճանապարհները: Այդ նպատակով կազմակերպվեց ժողովրդական հանրաքվե, այնուհետև ընդունվեցին խորհրդային և կուսակցական մարմինների համապատասխան որոշումներ: Այդ ամենի բարձրակետը դարձավ 1988 թ. փետրվարի 20-ին կայացած մարզխորհրդի արտահերթ նիստում ընդունված՝ ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու պատմական որոշումը: Սակայն դեպքերն այլ հունով ընթացան:

Արդեն ակնհայտ էր, որ ԽՍՀՄ-ը՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, կդադարի գոյություն ունենալուց:

1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հռչակագիր ընդունեց 1918-1920 թթ. Մուսավաթական հանրապետության սահմաններում անկախ պետականության վերականգնման մասին: Մյուս կողմից էլ ՀՀ ՀՀՇ-ական իշխանությունը լրիվ չէր կողմնորոշվել Արցախի՝ Հայաստանին վերամիավորման՝ համայն հայության պահանջի հարցում: 1991 թ. սեպտեմբերի 2-ին Մոսկվայում կայացած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ նստաշրջանում Լ. Տեր-Պետրոսյանը միայն պահանջեց բարձրացնել ինքնավար մարզի կարգավիճակը: Ստեղծված անորոշության պայմաններում ապագա արհավիրքներին դիմակայելու, բնակչության անվտանգությունն ապահովելու, Արցախի ճակատագիրը կանխորոշելու համար շարժման ղեկավարները տվյալ պահի համար ճիշտ ու հստակ որոշում կայացրին:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջան, որտեղ ընդունվեց «Հռչակագիր ԼՂՀ հռչակման մասին»: Այդ որոշումը հաստատվեց 1991 թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպված հանրաքվեով: Հարցման մասնակիցների 99.89 տոկոսն արտահայտվեց ԼՂՀ հռչակման օգտին: Հաջորդ քայլը պետական համակարգի ձևավորումն էր: Այդ բախտորոշ ժամանակահատվածում Դաշնակցությունն իր վրա պատասխանատվություն վերցրեց և գլխավորեց Արցախում պետականության վերակերտման գործընթացը:

1991 թ. դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները, որոնց արդյունքներով ընտրվեցին 56 պատգամավորներ: Նրանցից 23-ը դաշնակցականներ էին: Անկուսակցական պատգամավորների զգալի մասը հարում էր Դաշնակցությանը: 1992 թ. հունվարի 8-ին դաշնակցական Արթուր Մկրտչյանն ընտրվեց ԳԽ առաջին նախագահ:

Չնայած Գերագույն խորհրդի պատգամավորների մեծ մասը ՀՅԴ անդամներ էին, ԱՀ-ում գործող բոլոր քաղաքական ուժերին համախմբելու, թշնամու դեմ համաժողովրդական ճակատ ստեղծելու և ՀՀՇ-ական իշխանությունների հետ հարաբերությունները կանոնավորելու նպատակով նախարարական պորտֆելները, այդ թվում՝ վարչապետի, հանձնվեցին հանրապետությունում գործող այլ ուժերի ներկայացուցիչներին:

Անհրաժեշտ էր զրոյից ստեղծել պետական մի համակարգ, որը պատերազմական պայմաններում պետք է կենսունակ լիներ: Նորաստեղծ պետական այդ համակարգը, ժողովրդին առաջնորդելով, անհնարինը հնարավոր դարձրեց՝ մի քանի անգամ գերազանցող ուժեր ունեցող թշնամու նկատմամբ ապահովելով փայլուն հաղթանակ:

Հետպատերազմյան տարիներին (1994-2007թթ.) Դաշնակցությունը իր պետականաշեն գործունեությունը ծավալեց ընդդիմադիր դաշտում՝ փորձելով օրվա իշխանություններին մղել ժողովրդանպաստ որոշումների կայացմանն ու իրագործմանը:

2007-2020 թթ. Դաշնակցությունը դարձավ իշխանության հետ համագործակցող ուժ: Դժվարություններով և որոշ բացասական երևույթներով հանդերձ Դաշնակցության գնահատմամբ այդ տարիները ընդհանուր առմամբ արգասաբեր էին:

Պատմությունը թարմ հետքերով շարադրելն անշնորհակալ գործ է: Հուսով ենք, որ նոր ուսումնասիրողները վերջին տասնամյակի զարգացումների վերաբերյալ իրենց խոսքը կասեն, որում, անկասկած, նորագույն շրջանի պետականաշինության կայացման գործում Դաշնակցության տեղն ու դերը զգալի կլինի:

Դաշնակցությունը անհատի կուսակցություն չէ. այն ծնվել է ժողովրդի պահանջով և այսուհետ ևս կծառայի ժողովրդին:

Օգտագործված Աղբյուրներ

1. «Հայրենիք», Պոսթըն, 1964, հմ. 8, էջ 49:
2. Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Երևան, 2001, էջ 5, 62:
3. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Ե, Երևան, 1990, էջ 267-268:
4. Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, Պեյրութ, 2007, էջ 303:
5. Նույն տեղում, հ. Բ, էջ 332:
6. Բալայն Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության 1813-2007թթ., Ստեփանակերտ, «Սոնա» հրատարակչություն 2012, էջ 60:
7. Նիկոլ Դուման, Նախագիծ ինքնապաշտպանության, Երևան, 1992, էջ 7:
8. «Արշալոյս», Թիֆլիս, 1906, հմ. 46:
9. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-20), պատմական ակնարկ, Երևան, 2008, էջ 51:
10. Նույն տեղում, էջ 50:
11. Ռուբեն, Գանձակ Ղարաբաղի վեճը, «Դրօշակ», 1926, հմ. 2, էջ 52:
12. «Ազդակ», բացառիկ համար, Բեյրութ, 1998, փետրվար, էջ 126:

Ջավախքի հիմնահարցերը (մաս 2-րդ)

Վրեժ Նահատակյան

Ազգային-քաղաքական հիմնահարցեր, մոնոէթնիզացման գործընթացը Վրաստանում

Ջավախքում ներկայումս ընդհանուր գծերով շարունակվում է այն նույն խտրական քաղաքականությունը, որն առկա է եղել մշտապես: Փաստենք, որ հակահայկական դրսևորումներն առավել խորացան Մ. Սահակաշվիլու կառավարման վերջին տարիներին, որոնք որոշ խմբագրումներով շարունակվում են նաև այսօր:

Վրացական այս ձուլման քաղաքականության մեջ ներգրավված են և՛ աշխարհիկ, և՛ կրոնական իշխանությունները, ինչպես և առկա է թուրք-ադրբեջանական կողմի ցուցաբերած բազմաոլորտ աջակցությունը և անթաքույց խրախուսանքը:

Մատնանշելով վրաց միջավայրում տեղի ունեցող քարթվելիզացման, միաէթնիկ հանրություն ձևավորելու (մոնոէթնիզացիա) և ոչ քարթվելական ժողովուրդներին կլանելու էթնոձուլման գործընթացը՝ փաստենք, որ այսօր ևս այն չի ավարտվել: Ավելին, չունենալով բնական աճի բարձր տեմպեր, սեփական շարունակականությունը դարերով ապահովելով այլ ժողովուրդներին կլանելու միջոցով և այսօր սպառած լինելով կենսատու ժողովուրդների պաշարը (չափազանց նվազել կամ երկրից գրեթե վերացել են հույները, հրեաները, ռուսները, օսերը, աբխազները և այլն), քարթվելական միջավայրն այսօր կանգնած է ծանրագույն խնդրի առաջ: Փաստենք, որ, 2002 թ. մարդահամարի արդյունքերի (4371535) համեմատությամբ, 2014 թ. երկրի բնակչությունը (3713800) կրճատվել է 15 %-ով (657735-ով): Եվ սա ոչ այնքան սոցիալ-տնտեսական խնդրի և դրանով պայմանավորված արտագաղթի որքան երկրում տեղի ունեցող էթնոձուլման գործընթացների դանդաղելու կամ խիստ նվազման, այն է՝ ազգաբնակչության շրջանում ոչ քարթվելական ժողովուրդների վերացման, անջատման կամ լրջորեն նվազման և մյուս կողմից՝ քարթվելական ժողովուրդների բնական աճի գրեթե բացակայության հետևանք է:

Եվ ահա վերոնշյալ խնդրի ժամանակավոր լուծման միակ ճանապարհը, ըստ վրաց աշխարհիկ և հոգևոր վերնախավի, ջավախահայության ներգրավումն է քարթվելիզացման գործընթացի մեջ: Այդ իրողությունն ավելի ուրվագծվեց վերջին տարիներին, երբ, ինչ-որ չափով հզորանալով, վրացական կողմը գործի դրեց պետական, կրոնական, կրթական, մշակութային, տնտեսական զինանոցը:

Այստեղից պարզորոշ է, թե ինչու է Վրաստանում, ի տարբերություն աշխարհի որևէ այլ պետության, արգելված հայկական գրքի տեղափոխումը, քանի որ, կրկին ի տարբերություն մնացած բոլոր

պետությունների, Վրաստանում այլ ժողովուրդների ուծացման գործընթացը տեղի է ունենում ոչ թե բնական, այլ ստիպողական, արհեստական ճանապարհով:

Հպանցիկ հայացք նետելով ներկա Վրաստանի տարբեր վայրերում տեղի ունեցած հայության ուծացման երևույթի վրա՝ նշենք, որ ջավախահայությունը այդ գործընթացի վերջին օղակն է, իսկ առկա դիմադրողականությունը պայմանավորված է ջավախահայության՝ բնիկ ժողովուրդ լինելու հանգամանքով և խորհրդային շրջանում ձևավորված հայկական կրթական միջավայրի ազդեցությամբ (այդպիսի իրավիճակ ստեղծվել էր նաև Թիֆլիսում, որտեղ նույնպիսի միջավայրի վերացմամբ պայմանավորված, թիֆլիսահայության շրջանակներում ևս լայն թափ է ստացել ուծացումը):

Հայերենի իրավական բացակայության հարցեր

Վրաստանը մինչ օրս չի վավերացրել «Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան» (Ստրասբուրգ, 05.11.1992), ինչի հետևանքով էլ՝ փոքրամասնությունների լեզուների (մեր պարագայում՝ հայերենի) իրավական կիրառման հարցը հայերով խիտ բնակեցված նշյալ տարածքներում ներկայումս շարունակում է մնալ չկարգավորված: Ջավախքի հայ բնակչությունն իրեն չի համարում եկվոր, և դասական իմաստով «գաղթօջախ» հասկացությունը խորթ է այս ժողովրդին: Այդ է պատճառը, որ, գտնվելով միջնադարյան կիսանկախ կամ անկախ պետական

կազմավորման (Սամցխեի իշխանապետության (աթաբեկության)), ցարական Ռուսաստանի Թիֆլիսի նահանգի, Խորհրդային կամ անկախ Վրաստանի կազմում, ջավախքյան միջավայրում վրացերենն ու վրաց մշակույթը լայն տարածում չեն գտել, և այսօր ջավախահայության 95 %-ը չի տիրապետում Վրաստանի պետական լեզվին՝ վրացերենին, իսկ հայերենի կարգավիճակի բացակայությունը երկրի օրենսդրական ակտերի, իրավաբանական ձևաթղթերի և պետական մարմինների հետ շփումներին առնչվող բոլոր տիպի փաստաթղթերի հայերեն տարբերակների բացակայության պատճառ է:

Այս իրողությունները առաջացնում են.

. Քաղաքացիական մեկուսացվածություն. երկրի օրենքներին անհաղորդ լինելու հանգամանքը ստիպում է մարդկանց խուսափել պետական օղակների հետ շփումներից:

. Նահանգային-տեղական իշխանական մարմիններում հայության ընդգրկվածության բացակայություն. չնայած իր պատկառելի թվաքանակին՝ Ջավախքի հայությունը խիստ անբավարար չափով է ներկայացված ինչպես քաղաքային, այնպես էլ նահանգային կառույցներում: (Հիշեցնենք՝ Է. Շևարդնաձեի՝ 1994 թ. հուլիսի 31-ի հրամանագրով կազմավորվեց Սամցխե-Ջավախքի նահանգը, և Ախալցխան դարձավ նահանգային կենտրոն: Ցավոք, հայահոծ նահանգի մեջ չներառվեց Ծալկայի շրջանը, որի հայաբնակ հատվածի՝ պատմական Վերին Ծալկայի հայությունը ջավախահայության անքակտելի մասն է՝ թե՛ աշխարհագրական դիրքի առումով, թե՛ արեալային ենթաէթնիկ հանրույթին բնորոշ հատկանիշներով (բարբառ, սովորույթ, նիստուկաց, ծեսեր, տարազ և այլն):

. Ջավախահայ երիտասարդության արտագաղթ. ինչպես հայտնի է, բազմաթիվ երիտասարդներ, ավարտելով հայկական դպրոցներ և մասնագիտանալով հայկական բուհերում, մեծ մասամբ չեն վերադառնում և խուսափում են աշխատանքի համար Ջավախքի իրենց բնակավայրերի հաստատություններ դիմում

ներկայացնել. հիմնական պատճառը կրկին հայերենի կարգավիճակի բացակայությունն է և որակավորման կամ լիցենզավորման համար վրացերենի խստիվ պարտադրումը: Այս երևույթը հատկապես ծանր է անդրադառնում կրթական, առողջապահական և իրավական ոլորտներ դիմող երիտասարդ կադրերի վրա, որոնք գրեթե զրկվում են հայրենի բնակավայրերում սեփական մասնագիտությամբ աշխատանք գտնելու հնարավորությունից:

. Ջավախքում վրացական տարրի զանգվածային աճ. պարզորոշ է, որ հայերենի իրավական կիրարկման բացակայության պայմաններում աշխատանքից զրկվող հայ մասնագետների տեղում առաջացած վակուումն արագորեն լցվում է Վրաստանի տարբեր շրջաններից մեծ արտոնություններով Ջավախքում աշխատանքի անցնող ազգությամբ վրացի մասնագետներով, ինչն էլ էականորեն փոխում է Ջավախքի ժողովրդագրական պատկերը:

. Արհեստական դժվարություններ. հայերենով անհրաժեշտ փաստաթղթերի և գրագրության բացակայությունը Ջավախքի հայ ազգաբնակչության և պետական կամ ոչ պետական հիմնարկությունների միջև իրավահարաբերություններում ստեղծում է բազմաթիվ դժվարհաղթահարելի խնդիրներ:

. Պատկան օղակների կողմից թույլ տրված չարաշահումներ. օրենքների ու իրավական փաստաթղթերի (պայմանագրեր, հարկային և մաքսային հայտարարագրեր, նոտարական գործարքներ, տարբեր հաշվետվություններ և այլն)՝ մայրենի լեզվով բացակայությունը և, փաստորեն, տարածաշրջանի հայ ազգաբնակչության համար այդ փաստաթղթերի անհասկանալի լինելը հանգեցնում են համապատասխան հիմնարկության պաշտոնյաների կողմից չարաշահումների: Ձեռքերի լիակատար ազատության պայմաններում այդպիսի պաշտոնյաները (որոնց գերակշիռ մասը վրացի է) տեղի հայ բնակչության հետ իրավահարաբերություններում հաճախ առաջնորդվում են ոչ թե օրենքի պահանջներով, այլ սեփական քմահաճություններից և շահերից ելնելով:

. Պետության հանդեպ տածած անվստահության խորացում. լեզվական խոչընդոտների և պետության կողմից փոքրամասնության լեզվի համար սահմանված արտոնությունների բացակայության պայմաններում տարածաշրջանի հայության քաղաքացիական մեկուսացումը դառնում է պետության հանդեպ առկա անվստահության խորացման պատճառ:

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2005 թ. ընդունված՝ կրթության մասին նոր օրենքով որոշում կայացվեց Վրաստանի բոլոր ոչ վրացալեզու դպրոցներում ներդնելու ուսուցման երկլեզու համակարգը, որով փուլ առ փուլ նախատեսվում է անցնել վրացալեզու դասագրքերով ուսուցման: Երկլեզու (բիլինգվիստական) համակարգի

արդյունավետությունը խիստ կասկածելի է ողջ աշխարհում: Այն դեռևս քննարկումների փուլում է, իսկ շատ հետազոտողներ այն համարում են փոքրամասնությունների՝ տիտղոսակիր ազգին դանդաղ կամ արագ ձուլման միջոց[1]: Ինչպես այս հանգամանքը, այնպես էլ այդ նպատակով Թիֆլիսում ստեղծված նոր դասագրքերը Ջավախքի բոլոր հայկական դպրոցներում առաջացրել են լրջագույն խնդիրներ՝ կապված նաև դասագրքերի տեխնիկական բազմապիսի թերությունների և բովանդակային անճշտությունների հետ:

Ինչպես պետական օղակների այլ աշխատակիցներ, Ջավախքի դպրոցների տնօրենները և ուսուցիչները ևս վերջին տարիներին բախվում են մեկ այլ լրջագույն խնդրի ևս, որն առնչվում է վրացերենով վերարակավորման քննությունների անցկացմանը:

Այսպիսով՝ տեղաբնիկ ազգության լեզվի՝ հայերենի կարգավիճակի բացակայության պայմաններում, ի թիվս այլ ոլորտների, լրջագույնս տուժում է նաև Ջավախքի կրթական համակարգը:

Դեռևս խորհրդային տարիներից Վրաստանի հայկական դպրոցներում չէր խրախուսվում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդումը, և այս հույժ կարևոր առարկան ուսուցանվում էր կամայականորեն կամ այլ դասաժամերի հաշվին: Հետխորհրդային շրջանում և հատկապես 2000-ական թթ. կեսերից սկսած, երբ դպրոցների նկատմամբ ուժեղացավ պետական մարմինների վերահսկողությունը, և դպրոցներն անցան երկլեզվյա ուսուցման, խստացվեց նաև «Հայոց պատմություն» առարկայի նկատմամբ վերահսկողությունը: Արդյունքում գրեթե բոլոր դպրոցներում դադարեցվեց առարկայի ուսուցումը: Ջավախքի հայկական դպրոցները վերջին տարիներին մեծապես տուժեցին նաև «Հայոց լեզու» և «Հայ գրականություն» առարկաների դասաժամերի կրճատումից:

Ջավախքի դպրոցների ու ընդհանրապես կրթամշակութային-հոգևոր կյանքի վրա խիստ բացասաբար է անդրադառնում Վրաստանի սահմանային անցակետերում գործող՝ գիր-գրականության և մշակութային այլ նյութերի ներմուծման բացարձակ արգելքը, որն առավել խստությամբ կիրառվեց 2009 թ. հետո, երբ գործարկվեցին սահմանային նորացված անցակետերը: Օրինակ՝ 2013/2014 ուսումնական տարվանից սկսած մինչ 2017/2018 ուսումնական տարին (շուրջ 5 տարի) Ջավախքի հայկական դպրոցներին գրականությամբ չի կարողացել օժանդակել նաև Հայաստանի Հանրապետությունը: Պատճառը կրկին սահմանային ու պետական արգելքներն էին: Թեև վերջին երկու-երեք տարվա ընթացքում մեծ ուշացումներով Ջավախք հասցվեցին որոշակի քանակությամբ դասագրքեր, այդուհանդերձ, այժմ վիճակը կրկին նույնն է:

Վրաստանը, արգելելով մայր պետությունից՝ ՀՀ-ից, գիր-գրականության, մամուլի և



կրթամշակութային այլևայլ նյութերի տեղափոխումը Ջավախք, խախտում է միջազգային փաստաթղթերով նախատեսվող մի շարք պահանջներ: Հավելենք, որ միջազգային կառույցների փաստաթղթերից մի քանիսը, որոնք անմիջականորեն առնչվում են ջավախահայերին, Վրաստանը դեռ չի վավերացրել, իսկ բոլոր վավերացված փաստաթղթերը երբեք գործնական կիրառություն չեն ստացել Վրաստանի իշխանությունների կողմից:

Ջավախքի բնակչությունը 1991 թ. մեծ վրդովմունք ապրեց Ախալցխայի գյուղատնտեսական տեխնիկումի՝ հայերեն լեզվով ուսուցմամբ հաշվապահական ֆակուլտետի փակման կապակցությամբ: Հավելենք նաև, որ վրաց պետական օղակները հետխորհրդային ողջ ժամանակահատվածում մերժել են Ջավախքում հայ-վրացական պետական բարձրագույն ուսումնական հաստատություն հիմնելու մասին ջավախահայության, որոշ փուլերում էլ՝ ՀՀ իշխանությունների առաջարկ-պահանջը: Նախկինում հատուկենտ հայկական մասնավոր կամ ներկայիս վրացական (Ախալցխայում) բուհերը չեն լրացնում բացը, և տեղի բազմահազար երիտասարդությունը ստիպված է լինում ուսումը շարունակել ՀՀ-ի (ՀՀ բուհերում սովորող ջավախահայ ուսանողների թիվը կազմում է մոտ 1,5 հազար) կամ Թիֆլիսի բուհերում: Արդյունքում շրջանավարտներից քչերն են հետ վերադառնում, և այս հանգամանքը խիստ բացասաբար է անդրադառնում Ջավախքի ժողովրդագրական պատկերի վրա: ■

Օգտագործված Աղբյուրներ

1- Այսպես, օրինակ, անդրադառնալով բիիլինգվալ (երկլեզու) կրթության տիպերին ու բնորդներին, հետազոտող Թամարա Վարդանյանը ներկայացնում է առարկայական երկլեզու կրթության տիպը, ըստ որի՝ մի շարք առարկաներ դասավանդվում են մեկ լեզվով, իսկ մի քանի այլ առարկաներ՝ մեկ այլ լեզվով: Հավելենք, որ Ջավախքի հայկական դպրոցները գնում են այդ ճանապարհով: Թ. Վարդանյանը, այդուհանդերձ, մատնանշելով անկախ փորձագետների կարծիքները, նշում է. «…Այս մեթոդն իրականում չի կարող ձևավորել երկլեզու անհատ: Եթե մշակութային արժեքների մի մասը միայն ընկալվում է մայրենի լեզվով, իսկ մյուս մասը՝ ոչ մայրենիով, ապա անհնար է ապահովել անհատի երկլեզվությունը, քանի որ այս պարագայում անհատի մոտ նշված լեզուներից որևէ մեկով մտածողությունն ու լեզվական ստեղծագործական միտքը չի զարգանում: Այս մեթոդը հանգեցնում է տարբեր երկրներում բնակվող ազգային փոքրամասնությունների ձուլմանը տիտղոսակիր ազգին» («Գլոբուս. Ազգային անվտանգություն», Երևան, 2010, թիվ 5, էջ 18-25):

Դերսիմն ու դերսիմահայերն այսօր

Տիրան Լոքմակյոզյան

Պատմական Հայաստանի Փոքր Ծոփք նահանգը, գտնվելով Մեծ Հայքի արևմտյան ծայրամասում, պատմության ընթացքում նվաճվել է տարբեր պետությունների կողմից: Սեֆյան Իրանի և Օսմանյան կայսրության միջև 1555 և 1639 թվականներին կնքված երկու պայմանագրերի համաձայն՝ այդ տարածքն անցել է Օսմանյան տիրապետության տակ: Հետագայում այն կոչվել է Դերսիմ: 1936 թ. անվանափոխվել է և կոչվել Թունջելի:

Գոյություն ունեն այս անվան ստուգաբանության տարբեր վարկածներ: Ակնհայտ է, որ տեղանունը բաղկացած է դեր և սիմ բառերից, որոնք պարսկական ծագում ունեն. դեր նշանակում է դուռ, իսկ սիմ՝ արծաթ: Ըստ այս վարկածի՝ անունն առաջացել է տարածաշրջանի՝ ազնիվ մետաղներով հարուստ լինելու պատճառով: Մի շարք աղբյուրների համաձայն էլ Դերսիմ անվանումն առաջացել է տեղի հայերի հոգևոր առաջնորդ Տեր Սիմոնի անունից. այս մասին գոյություն ունեն ավանդազրույցներ: Թուրքական աղբյուրներում կարելի է հանդիպել նաև այլ վարկածների, որոնք տրամաբանական չեն: Առավել համոզիչ է թվում առաջին տարբերակը:

Դերսիմի տարածաշրջանը թե Օսմանյան և թե Թուրքական տիրապետության ժամանակ միշտ եղել է գլխացավանք պետության համար: Այս տարածաշրջանի ժողովուրդները (հիմնականում հայեր և զազաներ) միշտ էլ եղել են ազատատենչ, չեն ընդունել որևէ օտար իշխանություն իրենց նկատմամբ և բազմիցս ապստամբել են իրենց զսպելու փորձերի դեմ: Այս փորձերից վերջինը ղեկավարում էր Թուրքիայի Հանրապետության նախագահ Մուստաֆա Քեմալ Աթաթյուրքը: Հանրապետության հռչակումից հետո նորաստեղծ պետության ղեկավարությունը, ճնշելով քրդական ապստամբությունները՝ հաճախ պետության կողմից հրահրված, 30-ականներին որոշեց մեկընդմիշտ լուծել անհնազանդ Դերսիմի հարցը:

Թուրքական պաշտոնական պատմագրության մեջ իշխող է այն տեսակետը, որի համաձայն՝ Դերսիմի դեմ պետության ձեռնարկած դաժան ռազմական միջոցառումները հետևանք էին «Դերսիմի ապստամբության»: Սակայն այսօր ի հայտ են եկել բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են, որ դեռևս 1935 թ. թուրքական իշխանությունները գաղտնի կերպով կատարում էին հետազոտական աշխատանքներ, որոնց հիմքի վրա կազմվեց Դերսիմի կիսանկախ վճակը վերացնելու ռազմական ծրագիրը: Դեռևս այդ փուլում նախատեսվել էր Դերսիմ անունը փոխարինել Թունջելիով: Թունջելի բառը կազմված է թունջ (պողպատ) և էլ բառերից (ձեռք), ինչը ակնարկ էր ապագա ռազմական գործողությունների բնույթի մասին՝ Դերսիմի հարցը լուծել պողպատե ձեռքով:

Այդպես էլ եղավ. դերսիմցիների ապստամբության կեղծ պատճառաբանությամբ (այսօր արդեն ճշտված)

Եկեղեցի ժայռի մեջ Դերսիմում

1937 թ. բանակը ներխուժում է Դերսիմի տարածք և երկու տարի շարունակ իրականացնում բացահայտ ցեղասպանություն, որին զոհ գնաց շուրջ 14 հազար մարդ (որոշ տվյալներով՝ մինչև 70 հազար), 12 հազար մարդ աքսորվեց. նրանք իրավունք ստացան իրենց բնակավայրերը վերադառնալ միայն 9 տարի անց, սակայն ով վերադարձավ, տեսավ, որ իր հողն ու տունը արդեն մեկ ուրիշին էր պատկանում:

Աքսորվածների երեխաները խնամքի և դաստիարակության համար հանձնվեցին թուրքական ընտանիքների. սա թուրքացման դասական ձևերից մեկն է, որը Հայոց ցեղասպանության շրջանում զանգվածաբար կիրառվել է հայ երեխաների նկատմամբ:

Այս գործողության գլխավոր պատճառներից մեկն էլ շրջանի հայերին ոչնչացնելն էր: Այստեղ հայերն ապրում էին անհիշելի ժամանակներից, նրանց զգալի մասն ընդունել էր ալևի կրոնը: Հայության թիվն ավելացավ 1915 թ. կոտորածներից մի կերպ ազատված և այստեղ ապաստանածների հաշվին: Հայերի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի և նրանց իշխանություններին չհանձնելու պատճառով իշխանությունները որոշել էին պատժել տեղի բնակչությանը՝ նրանց անխնա կոտորելով և բնակավայրերից աքսորելով:

Մինչև այսօր Դերսիմում հիշում են հայերի նկատմամբ իշխանությունների վայրագությունները. հազարավոր հայերի՝ ներառյալ երեխաներին, ձեռքերը կապել ու նետել են Քայրշողլու Յարմասը կոչվող ահասարսուռ անդունդը: Այս կոտորածներից մի կերպ փրկվածների հիմնական մասն ընդունեց ալևի կրոնը և ձուլվեց զազաներին: Աքսորից հետո Ստամբուլ տեղափոխված հայերի մի մասը վերադարձավ նախնյաց հավատին՝ դառնալով հայկական համայնքի անդամ:

Դերսիմում, մասամբ էլ Կ.Պոլսում և այլ վայրերում բնակվող հազարավոր ալևիացած հայեր թեև էականորեն հեռացել են հայ ինքնությունից և մշակույթից, սակայն վերջին տասնամյակներին Թուրքիայում նկատվող ազգային զարթոնքի ազդեցությամբ փորձում են վերագտնել իրենց արմատները: Նրանք հիմնել են նաև իրենց կազմակերպությունը՝ Դերսիմի հայերի

միությունը, որի հիմնադիրն ու առ այսօր գործող նախագահը Միհրան Փրկիչն է (ի դեպ՝ սա մկրտության անունն է, նա մկրտվել է 2010թ., ապա հիմնել միությունը):

Վերջին տարիներին մկրտության ճանապարհով իրենց ինքնությանը վերադառնալու դեպքերը բավականին շատ են ու խոսուն: Հատկապես Կ.Պոլսում հաստատված դերսիմահայ ընտանիքների մի մասը ջանում է երեխաներին ուղարկել հայկական դպրոցներ, որը Թուրքիայում գործող օրենքների պատճառով այնքան էլ հեշտ գործ չէ:

Այս ամենով հանդերձ՝ դերսիմահայերի հիմնական մասը դեռևս հեռու է արմատներին վերադառնալու մտքից: Սա ունի տարբեր պատճառներ:

Նախ՝ ի ծնե որպես ալևի ապրած և ալևիական մշակույթի մեջ ձևավորված մարդու համար խիստ դժվար է հրաժարվել ինքնությունից՝ հանուն իրեն անծանոթ մի այլ ինքնության:

Երկրորդ՝ Դերսիմի տարածաշրջանում տասնյակ տարիներ իշխող են ձախակողմյան (մարքսիստական, մաոիստական, կոմունիստական և այլն) հոսանքները, որոնք ըստ էության աթեիստական և ապազգային ուսմունքներ են: Տարբեր ազգերի և ցեղերի խառնարանում այս հոսանքները հնարավորություն են ընձեռում խուսափել ազգային բազմաբարդ խնդրի արծարծումից, ուստի իշխանությունների կողմից արժանանում են հանդուրժողական վերաբերմունքի:

Երրորդ՝ իշխող է այն տեսակետը, որի համաձայն՝ հայը կարող է լինել միայն քրիստոնյա: Ըստ այդմ շատերը (թե ալևի, թե մահմեդական), եթե անգամ գիտեն իրենց հայկական ծագման մասին, հեռու են մնում հայ իրականությունից:

Չորրորդ՝ շատերն էլ այդ քայլին չեն դիմում այն պարզ պատճառով, որպեսզի «չնեղացնեն» այլ կերպ մտածող իրենց հարազատներին, ազգականներին, ընկեր-բարեկամներին կամ հարևաններին:

Հինգերորդ՝ գլխավոր պատճառներից մեկն էլ վախն է: Օսմանյան կայսրության և արդի Թուրքիայի պատմության մեջ այդ երկրի փոքրամասնությունների նկատմամբ գործված բոլոր զանգվածային ոճրագործությունները կատարվել են կրոնական կամ ազգային հողի վրա: Այսօր էլ ազգային-կրոնական խնդիրը սուր է դրված, ուստի պատմությունը լավ հիշող բազմաթիվ դերսիմահայեր նախընտրում են ապրել՝ թաքցնելով իրենց ազգային պատկանելությունը կամ էլ ընդհանրապես չհիշել դրա մասին: Աթաթուրքն իզուր չի ասել՝ «Երանի Թուրք եմ ասողին»:

Վեցերորդ՝ կարևորագույն պատճառներից մեկն էլ Պոլսո հայոց պատրիարքարանի որդեգրած քաղաքականությունն է: Ժամանակին Պոլսո Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ Աթեշյանը հայտարարեց, թե չի ճանաչում դերսիմահայերին, քանի որ նրանք միություն են ստեղծել առանց իր հետ խորհրդակցելու: Մկրտվել ցանկացող դերսիմահայերից պահանջվում է, որ «ապացուցեն» իրենց հայ լինելը՝ լավ գիտենալով, որ ըստ Թուրքիայում գործող պետական ներքին հրահանգների՝ որևէ մեկը կարող է համանման տեղեկություն ստանալ միայն հոր և պապի վերաբերյալ, ավելի վաղ շրջանի տեղեկություն չի տրվում, իսկ Դերսիմի հայերից շատերը մի քանի սերունդ առաջ են ալևիացել և վաղուց կրում են թուրքական անուններ:

Յոթերորդ՝ մյուս «անհաղթահարելի» դժվարությունն այն է, որ այս մարդկանց առաջ պայման է դրվում մկրտվելուց առաջ մասնակցել վեցամսյա դասընթացի, ինչն, իհարկե, ունի ընդունելի բացատրություն, սակայն կարելի է նաև ելքեր գտնել, օրինակ՝ այդ դասընթացները կազմակերպել ոչ թե Կ.Պոլսո եկեղեցիներում, այլ համացանցով:

Ութերորդ՝ պետք է հատկապես ընդգծել այն հագեվիճակը, որ իշխում է ցեղասպանություն տեսած պոլսահայ համայնքում. շատերը փորձում են համակերպվել և ապրել «հանգիստ» լճացման պայմաններում, քան թե ձեռնարկել մի բան, որի հետևանքները կարող են վտանգավոր լինել: Թերևս այդ պատճառով է, որ Դերսիմի հայերը աջակցություն չստացան ոչ միայն վերջին հիսուն տարում հիմնականում գավառահայերից ձևավորված Կ. Պոլսո համայնքից, այլ նաև այստեղ բնակվող քրիստոնյա դերսիմահայերից:

Իններորդ՝ վիճակը տարբեր չէ նաև արտասահմանում ապրող դերսիմահայերի շրջանակում, նրանց մի մասը շարունակում է ապրել որպես ալևի, իսկ մյուսներն էլ առանձնապես չեն ոգևորվում իրենց հայրենակիցների վերադարձով:

Տասերորդ՝ այս կարևորագույն պատճառի արմատները Դերսիմում կամ Պոլսում չեն. դա Դերսիմի և, ընդհանրապես, բոլոր կրոնափոխ հայերի ճակատագրի նկատմամբ համայն հայության վերաբերմունքն է: Խոսքը վերաբերում է հատկապես ազգային կառույցներին՝ Հայաստանում և ի սփյուռս: Երբ Միհրան Փրկիչը մկրտվեց և իր գաղափարակիցների հետ հիմնեց Դերսիմի հայերի միությունը, շատերը հիացան, խոսեցին այդ մասին, գրեցին, նկարահանումներ կազմակերպեցին… Բայց նաև ոչ այնքան բացահայտ խոսվում էր այն մասին, որ նման հանդգնությամբ նա երկու տարուց ավելի չի ապրի: Եվ սպասում էին իրադարձությունների զարգացումներին: Անցել է 10 տարի. ազգային ինքնությանն ու քրիստոնեությանը վերադառնալու ճանապարհին Դերսիմի հայերի դիմագրաված դժվարությունները չեն վերանում բոլորիս, հատկապես «քրիստոնյա» հայերիս անտարբեր հայացքի ներքո: Դիրսիմի հայերի միության բազում կոչերն ու դիմումները Կ. Պոլսի, Սփյուռքի և Հայաստանի ազգային-պետական կառույցներին կարելի է բնութագրել ավետարանական հայտնի խոսքով՝ «Ձայն բարբառո անապատի»:

Չունենալով Հայաստանի պետության (հասկանալի պատճառներով), Կ.Պոլսո հայոց պատրիարքության, սփյուռքյան կառույցների և, առհասարակ, հայության կողմից աջակցության որևէ դրսևորում, դերսիմահայերը, փաստորեն, մնացել են Աստծո հույսին:

Որոշ անհատների կամ կազմակերպությունների ցուցաբերած համեստ աջակցությունը պետք է ընդգծել ընդամենը որպես ցանկալի վարքագծի դրսևորում՝ առ ի ընդօրինակումն: ■

Սումգայիթ, Բաքու, Աղդամ (երեք հանցագործությունները՝ նույն ձեռագրով)

Ալեքսանդր Մանասյան
ՀՀ ազգային ակադեմիայի թղթակից անդամ

28 տարի առաջ՝ 1992 թ. փետրվարի 26-ի գիշերը, հայկական կողմից նախապես թողնված միջանցքով Խոջալուն[1] լքած բնակիչները ընդհուպ մոտեցել և կարող էին մտնել Ադրբեջանի ժողովրդական ճակատի վերահսկողության տակ գտնվող Աղդամ (այժմ՝ Ակնա) քաղաք, երբ հենց քաղաքի դարպասների մոտ Ադրբեջանի ժողովրդական ճակատի գրոհայիններից ռադիոկապով հրահանգ են ստանում շարժվելու դեպի աջ՝ դեպի Շելլի (այժմ՝ Ուղտասար) գյուղը: Գիշերվա քողի տակ դարձյալ Ադրբեջանի ժողճակատայինների վերահսկողության ներքո գտնվող տարածքում տեղի է ունենում Խոջալուից դուրս եկած բնակիչների սպանդ: Դեպքին անդրադարձել է Ադրբեջանի Հանրապետության այն ժամանակվա նախագահ Այազ Մութալիբովը չեխ լրագրողուհի Դանա Մազալովային տված հարցազրույցում՝ հստակ փաստարկելով, որ այդ ոճրագործությունը հայերը չէին կարող կատարել: Թողնված միջանցքով դուրս եկած և դեպի Աղդամ շարժվող Խոջալուի բնակիչների ջարդի՝ Ադրբեջանի ժողճակատայինների կողմից կատարված լինելու փաստը միայն Այազ Մութալիբովի՝ Դանա Մազալովային տված հարցազրույցով չի հաստատվում: Չպարզված հանգամանքներում լրագրողական հետաքննությամբ խնդրի պարզաբանմանը հետամուտ Չինգիզ Մուստաֆաևի սպանությունը Աղդամում[2] դրա ապացույցներից մեկն է (նույն Մազալովային նախքան իր սպանությունը տված հարցազրույցում Չինգիզ Մուստաֆաևը հայտնել էր, որ իրեն հետապնդում են, և ինքը Բաքվում զրահաբաճկոնով է շրջում): Բայց և այնպես, սա ևս այդ ոճրագործության վրա լույս սփռող փաթեթի բազմաթիվ փաստերից մեկն է: Ի դեպ, Բաքվում ամեն կերպ խուսափում են Աղդամի ողբերգության մասին խոսելիս հիմնական փաստերի դաշտ մտնելուց և որդեգրել են դրանք լռության մատնելու մարտավարություն: Այդ փաստերի թվում հատուկ կարևորություն ունի այն, որ դիմահար կրակից սպանվածները միայն ադրբեջանցիներ չեն եղել, որոնց մեծ մասին մինչ այդ ապահովաբար դուրս էին բերել Խոջալուից: Սպանդի ենթարկվածները նաև Ուզբեկստանից այդտեղ տեղափոխված մեսխեթցի թուրք փախստականներ էին, որոնց հատկապես տեղավորել էին Խոջալուում, որտեղից հրետակոծվում էր ԼՂՀ մայրաքաղաքը[3]: Բաքուն Խոջալուն դարձրել էր կրակակետ անվրեպ այն հաշվարկով, որ «այսպիսի իրադրությունների ժամանակ շատ խելացի և հստակ կողմնորոշվող հայերը»[4] իրենց թույլ չեն տա խաղաղ բնակչության

Բաքվի փախստականները 1990թ.

հետ վարվել այնպես, ինչպես Սումգայիթում ադրբեջանցիներն էին վարվել հայերի հետ[5]:

Վերջապես՝ դեպքին առնչվող մեկ այլ փաստ: Թե՛ Խոջալուի բնակիչները, թե՛ Բաքվի բարձրագույն իշխանությունները տեղյակ էին և՛ առաջիկա գրոհի, և՛ թողնված միջանցքի մասին, քանի որ հայկական կողմը գրոհից առաջ մի քանի օր բարձրախոսներով զգուշացրել էր այդ մասին: Իշխանությունները, ինչպես փաստել է Ադրբեջանի նախագահ Մութալիբովը, բնակիչներին Խոջալուից կարող էին դուրս բերել ուղղաթիռներով և դրա համար ունեցել են բավականաչափ ժամանակ: Նա համապատասխան հրահանգ է տվել այդ մասին, որը չի կատարվել: Բնակիչներին կարող էին նաև նախապես թողնված միջանցքով տարհանել ցերեկվա ժամերին: Սա կարևոր պահ է այդ պատմության մեջ, քանի որ հենց այդպիսի տարհանումը կլիներ ամենաանվտանգը: Չի արվել: Զարդարարներին պետք էր հենց գիշերվա քողը:

Մեր խնդիրն այստեղ Ադրբեջանի ժողճակատայինների գործած հանցագործության ողջ փաստական փաթեթը ներկայացնելը չէ: Յուրքանչյուր ոք կարող է xocali.net[6] կայքում գտնել այդ սպանդի փաստական մանրամասները, ինչպես և ադրբեջանական քարոզչամեքենայի կեղծիքները

բացահայտող վկայությունների, տեսանյութերի ու փաստաթղթերի հարուստ փաթեթ: Ընդ որում, այդ վկայությունների ու փաստաթղթերի աղբյուրը ադրբեջանցի ականատեսներ, գործին տեղյակ զինվորականներ, քաղաքական գործիչներ ու փորձագետներ են[7]:

Տարիներ շարունակ մեր կողմից թերագնահատվել է Աղդամի մերձակայքում տեղի ունեցածի քաղաքական նշանակությունը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության ձևավորման գործում: Բաքուն գործել է տեղեկատվական պատերազմի բոլոր տեխնոլոգիաների ու գործիքների կարևորության գիտակցումով: Մեր կրավորական պահվածքը թույլ է տվել նրան այդ վանդալիզմը վերագրել հայերին և դրանով Աղդամի մերձակայքում ադրբեջանցի բնակիչների ու մեսխեթցի թուրքերի սպանդը, որը նա ներկայացնում է որպես Խոջալուի ցեղասպանություն, հավասարեցնել Սումգայիթի ջարդերին (ադրբեջանական կայքերը հաղորդում են, որ Խոջալուի սպանդը՝ որպես ցեղասպանական ակտ, ճանաչել են արդեն 16 երկիր և ԱՄՆ-ի 24 նահանգ): Հայկական կողմին վերագրվող հանցագործության ամսաթիվը՝ փետրվարի 26-ը, Բաքվին թույլ է տալիս և՛ ուղղակի, և՛ խորհրդանշական զուգահեռներ անցկացնել Սումգայիթի և, այսպես կոչված, Խոջալուի միջև և Խոջալուն (իրականում՝ Աղդամը) ներկայացնել իբրև Սումգայիթին հայերի վրեժխնդրական պատասխան: Խիստ մեծ է հավանականությունն այն բանի, որ դեպքին նախորդած օրերին Բաքուն դիտավորյալ է անտեսել բնակիչներին Խոջալուից դուրս բերելու հայկական կողմի կոչերը և նրանց գյուղից տարհանելու ուղղությամբ որևէ քայլ չի ձեռնարկել՝ փետրվարի 26-ի գիշերը ընտրելով որպես բնակիչների ելքի ու Աղդամի մերձակայքում նրանց սպանդի նպատակահարմար պահ: Ավելին՝ ադրբեջանական կողմն այսօր դրա համար օգտագործում է հայ բարձրաստիճան որոշ գործիչների չմտածված, չկշռադատված գնահատականներն ու արտահայտությունները, որոնք տեղեկատվական պատերազմի բնույթի մասին անտեղյակության և, թող թույլ տրվի ասել, այդ հարցերում անգրագիտության արդյունք են:

Խոջալուն պետք է փոխարինվի Աղդամով, և դրա համար մենք բոլոր հիմքերն ունենք՝ հաստատված հավաստի փաստերի ու վկայությունների մեծածավալ փաթեթով: Մեր հակադարձումների մեկնակետը պիտի դառնա Բաքվի հիմնական քարոզչական բանաձևի՝ «Խոջալույում հայերը ցեղասպանել են ադրբեջանցիներին», մաս առ մաս հերքումը: Ցեղասպանական ակտը կատարվել է ոչ թե Խոջալույում, այլ Աղդամի մատույցներում՝ Ադրբեջանի ժողճակատայինների վերահսկողության տակ գտնվող տարածքում (հայերն այնտեղ չէին էլ կարող լինել): Այդ սպանդն իրագործողները հայերը չեն եղել, իսկ սպանդի զոհ դարձել են ոչ միայն ադրբեջանցիները, այլև մեսխեթցի թուրքերը (ադրբեջանցի բոլոր երեխաներին նախապես դուրս էին բերել Խոջալուից): Ինչու՞ Բաքվում հենց մեսխեթցի թուրքերին են դարձրել ոճրագործության թիրախ: Պատասխանն ակնհայտ է: Բաքվում հարազատներ ու ընտանիքներ չունեցող մեսխեթցի թուրքերին կարելի էր դնել իշխանափոխության զոհասեղանին, քանի որ անտեր-անտիրական մեսխեթցիների սպանդին հաջորդած օրերին, երբ Բաքուն ալեկոծված չէր լինի բողոքի հզոր ցույցերով, հեշտ կլիներ ամեն ինչ բարդել երկրի գործող նախագահ Մութալիբովի վրա և հասնել նրա պաշտոնանկությանը: Հաշվարկը ճիշտ էր, և այդպես էլ եղավ: Որոշ ժամանակ անց Մութալիբովին հեռացրին իշխանությունից, և նախագահի պաշտոնը զբաղեցրեց թուրքամետ Աբուլֆազ Էլչիբեյը, ինչն անուղղակիորեն հաստատում է շրջանառվող այն վարկածը, որ Աղդամի սպանդի միջոցով ռուսամետ Մութալիբովի պաշտոնանկության կազմակերպմանը մասնակցել են թուրքական հատուկ ծառայությունները:

Խոջալուի իրադարձությունների խեղաթյուրումը եզակի բան չէ Բաքվի քաղաքական պրակտիկայում: Նա ունի նման նպատակի ծառայող հնարքների մի ամբողջ փաթեթ: Այդպիսի մի հնարք նա կիրառել է 1990 թ. հունվարի 13-19-ին՝ Բաքվի հայկական կոտորածների փաստը ստվերելու համար՝ շրջանառության մեջ դնելով «Սև հունվար» արտահայտությունը: «Սև հունվարը», Բաքվի ներկայացմամբ, հունվարի 20-ն է, երբ հայկական կոտորածներից հետո խորհրդային բանակը մտել է քաղաք՝ այնտեղ հասարակական կարգուկանոն հաստատելու և պետական կարգը տապալելու փորձը կանխելու համար: Կենտրոնը, իրոք, Բաքվի ջարդերի օրերին զորքեր չի մտցրել քաղաք՝ թողնելով նրանց «Բինա» օդանավակայանում և սպասելով, որ ջարդարարները ավարտեն իրենց գործը: Ամենայն հավանականությամբ, դեպքերին չխառնվելը ԽՍՀՄ-ը կազմաքանդելու նույն նախագծի քայլերից մեկն է եղել, որով հաստատվում էր, որ գերտերության մեծագույն լիազորություններով օժտված կառավարությունը անզոր է երաշխավորելու իրավահավասարության ու եղբայրության կարգախոսներով միավորված ժողովուրդների անվտանգությունը: Բայց ջարդերի օրերին քաղաք զորքեր չմտցնելու հաշվարկն ուներ նաև երկրորդ թիրախը: Կենտրոնը ցանկանում էր, որ, ի տարբերություն սումգայիթյան սպանդի (որի համար ինքն արժանացել էր քննադատության), այս դեպքում մեղսագործության պատասխանատուն բացահայտորեն Բաքուն լինի: Այնպես որ, Բաքվի իրադարձություններին Կենտրոնի չմասնակցելն իրականում մասնակցության յուրօրինակ ձև է եղել: 1990 թ. հունվարի 13-19-ին Բաքվի հայ ազգաբնակչությունը թողնված էր վանդալների քմահաճույքին: Բաքվի «Սև հունվարը» ոչ թե հունվարի 20-ն է, այլ դրան նախորդած հայկական ջարդերի օրերը: Սակայն տեղեկատվական հոսքերում այն կապվում է միայն և միայն հայ

խաղաղ բնակչության ջարդերից հետո խորհրդային զորքեր քաղաք մտցնելու հետ՝ ստվերելով նախորդ օրերի դեպքերը: Սա իր նպատակին հասած տեղեկատվական հնարք է:

1988-1994 թթ. իրադարձությունների խեղաթյուրման՝ Բաքվի կողմից կիրառվող հնարքների քողազերծման համար պատմությունը մեզ արդեն իսկ ավելի, քան քառորդ դար է տրամադրել, սակայն մենք չենք կատարել նրա հանձնարարությունը: Մենք պարտավոր էինք Խոջալուն փոխարինել Աղդամով, այդ տեսակետից նոր լույս սփռել դեպքին առնչվող մյուս բոլոր հարցերի վրա և համարժեք գնահատական տալ կատարվածին. սա է Արցախյան հարցի տեղեկատվական ճակատում մեր անհետաձգելի խնդիրներից մեկը: Բայց, ինչպես հաճախ է պատահել մինչ այժմ, հիմնախնդրով զբաղվող «պատկան մարմինները» և պատասխանատու այրերն անընդհատ հապաղում են՝ չպատկերացնելով խնդրի կարևորությունը և համապատասխան մարտավարության գործադրման կոնկրետ ուղիները: Բանն այն է, որ Բաքվի կողմից արդեն աշխարհին հրամցված «Խոջալուի ցեղասպանություն» առասպելի քողազերծումը իր բնույթով հատուկ մասնագիտական աշխատանք է, որը ենթադրում է նուրբ, խորապես մտածված ծրագիր այն փորձագետների կողմից, որոնք տիրապետում են թե՛ կոնկրետ նյութին, թե՛ տեղեկատվական պատերազմի տեխնոլոգիաներին:

Սումգայիթում, Բաքվում և Աղդամի մատույցներում տեղի ունեցած եղեռնագործությունների համեմատությունը բացահայտում է իրադարձությունների այնպիսի կողմեր, որոնք կարող են օգնել մեզ քաղաքական ու տեղեկատվական ճակատներում որդեգրելու ավելի ճիշտ կողմնորոշումներ: Բանն այն է, որ ոճիրները կատարվել են տարբեր իրավաքաղաքական միջավայրերում: Հայ խաղաղ բնակչության սումգայիթյան սպանդը կատարվել է ԽՍՀՄ գոյության տարիներին, երբ թվում էր, թե հատուկ ծառայությունների ամենատես ու ամենակարող ցանց ունեցող միջուկային վիթխարի գերտերության համար ոչ մի դժվարություն չէր ներկայացնում այդ ողբերգության կանխումը: Նախ Ասկերանի տակ տեղի ունեցած սանդրանքը, իսկ հետո Սումգայիթում հայերի ջարդը բացահայտեցին գորբաչովյան Մոսկվայի, մեղմ ասած, տարօրինակ վարքը: Հետահայաց վերլուծությունը ցույց է տալիս, որ Կենտրոնը համարժեք քայլեր չի ձեռնարկել հակամարտության արդարացի կարգավորման համար[8]: Արդեն ԽՍՀՄ լուծարումից հետո բազմաթիվ վերլուծաբաններ շրջանառության մեջ դրեցին այն գաղափարը, որ հզոր գերտերության ինքնատրոհման ուժանակը եղել է Ղարաբաղյան շարժումը: Անուշադրության է մատնվում այն, թե ինչպիսի դերակատարություն ունեցավ ԽՍՀՄ կազմաքանդման գործընթացում սումգայիթյան եղեռնագործությունը: Հենց Սումգայիթի և այնուհետև Բաքվի ջարդերը բազմազգ պետության ժողովուրդների համար ակնհայտ դարձրին, որ գերտերությունն անզոր է կամ չի ցանկանում ապահովել նրանց ֆիզիկական անվտանգությունը: Ոչ այնքան Ղարաբաղյան շարժումը, որը չէր շոշափում ԽՍՀՄ կազմաքանդման հարց[9], որքան Սումգայիթի և Բաքվի իրադարձությունները բորբոքեցին կենտրոնախույս տրամադրությունները միութենական հանրապետություններում: Սակայն Սումգայիթի և Բաքվի դեպքերում Բաքուն խուսանավելու և նույնիսկ մեղքը մոսկովյան իշանությունների վրա բարդելու հնարավորություններ ունի, ինչը և նեղն ընկած դեպքերում անում են նրա փորձագետները: «Խոջալուի ցեղասպանություն» անվան տակ ներկայացվող Աղդամի սպանդը այլ է իր բնույթով: Մոսկովյան կենտրոնական իշխանություններ արդեն չկային, և այդ իրադարձությունների շուրջ Բաքվի կեղծարարությունների քողազերծումը նրա ցեղասպանական վարքի անբեկանելի ապացույցը կարող է դառնալ: Ցավոք, մենք այդ ուղղությամբ հարցի կարևորությանը համարժեք ձևով չենք աշխատում, երբ դրա համար անհերքելի փաստերի մեծածավալ փաթեթ ունենք:

Օգտագործված Աղբյուրներ

1- Խոջալուն (ներկայումս՝ Իվանյան) ԼՂԻՄ-ի Ասկերանի շրջանի խառը բնակչությամբ այն գյուղն է, որտեղից դեռևս 1988 թվականին ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիքներով հայերը դուրս են մղվել:

Ի դեպ, Զինգիզ Մուստաֆաևը միակը չէ այն մարդկանց շարքում, որոնք այդ նույն պատճառով սպանվել, ահաբեկվել կամ այլևայլ մեթոդներով չեզոքացվել են: Զինգիզի նյութերին ծանոթ չեխ լրագրողուհի Դանա Մազալովան հավաստում է, որ դեպքի առնչությամբ Բաքվի կողմից տարածվող լուսանկարներում Զինգիզի կատարած լուսանկարներից միայն մեկն է ինքը ճանաչել: Մյուսները բացակայում են:

2- 1988 թվականից հետո՝ 2-3 տարվա ընթացքում, մինչ այդ մոտ 2100 բնակիչ ունեցող Խոջալուն Բաքուն դարձրել էր շուրջ 6000 բնակչությամբ բնակավայր՝ նրան տալով քաղաքի կարգավիճակ:

3- Ադրբեջանի Հանրապետության այն ժամանակվա նախագահ Այազ Մութալիբովի խոսքերը:

4- Ոչ միայն Այազ Մութալիբովը, այլև բոլոր թուրքերը գիտեին (և գիտեն), որ հայ զինվորը ձեռք չի բարձրացնում թշնամու կնոջ, ծերունու ու երեխայի վրա: Հայտնի է, որ հայերի հետ զինված բախումների ժամանակ թուրք զինվորը հաճախ է կանացի զգեստ հագել և փրկել իր կյանքը: Հայկական էպոսի գլխավոր հերոսը՝ Սասունցի Դավիթը, ճակատամարտից առաջ ձայն է տալիս հակառակորդին, որ նա արթնանա, հագնվի, զենք վերցնի: Իսկ ահա Բուդապեշտում ՆԱՏՕ-ի՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրով դասընթացներին մասնակցող հայ սպա Գուրգեն Մարգարյանին քնած ժամանակ կացնահարած Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանում հռչակել են ազգային հերոս: Մենք նման դեպքի համար կամաչեինք:

5- Տես http://xocali.net/ha/interview_fataliev.html:

6- Տես նաև Մանասյան Ա., Լեռնային Ղարաբաղ: Ինչպես է դա եղել, Երևան, 2010:

7- Տես Մանասյան Ա., Ղարաբաղյան հակամարտությունը ԽՍՀՄ տրոհման համատեքստում,

8- https://cyberleninka.ru/article/n/the-karabakh-conflict-in-the-context-of-disintegration-of-the-ussr/viewer:

9- ԼՂԻՄ-ի հայությունը ոտքի էր ելել մարզի՝ այն հանրապետությանը վերամիավորման խնդրանքով, որից Արցախը բռնի անջատել էին քսանական թվականներին, և այդ շարժումը հետամուտ չէր ԽՍՀՄ-ի կազմաքանդմանը:

Հայաստանի դռանցքը և ԱՄՆ-ի ռազմավարական կարճատեսութիւնը

Սեդօ Պոյաճեան

«Դ.».- Յօդուածագիրը իրաւաբան է: 1989-92 տարիներուն վարած է Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի Ուաշինկթընի գրասենեակի տնօրէնի պաշտօնը: Այժմ կ'ապրի Լոս Անճելըս:

Մեծապետական դիտանկիւնէն ներկայ Հայաստանը իր փոքր հողատարածքով և փոքրաթիւ բնակչութեամբ քաղաքական թէ տնտեսական յատուկ շահեկանութիւն չի ներկայացներ Կովկասեան տարածաշրջանի մէջ գործելու յաւակնութիւն ցուցաբերող մեծ ուժերուն՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն (ԱՄՆ), Ռուսաստանին, Եւրոպական միութեան, Չինաստանին, Թուրքիոյ կամ Իրանին: Շահեկանութեան գծով նոյնանման վիճակ կը պարզեն նաև Հայաստանի հարևան միւս երկու երկիրները՝ Վրաստան և Ատրպէյճան, եթէ պահ մը զանց առնենք վերջինին քարիւղի պաշարները:

Հաւաքաբար՝ Հարաւային Կովկասի երեք անկախ հանրապետութիւնները, շուրջ 18 միլիոն բնակչութեամբ և 71 հազար քառակուսի մղոն տարածութեամբ, չեն կրնար կարևորութեան յաւակնութիւնը ունենալ: Սակայն անոնց աշխարհագրական դիրքը կը գերակշռէ աշխարհաքաղաքական հասկացողութեամբ: Այս շրջանը կը գտնուի միջցամաքային այն ուղիներուն վրայ, որոնք արտաքին ուժերուն համար կը հարթեն ճանապարհները՝ հիւսիսէն հարաւ, արևմուտքէն արևելք և հակադարձաբար: Այս տարածաշրջանը ռազմավարական արժէք կը ներկայացնէ բոլոր այն ուժերուն, որոնք շրջանային և միջազգային մակարդակներու վրայ կը ձգտին պահպանելու և տարածելու իրենց ապահովական շահերը:

Իր զինուորական ուժի տարողութեամբ, տնտեսական կարողութիւններով և արհեստագիտական կարողականութիւններով ԱՄՆ-ը Կովկասեան տարածաշրջանին մէջ գործող գերտէրութիւնն է: Հայաստան նոյն տարածաշրջանի մէջ միջցամաքային ուղիներու վրայ գտնուող փոքրագոյն երկիրն է: Սակայն, հակառակ ուժանիութային պաշարներու աղքատութեան և տնտեսական մեծ շուկայի մը բացակայութեան, Հայաստան ունի աշխարհաքաղաքական որոշ յաւելեալ տուեալներ, որոնք պէտք է շահագրգռութեան առանցքը դառնան ԱՄՆ-ի ռազմաքաղաքական հաշուարկներուն մէջ: Հայաստան նաև ունի իր Ամերիկեան և Արևմտեան Սփիւռքները, որոնք ունին որոշ լծակներ՝ ԱՄՆ-ի վարքագծային ուղղութիւններուն վրայ ճնշելու կարողականութեան

իմաստով:

Խորհրդային Միութեան փլուզումով աշխարհակարգի միաբևեռ դրութեան պայմանները կարելի դարձուցին կովկասեան տարածաշրջանէն ներս ամերիկեան քաղաքական, տնտեսական ու ապահովական նպատակներու զարգացումը և այդ գծով ամերիկեան ազդեցութեան տարածումը: Սակայն պէտք է նկատել, թէ նախապէս ԱՄՆ քաղաքական թէ ռազմավարական շահագրգռութիւն չէր ցուցաբերած տարածաշրջանին նկատմամբ՝ խորհրդային բռնապետութեան առկայութեան հասկնալի պատճառներով:

Հետևաբար ԱՄՆ-ի ընդհանուր ռազմավարութեան

մէջ այս տարածաշրջանի և յատկապէս Հարաւային Կովկասի երեք երկիրներու՝ Հայաստանի, Վրաստանի և Ատրպէյճանի ռազմավարական արժէքը աստիճանաբար զարգացաւ: Յաջորդող երեք տարիներուն, աշխարհաքաղաքական տուեալներու նոր անդրադարձներու լոյսին տակ, Հարաւային Կովկասը սկսաւ նկատուելու ամերիկեան արտաքին քաղաքականութեան առանցքային տարրերէն մէկը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ

Պատմականօրէն և յատկապէս խորհրդային շրջանին Հարաւային Կովկասը, ինչպէս նշուեցաւ, ամերիկեան ռազմավարական հաշուարկներուն մէջ յատկանշական տեղ չէր գրաւած: Այս անտեսումը սկսաւ փոփոխութեան ենթարկուել 1991-էն ետք, երբ Խորհրդային Միութեան փլուզումով տարածաշրջանի երկիրները հերթաբար վերածուեցան անկախ հանրապետութիւններու: Սկզբնական շրջանին ԱՄՆ-ի համար վարքագծային սկզբունք էր զօրակցիլ նորանկախ հանրապետութիւններու անկախութեան հաստատման, ժողովրդավարացման, ազատ շուկայական դրութեան ստեղծման և Եւրո-Ատլանտեան կառոյցներուն մէջ անոնց համարկման: Այլապէս, բացի նշեալ թիրախներէն, Ուաշինկթընի համար շրջանէն ներս ապահովական հիմնական այլ շահեր նկատառելի չէին: ԱՄՆ-ի այս մօտեցումը լիովին կ'ընդգրկէր նաև Հայաստանի պարագան, մէկ յաւելումով, որ, շնորհիւ ամերիկահայութեան ակնկալութիւններուն ու յատկապէս Հայ դատի յանձնախումբի ճիգերուն, ԱՄՆ-ի վարքագծին մէջ ներառնուեցան Հայաստանի համար տնտեսական և մարդասիրական օժանդակութեան նկատառումները:

Ռազմավարական հասկացողութեան ամերիկեան պաշտօնական առաջին շահագրգռութիւնը ի յայտ եկաւ 1994-ին, երբ ԱՄՆ-ի պաշտպանութեան քարտուղարութիւնը (նախարարութիւնը) առանձնացուց Հարաւային Կովկասը իբրև ռազմավարական արժէքով կարևոր շրջան, որ կարողականութիւնը ունի վերածուելու Ռուսիոյ և Միջին Արևելքի միջև հաստատուած անկախ ու արևմտամէտ պետութիւններու գօտիի: Այսուհանդերձ, Պաշտպանութեան քարտուղարութեան նշեալ անդրադարձումը այդ օրերուն վարքագծային մակարդակի չհասաւ: Պէտք էր սպասել տարի մը ևս, երբ կասպեան քարիւղի պահեստներու փաստն ու անոնց արտաբերման կարելիութիւնները ԱՄՆ-ի ուշադրութիւնը կեդրոնացուցին Հարաւային Կովկասի վրայ:

ա. Կասպեան քարիւղը և Արցախը: Ուժանիթի քաղաքականութիւնը գլխաւոր մղիչը հանդիսացաւ շրջանէն ներս ամերիկեան շահագրգռութեան: Ասով հանդերձ, շրջանին նկատմամբ ամերիկեան քաղաքականութեան մշակման մէջ ռազմավարական հարցերը տակաւին գլխաւոր նկատառումներ չէին: Ամէն պարագայի, շնորհիւ քարիւղի ընդարձակ պահեստներու փաստին և շրջանին մէջ արդէն

իսկ կայք հաստատած ամերիկեան քարիւղի ընկերութիւններու զգալի ներկայութեան, ԱՄՆ սկսաւ նշանակալից նեցուկ տրամադրել կասպեան ուժանիթի աղբիւրներու զարգացման:

Հետաքրքրական այս նոր մօտեցումը գլխաւոր երեք մղումներ ունէր: Առաջին, ուժանիթի արտադրութեան դերը շրջանի պետութիւններու գերիշխանութեան ամրապնդման մէջ: Երկրորդ, քարիւղի ամերիկեան ընկերութիւններու շահերուն ապահովումը: Եւ երրորդ, կասպեան քարիւղը իբրև արտամիջինարևելեան ուժանիթի կարևոր աղբիւր: Այս երեք տուեալներու հիմամբ, Ամերիկան մշակեց «բազմապատիկ քարիւղատարներ» կառուցելու տեսութիւնը, որուն թիրախն էր գլանալ որևէ շրջանային ուժի, յատկապէս՝ Ռուսաստանի, կասպեան քարիւղի՝ միջազգային շուկաներ փոխադրութեան մենաշնորհը: Յստակ էր, որ այս թիրախը միաժամանակ հետամուտ էր նսեմացնելու շրջանէն ներս Ռուսաստանի տարածած ազդեցութիւնը: Բազմապատիկ քարիւղատարներու քաղաքականութեան առաջին

պակումը հանդիսացաւ Պաքու-Թիֆլիս-Ճէյհան քարիւղատարի կառուցումը:

Շրջանէն ներս ամերիկեան նոր շահագրգռութիւնը հեզասահ ընթացք չունեցաւ: Առաջին, Հայաստանը ևս նպաստաւորելու նպատակադրեալ մերժումի քաղաքականութիւնը, որ փորձուեցաւ իրականացնել Հայաստանը շրջանցող ճանապարհներով, հանդիսացաւ աւելի ծախսալից և բարդ: Երկրորդ, տարածաշրջանի անհակակշռելի նկարագիրը դժուարին խնդիրներ յարուցեց ԱՄՆ-ի ռազմավարութեան համար: Երրորդ և հաւանաբար կարևորագոյնը, Լեռնային Ղարաբաղի հարցն էր, որ մէկ կողմէ պատերազմական վիճակ առաջացուցած էր Հայաստանի և Ատրպէյճանի միջև, իսկ միւս կողմէ Հայաստանը ենթարկած էր Ատրպէյճանի ու Թուրքիոյ ամբողջական շրջափակման: Այս կացութեան հետևանքով յառաջացած շրջանային անկայունութիւնը կը սպառնար կասպեան քարիւղի շահարկման ծրագիրներուն: Միաժամանակ այս կացութիւնը նաև կը խոչընդոտէր շրջանի երկիրներուն միջև տնտեսական յարաբերութիւններու բնականոն զարգացումը:

Արցախի հարցին հետևանքով ամերիկեան քաղաքականութեան դիմակալած դժուարութիւնները հաւանաբար աւելի դիւրութեամբ հարթուէին, եթէ Ատրպէյճան յաղթական կողմը հանդիսանար: Այս իմաստով, հայկական կողմի յաղթանակը կենսական երաշխիք մը էր Հայաստանի ազգային շահերու վնասազերծման տեսակէտէն: Այս երաշխիքին վրայ պէտք է աւելցնել 1992-ին ԱՄՆ Քոնկրէսի որդեգրած ազատութեան զօրակցութեան օրէնքի 907-րդ պարբերութիւնը, որ մինչև 2002 թուականը արգիլեց ԱՄՆ-ի կողմէ Ատրպէյճանին համար որևէ ձևի պաշտօնական օժանդակութիւն: Այս պարբերութեան արժէքը այն է, որ 1992-էն 2002 երկարող տագնապալի ժամանակաշրջանին ան խափանեց տարածաշրջանէն ներս ԱՄՆ-ի հաւանական ազերիանպաստ քայլերը: Այս առումով միշտ ուսանելի պէտք է ըլլայ 907-րդ պարբերութեան դասը, որ կ'ապացուցէ ԱՄՆ-ի քաղաքական վարքագծին վրայ ամերիկահայութեան ազդեցութեան կարողականութիւնը:

բ. Անվտանգութեան գերակայութիւնը՝ Կեդրոնական Ասիա, Միջին Արևելք, Չինաստան և Իրան: Ամերիկեան հողատարածքին վրայ կատարուած 2001-ի սեպտեմբեր 11-ի ահաբեկչական արարքները ռազմավարական նոր արժևորումի ենթարկեցին ԱՄՆ-ի արտաքին քաղաքական վարքագիծը՝ գերակայելով ԱՄՆ-ի անվտանգութեան ապահովումը հակականխիչ (pre-emptive) և կանխարգելիչ (preventive) ռազմական գործողութիւններով:

Միջազգային ահաբեկչութեան և յատկապէս Աֆղանիստանի դէմ շղթայազերծուելիք պատերազմի ամերիկեան ծրագրումներուն մէջ ռազմավարական հիմնական կարևորութիւն ստացան նախկին Խորհրդային Միութեան հարաւային շրջանները:

Ասիոյ սրտին մէջ կայանալիք պատերազմի յաջողութեան համար անփոխարինելի կռուաններ էին Կեդրոնական Ասիոյ հինգ երկիրները ու Հարաւային Կովկասի երեք հանրապետութիւնները:

Երկրորդ, ռազմական գործողութիւններուն զուգահեռ, Հարաւային Կովկասի ռազմավարական արժէքը նաև քարիւղի փոխադրութեան քաղաքականութիւնն էր: Կասպեան քարիւղի ու Կեդրոնական Ասիոյ բնական կազի դէպի Արևմուտք և Իրան փոխադրութեան դիտանկիւնէն ԱՄՆ-ի համար կենսական արժէք կը ներկայացնէ Հարաւային Կովկասը:

Երրորդ, Միջին Արևելքի քաղաքական հեռանկարներու որոշման բնագաւառներուն մէջ նկատառելի էր Հարաւային Կովկասի ռազմավարական կարևորութիւնը: Միջին Արևելքի մէջ իր քաղաքական հեռանկարներու իրագործման կապակցութեամբ Ամերիկան սկսաւ նկատի առնել Հարաւային Կովկասի աշխարհագրական մերձակայութեան ընձեռած կարելիութիւնները:

Չորրորդ, աստիճանաբար զարգացաւ նաև միջցամաքային ուղիներուն Չինաստանի հասանելիութեան կարելիութիւնը:

ԱՄՆ-ի համար նման կարելիութեան մը հակակշռումը սեփական անվտանգութեան խնդիր է: Այսպիսի հակակշռումի բանալին Հարաւային Կովկասի տարածքի աշխարհաքաղաքական դրուածքին մէջ է:

Հինգերորդ, Իրանը իր հազարամեայ պատմութեամբ և կառոյցներով թիրախը դառնաւ ԱՄՆ-ի նոր պահպանողականութեան գաղափարախօսական վարքագծին: Միջինարևելեան ռազմադաշտէն անդին ԱՄՆ-ի վարքագիծի հեղինակները ակնկալութիւնը ունեցան Իրանը հարուածելու անոր հազարամեայ հարևաններուն միջոցով, այս պարագային՝ Հայաստանի իշխանութիւններուն ձեռքով:

Այսուհանդերձ, հարցը այն է, թէ ԱՄՆ-ն որքանո՞վ կարողացաւ կամ կամեցաւ աշխարհաքաղաքական ռազմավարութիւն զարգացնել ու գործադրել՝ հիմնուելով տարածաշրջանի երեք երկիրներու ներկայացուցած աշխարհագրական կարևորութեան վրայ: Պատասխանը այն է, որ ԱՄՆ-ը աստիճանաբար հեռացաւ աշխարհաքաղաքական իրականութենէն: Ան անտեսեց տարածաշրջանը՝ իբրև աշխարհաքաղաքական դերակատար, և երեք հանրապետութիւնները նկատեց քաղաքականօրէն շահագործելի ժամանակաւոր իրեր, ընդդէմ իր (ԱՄՆ-ի) ճշդած թիրախներուն:

ԱՄՆ-ի նեցուկն ու աջակցութիւնը վայելող «գունաւոր յեղափոխութիւնները» լաւագոյն ապացոյցն են տարածաշրջանի նկատմամբ ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական հեռատեսութեան պակասին: Ժողովրդավարութեան և ազատութեան հաստատման ձևականութեան շղարշի ետին, այս «յեղափոխութիւնները» ամերիկեան շահերուն սպասարկելու կոչուած պետական հարուածներ էին: Շուտով փաստուեցաւ, որ իշխանութեան տիրացած «յեղափոխականները» աւելի բռնատիրական դարձան, յար և նման իրենց փոխարինած իշխանաւորներուն:

Ատրպէյճանին խնայուեցաւ «գունաւոր յեղափոխութիւն» մը, որովհետև այս երկիրը ոգի ի բռին լծուած էր ԱՄՆ-ի քաղաքական կառքին: Վրաստանի մէջ «գունաւոր յեղափոխութիւնը» իշխանութեան բերաւ իշխող դասակարգ մը, որ շուտով դրսևորեց իր մենատիրական ձգտումները, սակայն պահելով իր ամերիկեան արևելումը: Ռուսաստան չհանդուրժեց իր մերձակայութեան մէջ կատարուող ամերիկեան ոտնձգութիւնը՝ ճզմելով անոր հեղինակները: ԱՄՆ-ը նոյնիսկ իր ճկոյթ մատը չշարժեց օգնելու համար իր իսկ ջանքերով իշխանութեան հասած «յեղափոխականներուն»:

Հայաստանի պարագային առնուազն երեք անգամ փորձը կատարուեցաւ «գունաւոր յեղափոխութեան», որ յաջողութիւն գտաւ 2018-ին ծայր առած ժողովրդական շարժումով:

ԱՄՆ-ի համար տարածաշրջանի «գունաւոր յեղափոխութիւնները» աշխարհաքաղաքական ոչ մէկ նկատառում կը ներկայացնեն: Անոնք պարզապէս շահագործելի իշխանափոխութիւններ են ընդդէմ ԱՄՆ-ի ճշդած թիրախին, որ այս պարագային գլխաւորաբար Ռուսաստանն է:

Հայաստանի մէջ կատարուած իշխանափոխութիւնը ամէնէն վտանգաւորն է՝ հայութեան ազգային շահերու և ապագայի տեսանկիւնէն: Հայաստանի իշխանաւորներու ձեռամբ ԱՄՆ հետամուտ է երեք նպատակներու.

ա. Արցախեան հարցի ազերիանպաստ կարգաւորում,

բ. Հայաստանի և Թուրքիոյ միջև վերջնական հաշտեցում՝ առանց հայկական կողմի հողային պահանջներու գոհացման,

գ. Հայաստանի գործօն մասնակցութիւն՝ Իրանի դէմ ԱՄՆ-ի շղթայազերծած քաղաքական և տնտեսական պատերազմին:

Փաստօրէն, իր ռազմավարական հաշուարկներուն մէջ ԱՄՆ անտեսումի կ'ենթարկէ Հայաստանի աշխարհաքաղաքական կարևորութիւնը և կը կեդրոնանայ այս երկրի շահագործման՝ ի գին հայութեան ազգային շահերուն: Այս իմաստով, Հայաստան զոհն է Պետական քարտուղարութեան և ԱՄՆ-ի ազգային անվտանգութեան մասնագէտներուն մօտ կէս դարէ աւելի արմատացած «խմբային մտայնութեան» (group think), որուն մեջ Հայաստանը և հայութիւնը կը դիտուին Թուրքիոյ ռազմավարական ակնոցներով:

Բայց Հայաստան Հարաւային Կովկասի կարևոր դռանցքն է, որուն արժէքն ու կարևորութիւնը պէտք է ներմուծել ԱՄՆ-ի անվտանգութեան մտածողութեան մէջ:

Այս մասին յաջորդով:

Ե՞րբ է մեր ժողովուրդն ազատագրվելու արևելյան կլկլոցից

Արթուր Շահնազարյան *Կոմպոզիտոր, Կոմիտասագետ*

Կոմիտասից շատ առաջ, հատկապես՝ երաժշտական հին նշանների՝ խազերի մոռացությունից հետո, հայ երաժշտության մեջ տեղի ունեցան խեղաթյուրումներ: Դրանք աններելի էին Կոմիտասի գործունեության ժամանակ: Դեռևս 1860-ականներին ոմանք սկսել էին ծավալել մի գործունեություն, որը նպաստում էր առանց այդ էլ բանավոր պահպանված եկեղեցական երաժշտության աղավաղմանն ու մոռացության մատնվելուն: Ցավոք, դա երբեմն արվել է միտումնավոր՝ ելնելով անձնական նկրտումներից, նախանձի, տգիտության ու չարության թելադրանքով:

Կոմիտասն իր առաջին հոդվածներից մեկում հենց այս հարցն էր արծարծում իբրև հրատապ խնդիր, քանի որ աղետալի գործընթացը շարունակվում էր նույնիսկ իր օրերում: Կոմիտասը գրում է. «Տիրացու Համբարձումն ու աշակերտները ձայնագրությունն արդեն գրել-կարդալու չափ մշակել էին, երբ նրա աշակերտները զանազան ուղղությունների սկսեցին հետևել և եկեղեցական երաժշտությունը փոխանակ մշակելու և պարզելու, խառնեցին ու պղտորեցին: Տիրացու Համբարձումի անդրանիկ աշակերտներից Պետրոս Չյոմելչյանն ու սորա աշակերտները սկսեցին մեծ ջանք թափել տաճկական մեղկ եղանակները մեր եկեղեցական երաժշտության մեջ մուծելու համար: Դժբախտաբար, գրեթե բոլոր ձայնագետները նորա շեղ և խորթ ուղին էին բռնել»:

Անհավատալի է, բայց փաստ, որ հայության մեջ եղել են մարդիկ, ովքեր մեծ ջանքեր են թափել, որպեսզի հայ եկեղեցական երաժշտությունը փոխարինեն տաճկական երաժշտությամբ: Ցավոք, նման փորձեր արվում են նույնիսկ 21-րդ դարասկզբին, երբ երգիչների մի խումբ հայ մեծահարուստների և լրատվամիջոցների օգնությամբ տաճկական ու ընդհանուր արևելյան աղավաղված, անճաշակ ու գռեհիկ երգերը ներկայացնում է իբրև հայ ժողովրդական՝ օր ու գիշեր երաժշտական տեռորի մեջ պահելով մի ողջ ժողովրդի:

«Հայոց եկեղեցական երաժշտությունը մի շարք երաժիշտ իմաստակ տիրացուների ճաշակի կամ կրքի խաղալիք էր դարձել...»,- գրում է Կոմիտասը:

1864 թվականին Կոստանդնուպոլսի պատրիարքությունը որոշում է ժողով գումարել, որպեսզի որոշի, թե ինչպես դուրս գա այդ խառնաշփոթից: Ժողովի ընթացքում ընտրվում են մասնաժողովի անդամներ, բայց առաջին իսկ նիստից հետո ժողովը խափանվում է, և անդամները իսկույնևեթ ցրվում են. «Այս անհաջողությունը,- գրում է Կոմիտասը,- ավելի ևս խրախուսեց տիրացուների կամայականությունն ու երևակայությունը: Անհաջողության հետևանքը մի նոր հոսանք առաջ բերեց՝ անհատական ճաշակի երաժշտության հոսանք: Խուժդուժական բազմաթիվ մեղեդիներ,



Վ. Սարենյանց <Դուդուկահար>

տաղեր... մի խոսքով տաճկական Շարքի, Թուրքի, Մանի, Նանի եղանակներով պատարագի արարողություններ, ծաղկագիր տետրակներով, հոգածությամբ գրված, յուրաքանչյուրն ինքն իրեն երաժշտագետ համարող տիրացուի կողմից աշակերտներին և երգեցիկ մանուկներին իբր անգին գանձ, ավանդ տրվեցավ, որոնց նմուշներն այսօր էլ երգվում են Տաճկահայաստանի բոլոր վայրերում՝ մայրաքաղաքիցն սկսած մինչև վերջին գյուղական եկեղեցիները»:

Կոմիտասը նշում է, որ այս սանձարձակությանը նպաստել են հարուստներն ու պաշտոնյաները: Նա գրում է. «....խակ տիրացուներին թև ու թիկունք տվին տեղական առաջնորդներից մի քանիսը, մանավանդ Կ. Պոլսո պայծառափայլ ամիրաները, չելեպիները և առհասարակ ունևոր և կարող անհատները, որոնցից ամեն մեկը մի-մի տիրացուի հովանավորում, կերակրում էր, ուստի եկեղեցական եղանակները մեկին հազար պտուղ տվին»:

Եվ ահա այս դեպքերից հարյուր տարի

անց, երբ Կոմիտասի առաքելությունը հայտնի էր ողջ հայությանը, երբ նրա մահից հետո իր անունով կոչվեցին պետական կոնսերվատորիան և այլ մշակութային ու հասարակական հաստատություններ, երգչախմբեր, նվագախմբեր և այլն, արդեն 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին հայ հարուստները, որոնց մեծ մասը հարստացել էր Խորհրդային Միության փլուզումից հետո սեփական ժողովրդին կողոպտելու միջոցով, հովանավորում են ոչ թե հիշյալ «ապիկար տիրացուներին», այլ անկիրթ ու անճաշակ երգիչ-երգչուհիներին, որոնք հիմնականում երգում են տաճկական կամարաբական աղավաղված եղանակներ՝ հայերեն բառերով: Այդ եղանակները նույնիսկ նշված երաժշտական մշակույթների աղավաղումն ու այլասերումն են և այնքան այլանդակ, հակամշակութային ու հակամարդկային են, որ սարսափ են առաջացնում բանական մարդու մոտ: Եվ այս երևույթը միշտ ունի իր պաշտպանները նույնիսկ երաժշտագետների շրջանում, որոնք Կոմիտասի նշած ապիկար ու խակ տիրացուների նորօրյա ժառանգներն են, իսկ ոմանք էլ կեղծ ու փուչ հայրենասիրությամբ առաջարկում են չբարձրաձայնել այս խնդիրները՝ խայտառակ չլինելու համար:

Իսկ Կոմիտասի ժամանակակիցներից ոմանք, ոչնչով չնպաստելով նրա գործունեությանը, դեռ պահանջում էին, որ նա պատասխանի, թե ինչու է ֆրանսիական հանրագիտարանը անտեսել հայ երաժշտությունը: Կոմիտասը բացատրում է, որ աշխարհին հայ երաժշտությունն ու երաժշտության պատմությունը ներկայացնելու համար այնքան շատ գործ կա անելու, իսկ ինքն այդ գործում օգնող չունի, միայնակ է: Նա գրում է. «Այսպիսի աշխատանքներն անթերի և խղճմտորեն կատարելու համար մեկ մարդու կյանքը հերիք չէ: Եվրոպական որևէ ազգի երաժշտության պատմությունն ուսումնասիրելու համար հարյուրավոր մասնագետներ են աշխատել, դարերով են քննադատել, տասնյակ ընկերություններ են օժանդակել և հարյուրավոր հատորներ են հրատարակվել: Բարի-բարի ցանկություններով ազգային երաժշտության պատմություն չի գրվիր, մանավանդ՝ հայ երաժշտության»:

Կոմիտասն ափսոսում էր իր ժամանակն ու նյարդերը՝ կռիվ մղելու տգետների բանակի դեմ, պատասխանելու ապազգային գաղափարներ տարածողներին, քանզի համոզված էր, որ խոսելով հարց չի լուծվի, պետք է գործ անել: Սակայն երբեմն չէր համբերում և բողոքում էր բանավոր կամ գրավոր՝ ամեն անգամ շեշտելով, որ այլևս չի պատասխանի նման բաներին: 1913 թվականին նա գրում է. «Գալով ինձ, մասնավորապես, ոչ ոք ինձմե պահանջելու իրավունք ունի, որ ես հայ երաժշտությունն իր բոլոր ճյուղերովն իմանալ պարտավոր եմ. ես իմ մասնագիտությունն ունիմ. հազիվ կարող եմ անով միայն օգտակար լինել և ամենևին միտք չունիմ հազար բանի ծառայել. մեկ բան կարող եմ անել՝ և լավ անել՝ իմ պարտականության չափով, ուստի օրաթերթերու մեջ աննպատակ հոդվածներով զբաղելու ոչ ժամանակ և ոչ շահ ունիմ: Կուզեմ հանգիստ մնալ, որ գործել կարենամ: Այսուհետև այսպիսի հոդվածներուն պատասխան չենք գրելու»:

Իհարկե, դժվար էր համբերելը: Տգետ տիրացուները շարունակում էին իրենց տաճկական կլկլոցները, եվրոպական հանրագիտարանները գրում էին, թե հայ ժողովուրդը չունի ինքնուրույն երաժշտություն, հայ մտավորականներից ոմանք սրանց «ջրաղացին ջուր էին լցնում», հոդվածներ տպագրում՝ համաձայնելով եվրոպացիների կարծիքին, վարկաբեկելով հայ մշակույթը: Իսկ Կոմիտասն ապարդյուն շարունակում էր տգետների բանակին բացատրել ու հասկացնել խնդիրներն ու անելիքները՝ գրելով. «Երաժշտական համայնագիտարանը մի բառարան է, որ դեռ սրբագրելով կարող է նորեն տպագրվել: Եթե, այս անգամ, անոր էջերում չերևա հայ երաժշտության պատմությունը, պատրաստվինք, դպրոց հիմնելով, մասնագետներ հասցնելով, երկրորդի համար: Շատերն ըսին մեզի, թե գոնե մեկ համառոտությունը գրվի. շատ լավ. բայց չէ որ համառոտը կկազմվի ամբողջութենեն: Ուր է ամբողջությունը: Փոխանակ մուրացածո ու անհիմն կարծիքներով ու պատմություններով զբաղվելու, նախ ուսումնասիրենք ու մեր եզրակացությունները փաստենք՝ հենվելով ճշմարտություններու և երաժշտական ընդհանուր օրենքներու վրա, ապա խոսինք»:

Ամենուր և բոլոր ժամանակներում եղել է հայի մի տեսակ՝ մի անմահ միջակություն, որը միշտ ասպարեզում էր և լինելու է ասպարեզում. Նրանց նմաններին տեղ են տվել ու տեղ են տալու, նրանց պատիվների են արժանացրել ու կոչումներ շնորհել, նրանք միշտ ջրի երեսին են, նրանք միշտ պղտորել ու պղտորելու են մշակութային արժեքներն ու մեծ մարդկանց կյանքը:

Կոմիտասը հրապարակավ գրում է, որ դեռևս անցյալ դարի վերջերին հայտնի քարոզիչ, գիտնական և խմբագիր Խորեն եպիսկոպոս Ստեփանեն տգիտաբար հրապարակ նետեց այն կարծիքը, թե հայ գեղջուկը բանահյուսություն չունի, այնինչ, օրինակ, ռուս մուժիկն ունի: Իսկ Կոմիտասի ժամանակակից, բժշկապետ և բանասեր Հ. Թիրաքյան Խանը, որը հանգուցյալ Խորեն եպիսկոպոսի մտքերի ժառանգորդն էր, նույնիսկ՝ զարգացնողը, գրում է. «Ըստ իս, հայկական երաժշտություն ըսված բան մը գոյություն չունի, բառին գիտական առումով… կտեսնեմ, որ Փարիզի երաժշտագետ վարպետներն ալ կհաստատեն: … Եղածներն ալ ասորա-բյուզանդական կամ հնդկա-պարսկական ազդեցությունը կկրեն»:

Կոմիտասին, իհարկե, զայրացնում են այս հայտարարությունները, և նա պատասխանում է. «Այսպես թե կհերքե և թե կհաստատե չեղածն ու եղածը: Ինքը կսիրե կարծել և իր սիրածը հաստատված տեսնել Փարիզի երաժշտագետ վարպետներու բերանով: Ուր, երբ, որ գրվածքով, ինչ

ճշմարտություններու վրա հենվելով… այդ ոչ ինքը կարող է ցուցնել, և ոչ ես գիտեմ: Փարիզի վարպետը պարտավոր չէ անպատճառ իմանալու, թե հայը երաժշտություն ունի կամ չունի, և տեսակցության ժամանակ կարող է ասել, թե անծանոթ է, կամ՝ հայը երաժշտություն չունի, կամ՝ ունեցածը խառնուրդ է… (բայց աշխարհի վրա որ երաժշտությունն անխառն ու անապակ է, մեր գիտցածով՝ միայն անասուններունը, որոնք նույն ձայնն ու նույն ելևէջը կերգեն, զի փոխառության շնորհք չունին). բայց մենք՝ հայերս, իրավունք չունինք մեկ ու կես կարծիքով կամ պատմությունով, լսվածը ստրկաբար արձանագրել, գրիչ շարժել և դատել մի պատմական ազգ, որ դեր է կատարել անցյալում, կատարում է ներկայում և դեռ պիտի կատարի ապագայում, քանի շունչ կա բերանում:

Ըստ իս առնվազն անխղճմտություն է գիտականորեն չքննվածն ու չապացուցվածը հասարակության իբրև ճշմարտություն հրամցնելը: Բժշկապետ Թիրաքյանը գտել է, որ «եղածներն ալ (հայ եղանակներեն) ասորա-բյուզանդական կամ հնդկա-պարսկական ազդեցությունը կկրեն»: Չենք գիտեր ոչ այն աղբյուրը և ոչ ալ պատմական «ասորա- բյուզանդական և հնդկա-պարսկական» այն եղանակները, որոնցմե առաջիններեն քաղելով և երկրորդներու վերա հենվելով, հարգելի բժշկապետը իր կողմեն «բառին գիտական առումովը» այսպիսի դրական եզրակացությանց է հասել հայու չունեցած երաժշտության մասին: Իսկ եթե ինքնուրույն ուսումնասիրությանց արդյունք է այդ կարծված ճշմարտությունը, այլևս ինձ դիմելու կարիք չկա. պետք է գրել Փարիզ հրատարակվող երաժշտագիտական համայնագիտարանի խմբագիրներուն, և խնդիրն անուշիկ մը կգոցվի: Ապա թե ոչ ուռուցիկ բարդություններ, առագաստավոր ենթադրություններ, իրավամբ, մենք ևս կարող ենք շարել. այսպես՝ արաբա-տաճկական, թաթարա-չինական, մետա-քրդական, աղվանու-վրացական, լատինա-սլավական…»:

Կոմիտասը միշտ խուսափում էր մի տհաճ, ճնշող, սիրտը նեղող զգացումից, որն առաջանում էր այդ ապազգային, նախանձ, տգետ ու հարմարվող միջակությունների մասին մտածելուց: Ասես սատանան ինքն է ժպտում շեղաչք՝ նստած քո սուրբ հայրենիքի գահերին, քո նախնյաց գահերին, քո հարազատ տանը՝ քեզ ժառանգված գահին, գլխավոր սատանայապետից էլ ճղճիմ ու նողկալի մարտնչող միջակությունն է ժպտում, որ գործարքի մեջ է մտնում ցանկացած իշխանության հետ ու ամենաստոր միջոցներով առաջ է շարժվում՝ ոտնահարելով ամեն սրբություն, որ արարել է ազգը, անընդհատ դավաճանության ու ինքնակամ ստրկանալու առիթներ փնտրում: Կոմիտասը խոստովանում էր, որ դժվար է ազատագրվել չարերի նախանձի թույնից, նամակում գրում էր, որ իր ներսը վճիտ է, բայց քար են գցում ու պղտորում, իսկ պարզվելուց հետո էլ մնում է սպին:

Անմահ միջակությունները շարունակում են պղտորել այն ամենը, ինչը կոմիտասյան է: Մարտնչող միջակությունը հանդես է գալու Կոմիտասի անունից՝ իբրև ազգային երաժշտության ջահակիր՝ իրականում լուծելով միայն անձնական հարցեր, խանգարելով Կոմիտասի գործը շարունակողներին: Այս տեսակն ավելի է աշխուժանում, երբ երեսին հրապարակավ խոսք ասող չկա:

Իսկ հայ մշակույթին «ուռուցիկ» անվանումներ կպցնողներին Կոմիտասը պատասխանում է սուր և հատու. «Խեղճ հայ ժողովուրդ. ազգ ես և ինքնուրույն այնքան, որքան մյուսները. այդ ոչ ոք կարող է հերքել: Ունիս հատուկ լեզու՝ կխոսիս: Ունիս հատուկ ուղեղ՝ կդատես: Ունիս հատուկ մարդաբանական կազմ, որով կզատվիս այլ ազգերեն ու անոնց կազմեն: Սակայն սիրտդ, որ զգացմանցդ աղբյուրն է, քուկդ չէ եղել, այլ՝ ինչ-որ ասորա-բյուզանդական և հնդկա-պարսկական է եղել: Ճանապարհ կա, ճանապարհ կա: Բերնեն ականջ շատ կարճ է. բանեն փաստ՝ շատ երկար»:



Փ. Թերլեմեզյան <Երաժշտագետ Կոմիտասը>

ՀԱՅԱՍՏԱՆ – ՀՅԴ – ՍՓԻՒՌՔ (Ժամանակակից շրջան, մաս 2)

Մկրտիչ Մկրտիչեան

Ցեղասպանութեան յիսնամեակը առիթ դարձած էր հայկական ուժերու միջև աստիճանական հաշտեցման. ան դուռը բացած էր հայկական պահանջատիրութեան դրսևորման համար նպաստաւոր ներքին մթնոլորտի մը ստեղծման. այդ հաշտութեան անուղղակի արդիւնքներէն մէկը եղաւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքին հայկական միասնական քաղաքականութեան որդեգրումը: Իսկ Սպիտակի երկրաշարժը, որ տեղի ունեցաւ գորպաչևեան անցեալի համեմատ առաւել կամ նուազ չափով ազատութեան հովին մէջ, հանդիսացաւ նոր հանգրուանի մը սկիզբը. ան վիրաւոր հայրենիքի օժանդակութեան հասնելու դրական աննախընթաց մթնոլորտի մը մէջ հայկական՝ հայաստանեան թէ սփիւռքեան հոսանքներուն համար ստեղծեց հայրենական հողի վրայ հանդիպելու, իրարու ծանօթանալու, զիրար ճանչնալու առիթը. աւելի յստակացաւ անոնց միջև գաղափարական, նկարագրային, կենցաղային ու այլազան տեսակի առնչութիւններու և խորունկ տարբերութիւններու գիտակցութիւնը: Երևանը շուտով դարձաւ համահայկական ժամադրավայր՝ ի հեռուկս խորհրդային դասական մտածողութեան, որ համեմատաբար ազատ պայմաններու մէջ պարտադրաբար կ'այլափոխուէր: Ջարթօնքի շրջանի «Եղբայր եմք մեք, որ մրրկաւ էինք զատուած»-ը կրկին հնչեց հայկական իրականութեան մէջ՝ Սպիտակի և Լենինականի աւերակներու վրայով ամրապնդելով Ցեղասպանութեան յիսնամեակով կնքուած ներհայկական հաշտութիւնը:

Նախախնամական զուգադիպութեամբ հայկական աշխարհացրիւ մասնիկներու զանգուածային այս հանդիպումը տեղի ունեցաւ արցախեան ազատագրական դեռ միայն ցուցական պայքարի արտայայտութեան յետնաբեմին վրայ: Հայութիւնը զարմանալիօրէն կրկին ողբերգական դէպքի մը կողմնակի հետևանքով հաւաքական ցնծութեան և երանութեան (էյֆորիա) արտաքնապէս դիւթական, բայց խորքին մէջ պատիր վիճակի մը մէջ էր, որուն արդիւնքը եղաւ նախ արցախեան մեծ յաղթանակը և ապա՝ անոր անմիջապէս յաջորդող մեծ յուսախաբութիւնը:

Հարցականները սկսան դեռ խորհրդային հոգեվարքի ժամանակ. ՀՀ ապագայ նախագահ Լևոն Տէր-Պետրոսեան, այդ պահուն դեռ Գերագոյն խորհուրդի նախագահութեան անդամ, Միացեալ Նահանգներ ճամբորդութենէ մը վերադարձին դրուատեց դրացի Թուրքիոյ հետ յարաբերութիւնները բարելաւելու անհրաժեշտութիւնը: 23 օգոստոս 1990-ին, արդէն Գերագոյն խորհուրդի նախագահ ընտրուած Լևոն Տէր-Պետրոսեան բուռն ընդդիմացաւ Հայաստանի անկախութեան հռչակագրի բանաձևումին մէջ Ցեղասպանութեան

Փլուզված Լենինականը

վերաբերող յօդուածի մը ներառման, որ կը նշէր պարզապէս Հայաստանի Հանրապետութեան՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործին սատար կանգնելու պատրաստակամութիւնը. արդիւնք՝ յօդուածը տեղ գտաւ հռչակագրին մէջ:

Այս նախադրեալները, ինչպէս ՀՀ իշխանութիւններու հետագայ ներհայկական քաղաքական վարքագիծը, որոշիչ դեր խաղացին Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններու սկզբնական մեղրալուսնային նկարագրի խաթարման մէջ:

Արդարև, անկախութեան հռչակագրի հաստատումէն շուրջ տարի մը ետք Խորհրդային միութեան փլուզումով Հայաստան վերագտաւ իր անկախութիւնը, որ նուիրագործուեցաւ արցախեան ազատամարտի յաղթանակով: Ազատագրական պայքարի ընթացքին այդ պայքարի նժարին մէջ իր ողջ կարողականութիւնը ներդրած ՀՅԴ-ն դարձած էր ՀՀ իշխանութիւններու աչքին փուշը: Իշխանութիւնները որդեգրեցին ինքզինք դեռ նոր սպառած խորհրդային վարչակարգի գործելակերպը. անոնք խափանեցին ՀՅԴ Ընդհանուր ժողովի գումարումը Հայաստանի մէջ, արտաքսեցին կուսակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխեանը, վերջապէս արգիլեցին կուսակցութեան գործունէութիւնը Հայաստանէն ներս և բռնագրաւեցին անոր շարժուն ու անշարժ գոյքերը. դաշնակցական ղեկավարներ նետուեցան բանտ:

Կազմուեցաւ դաշնակցականներու սև ցանկ. անոնց՝ հայրենիք մուտքը արգիլուեցաւ: Գործածուեցաւ դիմացինը բաժնելու դասական ու անհեռանկար ոճը՝ դուրսինները լաւ են, ներսինները՝ վատագոյն:

Սփիւռքահայը ընդհանրապէս դարձաւ արհամարհական արտայայտութիւններու առարկայ. «օտարերկրացի» կամ աւելի պատկերաւոր՝ «նարինջ ուտող» սփիւռքահայ կուսակցութիւնները այլևս ժամանակավրէպ են, «ազգը կեղծ կատեգորիա է», այսինքն՝ համահայկական հասարակութիւն գոյութիւն չունի, այսինքն՝ խորհրդահայ սկզբնական

քաղաքականութիւնը մոխիրներէն յարութիւն առած է: Սփիւռքը հակադարձեց նոյն ոճով. պատրուակելով հայրենիքէն արտագաղթած կարգ մը քրէածին տարրերու գործունէութիւնը՝ ժխտական կարծիքը տարածուեցաւ ՀՀ-էն արտագաղթած ողջ զանգուածի իւրաքանչիւր անդամի վրայ. «Ինչ պիտի ըլլայ. հայաստանցի՛ է»: Սփիւռքահայ միտքերուն մէջ արմատաւորուեցաւ այն վարկածը, թէ Հայաստան կը ցանկայ Սփիւռքը տեսնել միայն կթան կովի դերին մէջ: Յարաբերութիւններու սրման մէջ դեր ունեցաւ նաև ՀՀ իշխանութիւններու քաղաքական գրգռիչ վարքագիծը. 1994-ին, օրուան ՀՀ արտաքին գործոց նախարար Վահան Փափազեան Լիբանան այցելութեան համար, հակառակ բոլոր զգուշացումներուն, պնդեց ցուցական կերպով ճամբորդել թրքական օդանաւային ընկերութեան օդանաւով. ան չուզեց լուրջի առնել լիբանանահայութեան հոգեվիճակը, որ, Ցեղասպանութեան միջազգային ճանաչման պայքարին առաջատարներէն ըլլալով, տասնամեակներ շարունակ տքնած էր այդ նպատակին ծառայելով: Լիբանանահայութիւնը խորապէս վիրաւորուեցաւ այս վերաբերումէն:

Մէկ խօսքով, սկզբնական հոյակապ ու հրաշակերտ խանդավառութենէն ետք անհասկնալի ոստիւն մը կը կատարուէր դէպի փոխադարձ կասկածամտութիւն և պաղ պատերազմ: Փոխադարձ վստահութեան պակասի մթնոլորտը տիրապետեց Լևոն Տէր-Պետրոսեանի պաշտօնավարութեան գրեթէ ամբողջ տևողութեան: Այս վիճակը վերջ գտաւ ՀՀ նախագահի հրաժարականով, որ արդիւնք էր Արցախի հարցի կարգաւորման մէջ իր ցուցաբերած թոյլ դիրքորոշումներուն: Անոնց տեսակը, որ արդէն յայտնի էր դարձած անկախութեան առաջին օրերուն (Ժելեզնովոտսք), աւելի երևան եկաւ Շուշիի ազատագրման օրերուն, իսկ նախագահի՝ «Պատերազմ, թէ՞ խաղաղութիւն. լրջանալու պահը» խորագրով յօդուածը և աւելի քան ամիս մը առաջ իր կողմէ տրուած մամլոյ ասուլիսը, ի շարս այլ շրջանակներու, նաև Լևոն Տէր-Պետրոսեանի անմիջական շրջանակի զայրոյթին պատճառ դարձան. նախագահը փաստօրէն կայացուցած էր Արցախի յաղթանակը միակողմանի չեղեալ նկատելու որոշումը: «Ապահարզանը» այլևս անխուսափելի էր. անոնք, որոնք ամբարտաւան ու բացայայտ օժանդակած էին նախագահական երկրորդ ընտրութիւնները բացայայտորէն կեղծելու, ատեն մը ետք պարտադրեցին իրենց կուռքին հրաժարականը:

Այս յօդուածը ՀՀ առաջին նախագահի աշխատանքի նոյնիսկ ամփոփ հաշուեկշիռը ներկայացնելու վայրը չէ: Խորհրդային շրջանէն մնացորդներու անհերևակայելի կողոպուտ, զանգուածային արտագաղթ, տնտեսական գահավէժ անկում, բառին բուն իմաստով խաւար ու սառնամանիք, բայց նաև հայկական բանակի արագ կազմակերպում՝ ի հեճուկս նախագահին, դարաբաղեան ազատագրական պայքարի հետևողական հետապնդում և յաջող աւարտ՝ յաճախ անտեսելով երկրի նախագահի

Երթ Լիբանանում

վերապահութիւններն ու արգելքները:

Հակասական երևոյթները կը յատկանշեն այդ ժամանակաշրջանի Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները: Արդէն, նշուածներէն զատ, յիշատակութեան արժանի են «Հայաստան» հիմնադրամի կազմակերպումը, սփիւռքեան համայնքներու գործօն օժանդակութեամբ ՀՀ դեսպանատուներու աստիճանական բացումը, փոխադարձ այցելութիւններու բազմացումը: Այս յարաբերութիւնները, սակայն, տեղի կ'ունենային տարերային ձևով՝ անկազմակերպ և առանց նախապէս մտածուած հայեցակարգի:

Հրաժարելէն շուրջ տասը ամիսներ առաջ նախագահը վարչապետ նշանակած էր արցախեան ազատամարտի նշելի դէմքերէն Ռոպերթ Քոչարեանը, որ կը փոխարինէր առողջական լուրջ հարցեր ունեցող ատենին վարչապետ, ներկայիս ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանը: ■

Ինչո՞ւ են հաջողում պետությունները

Քրիստինե Վարդանյան
ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միության անդամ

Ժամանակակից աշխարհում, երբ ամենուր քարոզվում են համամարդկային հռչակված գաղափարները, ազգային պետությունների գոյությունը դրվում է սպառնալիքի տակ:

Եթե աշխարհը ապահով վայր է բոլոր երկրների քաղաքացիների համար, եթե մարդիկ հավասար են՝ անկախ ազգային պատկանելությունից, ուրեմն ո՞րն է ազգային պետությունների իմաստը, ինչո՞ւ պետք է շարունակել ապրել, օրինակ, Հայաստանում, ջանքեր գործադրել պետության կայացման համար (հաճախ՝ տարատեսակ զոհողությունների գնով), եթե աշխարհում արդեն կան կայացած պետականություններ, երկրային դրախտավայրեր, և անհատը առանց որևէ խոչընդոտի կարող է ապրել այդ վայրերից ցանկացածում:

Իրականում, սակայն, յուրաքանչյուր կայացած պետության գերխնդիրն է մարդկանց որոշակի խմբի (կոնկրետ ազգի կամ այդ երկրի քաղաքացիների) շահերի պաշտպանությունը: Ազգային պետության թիվ 1 գործառույթը կարող ենք համարել համապատասխան ազգի կամ ժողովրդի հարատևման, անվտանգ կեցության և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Բայց ինչպե՞ս պետք է այս նպատակները կյանքի կոչվեն, կամ ինչպե՞ս է լինում, որ պետությունների մի մասին հաջողվում է իրագործել այս նպատակները, իսկ մի մասն էլ ճակատագրորեն ձախողվում է այս ճանապարհին՝ ոչ միայն չկայանալով որպես պետություն, այլ նաև վերանալով որպես առանձին ազգ/ցեղ/տեսակ:

Ի վերջո, եթե արդեն կան կայացած և հաջողած պետություններ, ինչո՞ւ հնարավոր չէ պարզապես վերցնել հաջողված օրինակը և կրկնօրինակելով նույնպես հասնել հաջողության: Պատճառն ակնհայտ է: Որքան էլ 21-րդ դարում ապրող ՀՀ շարքային քաղաքացին իր ցանկություններով, երջանկության իր ձգտումով նման է, պայմանականորեն վերցրած, 21-րդ դարում ապրող Շվեյցարիայի քաղաքացուն, նույնքան էլ տարբեր է: Երկու պայմանականորեն ընտրված անհատները, որոնք երկու հասարակությունների, ազգերի և պետությունների ներկայացուցիչներն են, տարբեր են առաջին հերթին իրենց լեզվամտածողությամբ, ժամանակի ընթացքում ձևավորված իրենց կենցաղով և ավանդույթներով: Տարբեր է այս մարդկանց՝ աշխարհին նայելու պրիզման, տարբեր են նաև առաջնահերթություններն ու խնդիրները:

Հայաստանի պարագայում առաջնահերթությունը 21-րդ դարի առավել քան անհանգիստ, իսլամական տարրի գերակշռությամբ Մերձավոր Արևելքում ֆիզիկական գոյության պահպանումն է, հայ ազգի

համար զարգացման և շարունակական գոյության համար կենսապայմանների ապահովումը: Այս ամենն առաջնահերթությու՞ն է արդյոք Շվեյցարիայի համար: Եթե ոչ, այս խնդիրներն ինչպե՞ս պետք է լուծվեն Շվեյցարիայում ստեղծված և պետության առաջնահերթություններին ծառայող համակարգերը կրկնօրինակելով:

Եթե պարզապես կրկնօրինակելը ելք չէ, ուրեմն ո՞րն է ելքը:

Ելքը սեփական համակարգեր ստեղծելն է, համակարգեր, որոնք կդառնան ազգային պետության հիմնասյուները:

Հայաստանի Հանրապետության գոյությունը իմաստ ունի, քանի որ որևէ այլ պետության կամ կազմավորման առաջնահերթություն չեն և չեն կարող լինել հայ ազգի՝ որպես հավաքականության անվտանգության երաշխավորումն ու զարգացման համար բարեկեցիկ պայմանների ապահովումը:

Հայկական ազգային պետության գոյությունը չի ենթադրում, որ այդ պետության տարածքում չեն կարող ապրել այլ ազգի ներկայացուցիչներ, սակայն ենթադրում է, որ ՀՀ տարածքում օրենքները, համակարգերը, ինստիտուտները, կառույցներն ու ենթակառուցվածքները ավելի, քան ցանկացած այլ պետության տարածքում, հարմարեցված են հայկական լեզվամտածողությանը, կենցաղին, սովորույթներին, հոգեկերտվածքին: Միայն այս պատճառով է, որ Շվեյցարիայում կատարյալ գործող համակարգն ու օրենքը կարող են միանգամայն անպետք դառնալ Հայաստանում: Պարզապես

աշխարհի մեկ այլ վայրում չի կարող ստեղծվել համակարգ կամ մեխանիզմ, որի հիմնական նպատակը, օրինակ, հայ ազգի անվտանգության ապահովումն է: Սա միայն և բացառապես հայկական պետության առաջնահերթությունը կարող է լինել, ինչպես, օրինակ, ԱՄՆ քաղաքացու իրավունքների կամ ֆիզիկական գոյության երաշխավորումը չի կարող լինել ՀՀ առաջնային նպատակ:

Ինչի՞ց պետք է սկսել:

Սկսել պետք է ամենասկզբից: Որո՞նք են 21-րդ դարում հայ ազգի առաջնահերթությունները: Եթե 20-րդ դարի առաջին քառորդում հասունացավ, ձևակերպվեց և ի վերջո կյանքի կոչվեց հայ ազգի գլխավոր նպատակը՝ անկախ պետության կերտումը, ապա ի՞նչ է փոխվել 100 տարի անց: Բարեբախտաբար, անկախ պետություն մենք ունենք, բայց վերացել է արդյոք ֆիզիկական ոչնչացման վտանգը, սա մեր ցանկացած վերջնական սահմաններով պետությու՞նն է, բնակչության քանակը բավարա՞ր է արդյոք այս տարածաշրջանում մեր ազգի գոյատևման և զարգացման համար:

Այս և նմանատիպ բոլոր հարցերին պետք է պատասխանի մեզանից յուրաքանչյուրը, և մենք բոլորս միասին՝ որպես ազգ: Միայն դրանից հետո կարող ենք սահմանվել հայկական պետության առաջնահերթությունները: Եթե այդ առաջնահերթությունների մեջ ներառվի էլ հայ ազգի՝ որպես առանձին տեսակի զարգացման խթանումը, ապա միանշանակ է, որ դրանից կբխի սեփական՝ հայկական կրթական համակարգի ստեղծման հրամայականը: Ի վերջո, ինչո՞վ է մեզանից յուրաքանչյուրը տարբերվում պայմանականորեն ընտրված Շվեյցարիայի բնակչից: Տարբերվում ենք առաջին հերթին մեր լեզվով, մշակութային ժառանգությամբ, պատմությամբ, ժամանակի ընթացքում ձևավորված մեր կենցաղով: Ուրեմն պե՞տք է արդյոք շարունակել զարգացնել հայերենը, տեր կանգնել, քարոզել հայկական ժառանգությունը, շարունակելով կատարելագործել և արդիականացնել մեր կենցաղն ու մշակույթը՝ պահպանել մեր դեմքը: Եթե այո, ապա ո՞ր համակարգը կամ պետության ո՞ր ճյուղը պետք է լինի այս ամենի պատասխանատուն և հասցեատերը, եթե ոչ կրթությունը և մշակույթը:

Նոյեմբերի 4-ից Հայաստանում ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միությունը սկսեց բողոքի ակցիաներ՝ պահանջելով ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարար Արայիկ Հարությունյանի հրաժարականը: Հիմնական խնդիրը նախարարության կողմից վարվող քաղաքականության և հայկական առաջնահերթությունների անհամապատասխանությունն էր:

Այս շարժումը, որը դեռ ընթացքի մեջ է, խորքում նպատակ ունի ստեղծելու հայկական կրթական համակարգ: Կհաջողվի՞ արդյոք դա, թե՞ ոչ, ցույց կտա միայն ժամանակը: Սակայն ակնհայտ է՝ առանց սեփական համակարգերի գոյության՝ հայկական պետությունը դատապարտված է:

Որպես հետգրություն

Ջուտ հայկական համակարգի օրինակ է Հայ առաքելական սուրբ եկեղեցին: Բարեբախտաբար, Հայ առաքելական եկեղեցին՝ որպես կառույց, կայացել է դեռևս հարյուրավոր տարիներ առաջ և ծառայել է որպես ազգային ու պետականապահպան յուրահատուկ պահոց (սերվեր), որտեղ ապահով պահվել են մեր ազգային ու պետական ավանդույթները, երբ պետությունը դադարել է գոյություն ունենալուց, և որտեղից այդ ավանդույթները վերականգնվել են:

Քրիստոնեության ընդունման ժամանակ, ելնելով ժամանակի թելադրանքից (տվյալ պահին՝ ամենաարդիականն ու առաջադեմը), մենք պարզապես չկրկնօրինակեցինք միտումը: Մենք այն համապատասխանեցրինք մեր մշակույթին և սովորույթներին՝ ստեղծելով և հաստատելով մեր ուղղությունը քրիստոնեության մեջ: Անհայտ է՝ ինչ կլիներ, եթե որոշում կայացնողները, ինչպես այսօր, զուրկ լինեին ազգային մտածելակերպից և, ձգտելով միայն առաջադեմին, մոռանային, թե ո՞ր տարածաշրջանում են իրենք ապրում և ի՞նչ ազգ են: ■

Փետրվարյան ապստամբության դասերը

Խաչատուր Ստեփանյան

Հայոց հազարամյակների պատմության ընթացքում եղել են բազմաթիվ շրջադարձային իրադարձություններ, որոնց դասերն անժամանցելի են սերունդների համար: Մեր պատմությունը, որը յուրատեսակ պայքար է հանուն անկախության նվաճման, պահպանման կամ վերականգնման, ուսուցանող է նաև 1921 թ. Փետրվարյան ապստամբության դասերով:

1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով, Հայաստանում իշխանությունը վերցնելուց անմիջապես հետո, բոլշևիկները խախտեցին իրենց տված խոստումները: Բոլշևիկների մուտքը Հայաստան իրենց գործադրած քայլերի պատճառով խոր հիասթափություն առաջ բերեց: Տպավորություն էր ստեղծվել, որ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը նշանակութիւն չուներ նրանց համար: Հայաստանում բոլոր նրանք, ովքեր բոլշևիկ չէին, մահվան, աքսորի, հալածանքի սպառնալիքի տակ էին: Բոլշևիկյան հեղափոխության էությունը ավելի շոնդալից ներկայացնելու «մտադրությամբ» Հայաստանում իրականացվեց մտավորականության զանգվածային ահաբեկում: Իհարկե առաջին մեծ «հերոսությունը» նախկին կառավարության անդամներին ձերբակալելն էր: Նախկին ղեկավարների և մտավորականության հանդեպ կիրառված քաղաքական տեռորն ամենաշատը հուզեց ժողովրդին և մեծապես ազդեց Փետրվարյան ապստամբության հասունացման վրա: Բանտում գտնվող մտավորականության ինչպես և ազգային-քաղաքական գործիչների կորստի վախը կարևոր պատճառ էր ապստամբություն բարձրացնելու համար:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ պետք է առանձնացնել բոլշևիկների կիրառած բռնագրավումների կամ այսպես կոչված «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը: Բոլորովին անիմաստ էր Ռուսաստանում քննություն չանցած բռնագրավումների դաժան փորձի կիրառումը պատերազմներից տնտեսապես քայքայված Հայաստանում: Բոլորովին անմտություն էր բռնագրավված գույքի ու մթերքի մեծ մասի դուրսբերումը Հայաստանից, երբ տեղում դրանց կարիքն ավելի էր զգացվում:

Փետրվարյան ապստամբության հասունացմանը նպաստեցին նաև հայ սպաների ձերբակալությունն ու աքսորը, նրանց ընտանիքների հանդեպ կիրառված բռնությունները: Պակաս կարևոր չէին նաև բոլշևիկների կողմից խոսքի և մամուլի ազատությունների կտրուկ սահմանափակումները, արևմտահայության հանդեպ նոր իշխանությունների ունեցած ակնհայտ թշնամական վերաբերմունքը: Փետրվարյան ապստամբության համար պարարտ հող ստեղծեց նաև հայ բոլշևիկների ծաղրական

Փետրվարյան ապստամբության հրամանատարական կազմը

և նսեմացուցիչ վերաբերմունքը Հայաստանի անկախության գաղափարի հանդեպ:

Հայաստանում բոլշևիկները իշխանության էին եկել նաև հարևանների հետ տարածքային հարցերը ի նպաստ հայ ժողովրդի կարգավորելու խոստումով: Հայ բոլշևիկները, սակայն անկարող եղան կամ չցանկացան որևէ դրական քայլ կատարել այդ ուղղությամբ:

Օտար հեղափոխությունների տենդով վարակված բոլշևիկյան իշխանությունը կարծես չէր հաշտվում խաղաղ ճանապարհով, առանց դասակարգային առճակատման, իշխանությունը ստանձնելու իրողության հետ՝ բանվորագյուղացիական հեղափոխության խորացման տեսակետից աչքի առաջ ունենալով ռուսական կայսրության նախկին տարածքներում ծավալված քաղաքացիական կռիվները: Բոլշևիկյան իշխանությունը փորձեց արհեստականորեն «հեղափոխական իրավիճակ» ստեղծել, ինչի անհրաժեշտությունը բնավ չկար: Հանուն «հեղափոխական» հիվանդագին հավակնությունների նրանք ձգտում էին հեղելու իրենց «հակառակորդների» արյունը: Չնայած հակառակ կողմից հնչող կոչերին՝ բոլշևիկները ոչ միայն քայլեր չձեռնարկեցին՝ խուսափելու քաղաքացիական կռիվներից, այլև նման սադրանքների հրահրումը դարձրին իրենց քարոզչության հիմնական առանցքներից մեկը:

Բոլշևիկյան հետագա այն հռետորաբանությունը, թե իբր քաղաքացիական կռիվները հրահրել են դաշնակցականները, չի դիմանում որևէ տրամաբանական քննադատության: Քեմալաբոլշևիկյան բարեկամությունը, Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական կռիվների ժամանակաշրջանը հաղթահարելու իրողությունը, Ադրբեջանի խորհրդայնացված լինելու փաստը, Վրաստանում անկախության անկման

№ 1. ՇԱԲԱԹ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ 1921 թ.

ԱԶԱՏ ՀԱՅԱՍՏԱՆ

Օրգան Հայաստանի Հանրապետական Կառավարության

ԲՈԼՇԵՎԻԿԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹ. ՏԵՂԱԼԻՑԱ

ՍՏԵՂԾՈՒՄԸ Լ ՀԵՑՐԵՆԻՔԻ ՓԼԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԷ

ԲԱՆՏԱՐԿԵԼ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԱՋՈՏՈՒՄ

ԿԵՑՑԷ, ԱՋԱՏ ՄՆԿԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ա Զ Դ

1921թ. փետրվարի 19-ին Երևանում տպագրված <Ազատ Հայաստան> թերթը

անխուսափելիությունը և այլ հանգամանքներ իշխանությունը կամավոր բոլշևիկներին հանձնած դաշնակցականներին ապստամբելու որևէ հուսալի հեռանկար չէին խոստանում: Դաշնակցականները իշխանությունը կամավոր հանձնել էին բոլշևիկներին՝ հենց ներազգային առճակատումներից խուսափելու համար՝ հանձնառու մնալով պետականաշինության գործում աջակցելու վերջիններիս:

1921 թ. փետրվարին, հայ ժողովուրդը, այլևս չհանդուրժելով օտարների ձեռքով իշխանության եկած հայ բոլշևիկների ապազգային ու հակապետական սանձարձակ քաղաքականությունը, ապստամբության դրոշ բարձրացրեց: Բանտարկված գործիչներին, մտավորականությանն ու սպայությանը փրկելու, բոլշևիկյան թալանն ու բռնությունը կասեցնելու, կորսված անկախությունը վերականգնելու անհագ ձգտումը ստիպեց հայությանը նորից զենք վերցնել:

Անհերքելի է՝ Փետրվարյան ապստամբության շնորհիվ հայ մտավորականության և զինվորականության մեկ մասի փրկության փաստը: Ցավոք, բոլշևիկյան բանտերում եղան գնդակահարության և կացնահարության բազմաթիվ դեպքեր: Միայն համաժողովրդական ապստամբությունը կանխեց համազգային այդ արհավիրքի հետագա ծավալումը:

1921 թ. ապստամբությունը դրական ազդեցություն ունեցավ բոլշևիկյան բռնաճնշումները մեղմելու առումով: Ապստամբությունը պատճառ դարձավ նաև որպեսզի ժողովրդի գիտակցության մեջ փոխվի օտար ուժի հետ փրկության ակնկալիքներ կապելու տարածված մտայնությունը:

Փետրվարյան ապստամբությունը յուրահատուկ փորձաքար հանդիսացավ Հայաստանի անկախության գաղափարի համար: Հայ բոլշևիկները, որ Հայաստանում իշխանության էին եկել ընդամենը երկուսուկես ամիս առաջ (Քեմալական Թուրքիա-Խորհրդային Ռուսաստան գործակցության հետևանքով), համաշխարհային հեղափոխության ցնորքով տարված, ոտնատակ էին տալիս Հայաստանի անկախությունը: Հայ բոլշևիկների նույնիսկ չէին խորշում, այն իրողությունից, որ իշխանության էին եկել Հայաստանի անկախությանը թշնամի դրսի ուժերի աջակցությամբ:

Փետրվարյան ապստամբությունը, թեկուզ ժամանակավորապես, Հայաստանում տապալեց խորհրդային իշխանությունը՝ սերունդներին պատգամելով այդ հերոսական իրադարձության հպարտալի խորհուրդը:

Անհերքելի է Փետրվարյան ապստամբության շնորհիվ հայ մտավորականության և զինվորականության փրկության փաստը: Դադարեցին Երկրով մեկ ծայր առած բռնությունները, ժողովրդի ունեցվածքի թալանը:

Եթե խորհրդայնացման նախօրեին Հայաստանում խորհրդային ռուսաստանին ապավինելու դիրքորոշումը ընդհանուր առմամբ տիրապետող էր դարձել, ապա գործադրված բռնությունների պատճառով սկիզբ առած համաժողովրդական ապստամբությունը կոտրեց այդ կարծրատիպը: Ապաստամբությամբ փաստվեց, որ հայ ժողովուրդը պատրաստ է զենք վերցնել իր իրավունքները ոտնահարող ցանկացած ուժի դեմ, նա ժամանակավորապես կարող է համակերպվել, բայց չի հանդուրժի օտարի մշտական միջամտությանը իր ներքին գործերին, որ ազատությունը հայ ժողովրդի համար բացարձակ արժեք է:

Ապստամբության դասերից մեկն էլ այն է, որ անթույլատրելի է ներքաղաքական ատելության սերմանումը առավել ևս ներազգային պառակտումն ու անհանդուրժողությունը:

Ամեն մի հեղափոխություն արդարացված է, եթե ունի ազգային բնույթ, չունենալով ազգային-հեղափոխական նպատակներ ու արժեքներ չի կարելի խմբային շահերով պայմանավորված արկածախնդրությունները ներկայացնել որպես հեղափոխական անհրաժեշտություն:

Մեր օրերում առավել վտանգավոր է համաշխարհային սին գաղափարները Հայաստանում տարածելու մոլուցքը, հատկապես, որ դրանք այլ վայրերում վարկաբեկել են իրենց և սպառնալիք են մեր ազգային ինքնության համար:

Եվ վերջապես պարտադիր չէ, որ համաժողովրդական ընդվզման ու արյունահեղությունների գնով գիտակցենք արտաքին ազդեցության կնիքը կրող ներքաղաքական փոթորիկների կործանարար բնույթը՝ թե ժողովրդի և թե պետության համար:

Մարտիրոս Չարուխչյանը Դրոյի հետ

Մարտիրոս Չարուխչյան: Դաշնակցության հանդուգն մարտիկներից մեկը: Մասնակցել է բազմաթիվ կռիվների: Մտերիմ ընկերոջ՝ Դրոյի հետ 1905-թվականին Բաքվում իրականացրել է նահանգապետ Նակաշիձեի, 1907թ. Ալեքսանդրապոլում՝ նախիջևանահայության դահիճ Ալիխանով Ավարսկու ահաբեկումները: Նահատակվել է պարսկական հեղափոխության փոթորիկներում՝ 1909թ. փետրվարին:

ՍՈՍԵ ՄԱՅՐԻԿԸ

Աղբյուր Սերոբի կյանքի ընկերն ու զինակիցը.
Մահացել է Ալեքսանդրիայում, 1953թ. փետրվարի 9-ին:

ԴՐՕՇԱԿ